# ԿՓԿՀ ՈՒՂԵՑՈՒՅՑ 2015

## Նախագծային տարբերակ

Երաշխավորված է Բոլոնիայի գործադիր խմբի կողմից 2014 թ. նոյեմբերին
Ենթակա է հաստատման 2015թ. մայիսին նախարարական համաժողովի կողմից







# ԿՓԿՀ ՈՒՂԵՑՈՒՅՑ
# 2015

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**Ներածություն** . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 6

Մաս 1. ԿՓԿՀ-ի հիմնական հատկանիշներ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 9

Մաս 2. ԿՓԿՀ-ն և եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ) . . . . . . . . 13

Մաս 3. ԿՓԿՀ-ն ծրագրերի մշակման, դասավանդման և մոնիթորինգի համար . . . . . . 17
3.1 Ծրագրի համատեքստ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 19
3.2 Ծրագրի ուղղվածություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 22
3.3 Ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներ . . . . . . . . . . . . . . . . . . 24
3.4 Ծրագրի կառուցվածքը և կրեդիտների բաշխում . . . . . . . . . . . . . . . . . 25
3.5 Ուսումնառություն, դասավանդում և գնահատում . . . . . . . . . . . . . . . . . 28
3.6 Կրեդիտների շնորհման մոնիթորինգ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 31

Մաս 4. ԿՓԿՀ-ն շարժունության և կրեդիտների ճանաչման համար . . . . . . . . . . . 33
4.1 Աստիճանային շարժունություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 34
4.2 Կրեդիտային շարժունություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 42
4.2.1 Մինչ կրեդիտային շարժունության ժամանակաշրջան . . . . . . . . . . . . . . . 39
4.2.2 Հետ կրեդիտային շարժունության ժամանակաշրջան . . . . . . . . . . . . . . . 40
4.2.3 Ինստիտուցիոնալ կանոններ և ընթացակարգեր . . . . . . . . . . . . . . . . . 41
4.3 Գնահատականների բաշխում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 44
4.4 Գնահատականների փոխարկում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 47

**Մաս 5. ԿՓԿՀ և ցկյանս ուսումնառություն** . . . . . 49
5.1 Ցկյանս ուսումնառություն - բաց կրթության հնարավորություններ . . . . . 50
5.2 Նախկին կրթության ճանաչում և փորձառություն . . . . . 53

**Մաս 6. ԿՓԿՀ և որակի ապահովում** . . . . . 57

**Մաս 7. ԿՓԿՀ և աջակցող փաստաթղթեր** . . . . . 63
7.1 Դասընթացների ձեռնարկ . . . . . 64
7.2 ԿՓԿՀ և կրեդիտային շարժունության փաստաթղթեր . . . . . 68
7.2.1 Ուսումնառության պայմանագիր կրեդիտային շարժունության դեպքում . . . . . 69
7.2.2 Ուսումնառության պայմանագիր աշխատանքի պրակտիկայի դեպքում . . . . . 70
7.3 Գնահատականների ներդիր . . . . . 72
7.4 Աշխատանքային պրակտիկայի վկայական . . . . . 73

**Երախտիքի խոսք** . . . . . 75

**Հավելվածներ** . . . . . 77
Բառարան . . . . . 78
Գնահատականների փոխարկման օրինակներ . . . . . 99
Գրականության առաջարկվող ցանկ . . . . . 103
Ծրագրերի ուղղվածության և ուսումնառության վերջնարդյունքներով դրանց ներկայացման օրինակներ . . . . . 109

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը (ԿՓԿՀ) Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) գործիքն է, որը նպաստում է ուսումնասիրությունների և դասընթացների ավելի թափանցիկությանը՝ դրանով իսկ օգնելով բարձրացնել բարձրագույն կրթության որակը:

ԿՓԿՀ-ը մշակվել է 1989թ.-ին Էրասմուս ծրագրի շրջանակներում, որպես ուսանողների կողմից արտասահմանում **իրենց ուսումնառության ընթացքում կուտակած կրեդիտների փոխարկման և** նրանց մայր բուհին տեղափոխման միջոց, որը հաշվարկվում է ուղարկող հաստատության կողմից որպես կրթական ծրագրի մաս, երբ ուսանողը վերադառնում է ուսանելու իր երկրում տեղակայված ուսումնական հաստատություն: Հետագա տարիներին այս համակարգը, **հիմնվելով ծանրաբեռնվածության և ձեռք բերված ուսումնառության վերջ**նարդյունքների վրա, սկսեց օգտագործվել նաև հաստատությունների կողմից կրթական ծրագրի ընթացքում կրեդիտների կուտակման համար: ԿՓԿՀ-ն օգ-



նում է ծրագրերի մշակմանը, նկարագրությանն ու տրամադրմանը, հնարավորություն է տալիս ինտեգրելու ուսուցման տարբեր տեսակները ցկյանս ուսումնառության տեսանկյունից, և նպաստում է ուսանողների շարժունությանը՝ դյուրին դարձնելով ուսումնառության ժամանակաշրջանների և որակավորումների ճանաչման գործընթացը: ԿՓԿՀ-ն կարող է կիրառվել բոլոր տեսակի ծրագրերի համար՝ անկախ ուսուցման ձևից (լսարանային, հիմնված աշխատանքի վրա, հեռակա ուսուցման) և ուսանողի կարգավիճակից (առկա, հեռակա), և բոլոր այլ տիպի ուսումնական հանգամանքներում (ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ).

ԿՓԿՀ ուղեցույցը առաջարկում է համակարգի ներդրման ուղենիշներ և հղումներ է տալիս հիմնավորող փաստաթղթերին: Հետևելով 2012թ.[1] Բուխարեստում Բոլոնիայի նախարարների պահանջին՝ 2009թ.-ին ԿՓԿՀ ուղեցույցը վերանայվել է՝ ամրապնդելու «ուսումնառության վերջնարդյունքների հիմնավորման ներդրումը» ԵԲԿՏ-ում: Ուղեցույցն առաջ է մղում նախարարների նպատակը «կոչ անել հաստատություններին ավելի սերտ կապեր ստեղծել ուսուցման կրեդիտների, ուսումնառության վերջնարդյունքների և ուսանողի ծանրաբեռնվածության հետ և ներառել ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերումը գնահատման ընթացակարգերում»: Այս վերանայված տարբերակը հիմնված է վերջին տարիներին ինչպես Բոլոնիայի գործընթացում, այնպես էլ առանձին երկրների կողմից իրականացված հիմնարար աշխատանքների վրա, և ուղղված է օգնելու գիտական հանրությանը և բարձրագույն կրթության այլ շահագրգիռ կողմերին շարժվել Բոլոնիայի գործընթացի կողմից առաջադրված փոփոխությունների ուղղությամբ:

Վերանայված ուղեցույցում հաշվի են առնվել Բոլոնիայի գործընթացում տեղ գտած վերջին զարգացումները, ինչպիսիք են՝ ԵԲԿՏ-ի ստեղծումը, ցկյանս ուսումնառության ամրապնդումը, անցումը ուսուցչակենտրոն բարձրագույն կրթությունից դեպի ուսանողակենտրոնի, ուսումնառության վերջնարդյունքների լայն կիրառությունը, ինչպես նաև ուսանելու և ուսուցանելու նոր ձևերի զարգացումը: Այն իր մեջ ներառում է հատուկ շեշտադրում՝ ուղղված ծրագրի մշակմանն ու տրամադրմանը և հիմնվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից որակավորումների շրջանակների և ակադեմիական պրակտիկայում ԿՓԿՀ-ի սկզբունքների կիրառման փորձի վրա:

[1] http://www.ehea.info/Uploads/(1)/Bucharest%20Communique%202012(2).pdf

Ուղեցույցն առաջարկվում է ուսանողներին, բուհերի ակադեմիական և վարչական անձնակազմին, ինչպես նաև գործատուներին, կրթություն տրամադրողներին և այլ շահառու կողմերին: Հեշտ ընթերցանության միտումով «ուսանող» եզրույթը օգտագործվում է բուհերի բոլոր սովորողների համար (անկախ ուսման ձևից՝ առկա և հեռակա, հեռահար, հիմնված լսարանային կամ աշխատանքի վրա. որոնք ուղղված են որակավորմանը կամ իրար հաջորդող առանձին ուսումնական միավորներին կամ դասընթացներին):

Վերանայված Ուղեցույցը մշակվել է աշխատանքային խմբի կողմից, որը կազմվել է Բոլոնիայի անդամ երկրների և շահառու ասոցիացիաների կողմից նշանակված փորձագետներից. Այն ներկայացվել է քննարկման շահառու ասոցիացիաներին, ԵԲԿՏ երկրների փորձագետներին և Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբին: Եվրոպական հանձնաժողովը համակարգել է Ուղեցույցի մշակման և քննարկման գործընթացը: Ի վերջո, Ուղեցույցն ընդունվել է 2015թ. Երևանի նախարարական համաժողովին մասնակցած Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարների կողմից: Ուստի, տվյալ փաստաթուղթը ԿՓԿՀ-ի օգտագործման պաշտոնական ուղեցույցն է:

# 1 ԿՓԿՀ–Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ



# ԿՓԿՀ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ

**ԿՓԿՀ**-ն սովորողակենտրոն կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ է՝ հիմնված ուսուցման, ուսուցանելու և գնահատման գործընթացների թափանցիկության սկզբունքի վրա: Դրա նպատակն է հեշտացնել կրթական ծրագրերի պլանավորումը, տրամադրումը ու գնահատումը և ուսանողական շարժունությունը՝ ճանաչելով ուսումնառության ձեռքբերումներն ու որակավորումները և ուսուցման ժամանակահատվածները:

**ԿՓԿՀ կրեդիտները** արտահայտում են ուսուցման ծավալը՝ հիմնված ուսումնառության սահմանված վերջնարդյունքների և դրանց հետ կապված ծանրաբեռնվածության վրա: 60 ԿՓԿՀ կրեդիտները համապատասխանում են ուսումնառության վերջնարդյունքներին և դրանց հետ կապված ամբողջ ուսուցման մեկ ուսումնական տարվա կամ դրան համարժեք ծանրաբեռնվածությանը, որը սովորաբար պարունակում է մի շարք կրթական բաղադրիչներ, որոնց համապատասխանում են կրեդիտներ (հիմնված ուսումնառության վերջնարդյունքների և ծանրաբեռնվածության վրա): ԿՓԿՀ կրեդիտները, ընդհանուր առմամբ, արտահայտված են ամբողջ թվերով:

**Ուսումնառության վերջնարդյունքները** պնդումներ են, թե անհատը ուսուցման գործընթացի ավարտին ինչ գիտի, ինչ է հասկանում և ինչ է կարող անել: Ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերումը պետք է գնահատել ընթացակարգերի միջոցով՝ հիմնված հստակ և թափանցիկ չափանիշների վրա: Ուսումնառության վերջնարդյունքները վերագրվում են առանձին կրթական բաղադրիչներին և ամբողջական ծրագրերին: Դրանք նաև օգտագործվում են եվրոպական և ազգային որակավորումների շրջանակներում՝ նկարագրելու անհատական որակավորման մակարդակը:

**Ծանրաբեռնվածությունն** այն ժամանակի հաշվարկումն է, որն անհատին սովորաբար անհրաժեշտ է ավարտելու ամբողջ ուսումնական գործունեությունը, ինչպիսիք են՝ դասախոսությունները, սեմինարները, ծրագրերը, գործնական աշխատանքը, աշխատանքային պրակտիկան[1] և ինքնուրույն հետազոտությու-

[1] [illegible]

նը, որն անհրաժեշտ է պաշտոնական կրթական միջավայրում սահմանված ուսումնառության վերջնարդյունքները ձեռք բերելու համար: Հաճախ առկա ուսուցմամբ մեկ ուսումնական տարվա ծանրաբեռնվածության համապատասխանությունը 60 կրեդիտին պաշտոնապես ամրապնդվում է ազգային իրավական դրույթներում: Մեծ մասամբ, ծանրաբեռնվածությունը մեկ ակադեմիական տարվա համար ենթադրում է 1500-1800 ժամ, ինչը նշանակում է, որ մեկ կրեդիտը համապատասխանում է 25-30 ժամ աշխատանքի: Պետք է ընդունել, որ նշվածը ներկայացնում է բնորոշ ծանրաբեռնվածությունը, և որ անհատ ուսանողների համար ուսումնառության վերջնարդյունքները ձեռք բերելու փաստացի ժամանակը կարող է տարբեր լինել:

**Կրեդիտների բաշխումը**, ըստ ԿՓԿՀ–ի, որակավորումներին, կրթական ծրագրերին կամ առանձին կրթական բաղադրիչներին հատկացվող կրեդիտների թիվն է: Կրեդիտները հատկացվում են ամբողջական որակավորումներին կամ ծրագրերին՝ համաձայն ազգային օրենսդրության կամ գործելակերպի, անհրաժեշտության դեպքում՝ հղում տալով ազգային և/կամ եվրոպական որակավորումների շրջանակներին: Դրանք հատկացվում են կրթական բաղադրիչներին, ինչպես օրինակ՝ դասընթացների մոդուլներին, ատենախոսություններին, աշխատանքի փորձի վրա հիմնված ուսմանը և պրակտիկային՝ հիմք ընդունելով 60 կրեդիտների հատկացումը առկա ուսուցման մեկ ուսումնական տարվան՝ համաձայն որի, հաշվարկված աշխատանքային ծանրաբեռնվածություն է պահանջվում՝ սահմանված ուսումնառության արդյունքների յուրաքանչյուր բաղադրիչի համար:

**Կրեդիտների շնորհումը**, ըստ ԿՓԿՀ-ի, ուսանողներին և այլ սովորողներին կրեդիտների տրամադրման պաշտոնական կանոնակարգն է: Կրեդիտները շնորհվում են որակավորմանը և/կամ դրա բաղադրիչներին, եթե ուսանողները կամ այլ սովորողները հասնում են ուսումնառության սահմանված վերջնարդյունքներին: Ազգային իրավասու մարմինները պետք է նշեն, թե որ հաստատություններն իրավունք ունեն շնորհելու կրեդիտներ: Կրեդիտները շնորհվում են անհատ ուսանողներին՝ պահանջվող ուսումնական գործունեությունը ավարտելուց և սահմանված ուսումնառության վերջնարդյունքներին հասնելուց հետո, որպես համապատասխան գնահատման փաստ: Եթե ուսանողները և այլ սովորողները հասնում են ուսումնառության արդյունքների այլ ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ուսուցման համատեքստերում կամ ժամկետներում, ապա կրեդիտները կարող են շնորհվել նաև այդ ուսուցման արդյունքների գնա-

ուսուցման և ճանաչման միջոցով:

**Կրեդիտների կուտակումը**, ըստ ԿՓԿՀ-ի, պաշտոնական համատեքստերում կրթական թաղադրիչների ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու համար շնորհված և ոչ ֆորմալ և ինֆորմալ համատեքստերում ձեռքբերված այլ գործունեությունների դիմաց հատկացված կրեդիտների կուտակման գործընթացն է:

Ուսանողը[1] կարող է կրեդիտներ կուտակել, որպեսզի.

- ստանա որակավորումները՝ համաձայն կրթության աստիճան շնորհող հաստատության,
- փաստաթղթավորի անձնական ձեռքբերումները ցկյանս ուսումնառության նպատակով:

**Կրեդիտների փոխանցումը** մի որևէ համատեքստում շնորհված (ծրագիր, հաստատություն) կրեդիտներ ունենալու գործընթացն է, որոնք ճանաչվում են մեկ այլ պաշտոնական համատեքստում՝ որակավորում ստանալու նպատակով: Մեկ ծրագրում ուսանողներին շնորհված կրեդիտները կարող են փոխանցվել այդ հաստատության կողմից, որպեսզի կուտակվեն նույն կամ մեկ այլ հաստատության կողմից առաջարկվող մեկ այլ ծրագրում: Կրեդիտների փոխանցումը ուսումնական հաջող շարժունության կարևորագույն գրավականն է: Հաստատությունները, ֆակուլտետները, ամբիոնները կարող են ձեռք բերել համաձայնություններ, որոնք երաշխավորում են ավտոմատ ճանաչում և կրեդիտների փոխանցում:

**ԿՓԿՀ փաստաթղթերով** հիմնավորում ԿՓԿՀ կրեդիտների կիրառումը ուշադրության է և որակյալ համաձայն հիմնավորող փաստաթղթերի (դասընթացի կատալոգ, կրթության համաձայնագիր, գնահատականների ներդիր և աշխատանքային պրակտիկայի վկայական): ԿՓԿՀ-ն նաև նպաստում է այդ փաստաթղթերի թափանցիկությանը, ինչպիսիք են օրինակ դիպլոմի միասնական հավելվածը:

[1] Այն հարցը, թե արդյոք ուսանողների մասին խոսելիս նրանց դիմել որպես «ուսանողներ», թե «սովորողներ», ենթախմբերում քննարկվել է աշխատանքային խմբում և շահառու կողմերի հետ: Արդյունքում ընդհանուր առմամբ ձևավորվել է և ընդունվում այն փաստը, որ բարձրագույն կրթությունը ընդգրկում է զգալի ավելի լայն տրամադրման ձանապարհով այն փաստը, որ բարձրագույն կրթական ծառայությունների մեծ մասը կազմակերպված են ուսանողների սահմանված մասնակի պաշտոնական ծրագրերի տրամադրման շուրջ: Մինչ ավելի վաղ ձևակերպում էր Ուղեցույցում գործածել միայն «սովորող» եզրույթը, ապա «ուսանող» եզրույթը գործածվում է համապատասխան ընդգրկելու բոլոր սովորողներին (անկախ տարիքի ձևից, ասելով, հետևաբար, լրացուցիչ կամ աշխատանքի վրա հիմնված ուսուցման ծրագրերով ստանալ որակավորում կամ ստանձնեն կրթական միավորները կամ դասընթացները փաստող վկայական)



# 2 ԿՓԿՀ-Ն և ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ (ԵԲԿՏ)

## ԿՓԿՀ-Ն ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ (ԵԲԿՏ)

1999թ.-ին Բոլոնիայի հռչակագիրը ԿՓԿՀ-ը ընդգրկեց փաստաթղթում սահմանված հիմնական նպատակներում: Բոլոնիայի գործընթացի ընթացքում իրականացվող բարեփոխումների միջոցով ԿՓԿՀ-ն դարձել է եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) առանցքային գործիք:

ԵԲԿՏ-ի երկրների մեծ մասում ԿՓԿՀ-ն ընդունվել է որպես ազգային կրեդիտային համակարգ: Աշխարհի այլ տարածաշրջաններում այն մեծապես կիրառվում է հաստատությունների կողմից կամ հաջողությամբ համադրվում է տեղական կրեդիտային համակարգերի[3] հետ՝ համադրելի չափանիշների միջոցով՝ կարևոր դեր ունենալով կրթության համաշխարհային համատեքստում:

ԵԲԿՏ-ի շրջանակներում ԿՓԿՀ-ն մեծացնում է ուսումնական գործընթացի թափանցիկությունը և ճկունությունը և այդպիսով արդյունավետ դեր է խաղում փոփոխության և արդիականացման իրականման հարցում, քանի որ դրա իրականացումը խրախուսում է ուսուցչակենտրոն մոտեցումից սովորողակենտրոն մոտեցմանն անցնելը, որը ուսանողակենտրոն ուսուցում (ՈՒԿՈՒ) եզրույթով հայտնի է որպես ԵԲԿՏ-ի հիմնաքարային սկզբունք:

Գործածելով ուսումնառության վերջնարդյունքները և ծանրաբեռնվածությունը ուսումնական պլանի նախագծման և իրականացման մեջ՝ ԿՓԿՀ-ն ուսանողին դնում է կրթական գործընթացի կենտրոնում: Ավելին, կրեդիտներն օգտագործելն ավելի հեշտ է դարձնում ճկուն կրթական ուղիների ստեղծումն ու փաստաթղթային հիմնավորումը՝ դրանով իսկ ուսանողներին ավելի մեծ ինքնավարություն և պատասխանատվություն տալով:

Շնորհիվ իր՝ վերջնարդյունքների վրա հիմնված մոտեցմանը ԿՓԿՀ-ի կիրառումը ծառայում է ԵԲԿՏ-ի այլ նպատակներին ևս.

- այն հեշտացնում է նախկին կրթության և փորձի ճանաչումը և քաջալե-

[3] ԿՓԿՀ-ն ոգեշնչել և խթանել է համանման այլ տարածաշրջաններում կրեդիտային համակարգերի զարգացումը, ինչպես օրինակ՝ Հարավարևելյան Ասիայում կամ Լատինական Ամերիկայում և բազմաթիվ վերջերս նաև Աֆրիկայում:

NotaBene

Ուսանողակենտրոն ուսուցումը (ՈՒԿՈՒ) կրթական միջավայրում ուսանողների և այլ սովորողների որակական փոփոխման մի գործընթաց է, որը միտված է բարձրացնելու նրանց ինքնուրույնությունը և քննադատական մտածողությունը վերջնարդյունքների վրա հիմնված սկզբունքով
ՈՒԿՈՒ հասկացույթը կարող է ամփոփ ներկայացվել ներքոհիշյալ տարրերի միջոցով

- հիմնվել ավելի ակտիվ, ոչ թե պասիվ ուսման վրա,
- շեշտադրում անել քննադատական և վերլուծական ուսման և ըմբռնման վրա,
- ուսանողի պատասխանատվություն և հաշվետվողականության աճ,
- ուսանողի ինքնուրույնության աճ,
- թե՛ ուսանողի, թե՛ դասախոսի կողմից ուսման և ուսուցման գործընթացների հանդեպ անդրադարձային մոտեցում:

րում է ավարտման ավելի բարձր մակարդակ ու ցկյանս ուսումնառության ավելի լայն ներառում.

- այն ստեղծում է ավելի սերտ կապ կրթական ծրագրերի և հասարակական պահանջների միջև և խթանում համագործակցությունը բոլոր շահառու կողմերի հետ, ներառելով՝ աշխատաշուկան և լայն հասարակությունը,
- այն դյուրին է դարձնում որևէ հաստատության կամ երկրի սահմաններում, հաստատությունից հաստատություն, երկրից երկիր, ինչպես նաև կրթական տարբեր համակարգերի և ուսման համատեքստերի (օրինակ՝ ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ և աշխատանքի վրա հիմնված ուսում) միջև շարժունությունը՝ ճանաչման և կրեդիտների փոխանցման միջոցով:

Ազգային օրենսդրության մեջ ԿՓԿՀ-ի կիրառումը կարող է լինել բարձրագույն կրթական ծրագրերի կամ որակավորումների հավատարմագրման պահանջ:

# 3 ԿՓԿՀ-Ն ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱՐ



## ԿՓԿՀ-Ն ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱՐ

Այս բաժինը նվիրված է բարձրագույն ուսումնական հաստատությունների (բուհերի) կամ այլ կրթական աստիճան տրամադրողների կողմից ուսումնական ծրագրերի նախագծմանը: ԿՓԿՀ կրեդիտների կիրառումը օժանդակում է ծրագրի նախագծմանը՝ տրամադրելով մի գործիք, որը բարելավում է թափանցիկությունը և օգնում է ավելի ճկուն մոտեցում ունենալ ուսումնական պլանի նախագծմանն ու զարգացմանը:

Ուսանողակենտրոն տեսանկյունից ծրագրի մշակումը ենթադրում է ուսումնական պլանի և դրա բաղադրիչների կրեդիտներով արտահայտումը՝ նշելով ուսումնառության վերջնարդյունքները և դրանց հետ կապված ծանրաբեռնվածությունը, ուսումնական գործունեությունը և դասավանդման մեթոդներն ու գնահատման ընթացակարգերը/ չափանիշները: Ուսանողակենտրոն կրեդիտային շրջանակը պետք է ծառայի տարբեր ծրագրերի կարիքներին ու աջակցի միջառարկայական և բազմառարկայական մոտեցումները:

ԿՓԿՀ-ի կիրառումը բուհերում պահանջում է թե՛ ինստիտուցիոնալ կրեդիտային շրջանակ, որը հիմնված է ինստիտուցիոնալ կանոնակարգերի վրա, թե՛ ակադեմիական անձնակազմի յուրաքանչյուր անդամի կողմից համակարգի հանգամանալից պատկերացում: Որոշ հաստատություններ խթանում են անձնակազմի իրազեկվածությունը կանոնավոր վերապատրաստումներով: Ծրագրի մշակման վերաբերյալ թիմային որոշումները բարձրացնում են ծրագրի միասնականությունը:

> Անկախ սովորողը կարող է կուտակել ոչ ֆորմալ ուսուցման համար պահանջվող կրեդիտները ուսման մի շարք տարբեր ձևերով: Նա կարող է ձեռք բերել պահանջվող գիտելիքը, հմտությունները ու կարողությունները ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ: Սա կարող է լինել մտադրված որոշման կամ ժամանակի ընթացքում տարբեր կրթական գործունեությունների արդյունքը: Սովորողը կարող է նաև ընտրել կրթական բաղադրիչները՝ առանց որևէ որոշակի պաշտոնական որակավորմանն ուղղված անմիջական ուղղվածության: ԿՓԿՀ-ն աջակցում է այս գործընթացին, ինչպես նկարագրված է Ճկուն ուսուցմանը նվիրված Մաս 5-ում:

Հետևյալ քայլերը ճանաչվել են ծրագրերի մշակման համար օգտակար:

### 3.1 Ծրագրի համատեքստը

Նոր ծրագրի մշակման ընթացքում սովորաբար առաջին որոշումը վերաբերում է շնորհվող որակավորման մակարդակին, որը սահմանվում է համապատասխան ազգային օրենսդրության և տվյալ որակավորումների շրջանակների հիման վրա (եվրոպական, ազգային, սեկտորիալ, ինստիտուցիոնալ):

Ակնհայտ կլինի, որ ուսումնառության ոչ բոլոր վերջնարդյունքներն են նույն մակարդակի, հետևաբար կրեդիտային համակարգի լիարժեք իրականացումը պահանջում է մակարդակի նկարագրիչներ:

Notabene

Գոյություն ունեն երկու եվրոպական որակավորումների շրջանակներ, դրանք են՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակը (ՈՇ-ԵԲԿՏ) և Եվրոպական ցկյանս ուսումնառության Եվրոպական որակավորումների շրջանակը (ԵՈՇ-ՑԿՈՒ): Երկու շրջանակներն էլ կիրառում են ուսումնառության վերջնարդյունքները նկարագրելու որակավորումները, օրինակ՝ (բակալավր, մագիստրոս, դոկտոր) և, դրանք համատեղելի են բարձրագույն կրթության մասով (ՈՇ-ԵԲԿՏ 1, 2 և 3 շրջափուլերը համապատասխանում են ԵՈՇ-ՑԿՈՒ-Ն 6, 7 և 8-ին) և դասակարգելով որակավորումները ISCED (Կրթության դասակարգման միջազգային չափանիշներ) 6,7,8 մակարդակներում:
ՈՇ-ԵԲԿՏ-ում ընդունված են երեք հիմնական շրջափուլեր , որոնք նկարագրված են այսպես կոչված Դուբլինյան նկարագրիչների կողմից՝ գիտելիք և ընկալում, վճիռներ կայացնելու, հաղորդակցային հմտությունների, ուսանել սովորելու- ատումներում: Առաջին և երկրորդ շրջափուլերը նաև նկարագրվում են որոշակի կրեդիտային տիրույթով:

- Առաջին շրջափուլի որակավորումները սովորաբար ներառում են 180 կամ 240 ԿՓԿՀ կրեդիտներ: (Կարճաժամկետ որակավորումները – կապված առաջին շրջափուլի հետ, սակայն դրա պաշտոնապես մաս չկազմող – սովորաբար դրանք ներառում են 90 կամ 120 ԿՓԿՀ կրեդիտներ: (տե՛ս ստորև)):
- Երկրորդ շրջափուլի որակավորումները սովորաբար ներառում են 90 կամ 120 ԿՓԿՀ կրեդիտներ՝ նվազագույնը 60 ԿՓԿՀ կրեդիտներով:
- Երրորդ շրջափուլում ԿՓԿՀ կրեդիտների կիրառումը զանազան է:

NotaBene

**ԵՈՇ-ՑԿՈՒ-ն** նկարագրում է «որակավորման մակարդակները» (առանց մասնանշելու որևէ կրթական ոլորտ) և հանդիսանում է ընդհանուր ուղեցույց, որն աջակցում է ազգային որակավորումների համակարգերը, շրջանակները ու դրանց մակարդակները համեմատելիս: Այն հիմնված է ութ մակարդակների վրա.

- որպես ցկյանս ուսումնառության խթանման գործիք՝ ԵՈՇ-ը ներառում է ընդհանուր և մեծահասակների կրթություն, մասնագիտական կրթություն և վերապատրաստում, ինչպես նաև բարձրագույն կրթություն,
- ութ մակարդակները ընդգրկում են որակավորումների ամբողջ ոլորտը՝ սկսած պարտադիր կրթության ավարտին ստացած որակավորումներով մինչև ակադեմիական կամ մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության և վերապատրաստման բարձրագույն մակարդակում շնորհված որակավորումները:
- յուրաքանչյուր մակարդակ պետք է խելքին հասանելի լինի մի շարք կրթական և աշխատանքային ուղիների միջոցով
- ուսումնառության վերջնարդյունքները նշվում են երեք դասակարգերով՝ որպես գիտելիքներ, հմտություններ և ունակություններ: Սա նշանակում է, որ տարբեր համակարգերով որակավորումները, ընդգրկում են ուսումնառության վերջնարդյունքների լայն շրջանակ, այդ թվում՝ տեսական գիտելիքներ, գործնական և տեխնիկական հմտություններ, ինչպես նաև սոցիալական կարողություններ, որտեղ մյուսների հետ աշխատելու ունակությունը կլինի վճռորոշ:

**ՈՇ-ԵԲԿՏ-ի տարբեր փուլերը հարում են ԵՈՇ-ՑԿՈՒ-ի մակարդակներին, այսպես՝**

- առաջին շրջափուլի որակավորումներ 6-րդ մակարդակում,
- առաջին շրջափուլի որակավորումներ 7-րդ մակարդակում,
- երրորդ փուլի որակավորումներ 8-րդ մակարդակում:

Համաձայնեցված է, որ ԵՈՇ 5-րդ մակարդակը կապվում է Դուբլինյան նկարագրիչի «կարճատամկետ որակավորումներ»-ին (այն ներառված է կամ հարում է առաջին փուլին): Այն պաշտոնապես Բոլոնիայի շրջանակի մաս չի կազմում: Բոլոնիայի շրջանակը ընդունելիս նախարարները համաձայնություն են տվել, որ շրջանակների ազգային համատեքստում պետք է ներառվի միջանկյալ որակավորումների հնարավորությունը:[1]

[1] http://www.ehea.info/Uploads/QF/Bologna_Framework_and_Certification_revised_29_02_08.pdf

ԵԲԿՏ-ՈՇ-ն և ԵՈՇ-ն դրանք այն են համընդհանուր շրջանակներն են, որոնց համաձայն պետք է ճշգրտվեն ազգային և ինստիտուցիոնալ շրջանակները ու նկարագրիչները:

Ազգային շրջանակները սովորաբար ավելի մանրամասն են, քան այդ համընդհանուր շրջանակները՝ արտացոլելով երկրում առաջարկվող մի շարք այլ տիպի որակավորումներ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները, որոնք ներդնում են ԿՓԿՀ-ն, կարիք կունենան ինստիտուցիոնալ շրջանակի, որը հարում է ազգային և միջազգային շրջանակներին: Ինստիտուցիոնալ շրջանակը ցույց կտա, թե ինչպես պետք է կիրառել ԿՓԿՀ կրեդիտները՝ սովորաբար որևէ կրթական բաղադրիչի համար նշելով նվազագույն կրեդիտային արժեքը՝ հեշտացնելու միջառարկայական/բազմառարկայական ծրագրերը (որը կսահմանվի ամբողջ առարկաների շարքից միավորելով կրթական բաղադրիչները): Եվրոպական և ազգային շրջանակները ցույց են տալիս վերջնական որակավորման մակարդակը: Ուստի հաստատությունները, ընդունելով այն, որ որակավորմանը հասնելու ընթացքում ստացված ո՛չ բոլոր կրեդիտներն են գտնվում նույն մակարդակի վրա (օրինակ՝ բակալավրի աստիճանի երրորդ տարվա ուսումնառության վերջնարդյունքները ավելի բարդ են, քան առաջին տարվանը), կարող են հատուկ նշել միջանկյալ կրեդիտային մակարդակներ՝ համապատասխան նկարագրիչներով, որոնք (առաջընթացի կանոնների հետ միասին) կաջակցեն ուսանողներին իրենց ուսումնառության ընթացքում:

Նախքան ծրագիրը մանրամասն մշակելն ու այն կրեդիտային համապատասխան տիրույթում տեղադրելը անհրաժեշտ է հաշվի առնել ուսումնական հաստատության և ֆակուլտետի առաքելությունը, մասնագիտական առանձնահատկությունները (կանոնակարգեր, պահանջներ) և ինստիտուցիոնալ ակադեմիական շրջանակը:

Խորհուրդ է տրվում նաև իրականացնել կարիքների վերլուծություն և խորհրդակցել շահառու կողմերի հետ (գործատուներ, շրջանավարտներ, այլն)՝ պարզելու տվյալ ծրագրի պահանջարկը:

### 3.2 Ծրագրի ուղղվածություն

Ծրագրի ուղղվածությունը ներկայացնում է ծրագրի տարբերակիչ հատկանիշները[3]: Այն նշում է ուսման բնագավառ(ներ)ը[4], ծրագրի մակարդակը, հիմնական նպատակը, ավարտելիս ուսուցման ակնկալվող հիմնական արդյունքները, ուսումնական միջավայրը և հիմնական ուսման, ուսուցանման և գնահատման գործողությունները: Ծրագրի արդյունավետ ուղղվածությունը ուսանողների և շահագրգիռ կողմերի համար պարզ կդարձնի, թե ինչպիսի ընդհանրական և որոշակի առարկայական կարողություններ կզարգացվեն և ինչպիսին են աշխատանքային հնարավորությունները: Այս նպատակով առաջարկվում է, որ ծրագրի ուղղվածությունը սահմանվի համապատասխան շահագրգիռ կողմերի հետ քննարկման արդյունքում (ինչպիսիք են ակադեմիական և սոցիալական գործընկերները, գործատուները, շրջանավարտներն ու ուսանողության ներկայացուցիչները), և որ այն ներկայացված լինի հստակ և թափանցիկ ձևով:

Ծրագրի ուղղվածությունը պետք է ծրագրի նկարագրի մասը կազմի և ներառվի դասընթացի կատալոգում:

[3] Lokhoff, J. et al (2010)- A Guide to Formulating Degree Programme Profiles: Bilbao, Groningen, The Hague http://core-project.eu/documents/Tuning%20G%20Formulating%20Degree%20PR4.pdf

[4] Ուսման բնագավառները կարող են ներկայացվել համապատասխան ԿԴՄՍ ձևաչափերով: https://www.stat.si/doc/sosvet/Sosvet_19/Sos19_s1925-2013.pdf

NotaBene

*ԵՈՒՇ-ում «ուսումնառության վերջնարդյունքներ» և «կարողություն» եզրույթները կիրառված են տարբեր իմաստային երանգներով և փոքր-ինչ տարբերվող կրթական շրջանակներում։*

*Այս Ուղեցույցում՝*

**Կարողություն** եզրույթը նշանակում է «գիտելիքը, հմտությունները ու անձնական, սոցիալական և/կամ մեթոդաբանական ունակությունների գործածման ապացուցված ունակությունը» աշխատանքային կամ ուսումնական համատեքստերում և մասնագիտական կամ անձնական զարգացման մեջ։ Եվրոպական որակավորումների շրջանակի համատեքստում կարողությունը նկարագրված է պատասխանատվություն և ինքնավարություն եզրույթներով[3]։ Կարողությունները կարող են լինել ընդհանրական և հատուկ առարկայական։ Կարողությունների ձևավորումը ուսուցման գործընթացի և կրթական ծրագրի նպատակն է։

**Ուսումնառության վերջնարդյունքները** արտահայտում են ուսանողի կողմից ձեռքբերված կարողության մակարդակը, որը ստուգվում է գնահատման միջոցով։ Դրանք պնդումներ են, թե սովորողն ինչի է տիրապետում, ինչ է ընկալում և ինչ է ունակ անել ուսուցման գործընթացի ավարտին[4]։ Դրանք ձևակերպվում են ակադեմիական անձնակազմի կողմից՝ ներգրավելով ուսանողներին ու այլ շահառուների։ Խթանների համար այս պնդումների գնահատումը անհրաժեշտ է ստուգել դրանք։

---

[3] Հավելված 1. սահմանումներ, 2008թ.-ի ապրիլի 23-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի հանձնարարականը ցկյանս կրթության համար Եվրոպական որակավորումների շրջանակի վերաբերյալ: http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32008H0506(01)&from=EN.

[4] Նույն տեղում

### 3.3 Ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներ

Ծրագրի ուսումնառության վերջնարդյունքները հիմնված են ծրագրի ուղղվածության վրա և նկարագրում են, թե ուսանողն ինչ է տիրապետում, ինչ է հասկանում և ինչ կարող է անել ծրագրի ավարտին:

**Ծրագրի ուսումնառության վերջնարդյունքների ձևակերպումը**

Ուսումնառության վերջնարդյունքների ձևակերպումը պահանջում է մանրակրկիտ և ուշադիր մոտեցում: Հետևյալ, ոչ ամբողջական ցանկը տրամադրում է մի շարք օգտակար առաջարկություններ, որոնք հիմնված են փորձի վրա.

- ուսումնառության վերջնարդյունքները պետք է համարժեքորեն արտացոլեն ծրագրի համատեքստը, մակարդակը, շրջանակն ու բովանդակությունը,
- ուսումնառության վերջնարդյունքների մասին պնդումները պետք է լինեն հակիրճ և ոչ շատ մանրամասն,
- ուսումնառության վերջնարդյունքները պետք է փոխադարձաբար հետևողական լինեն,
- ուսումնառության վերջնարդյունքները պետք է հեշտ հասկանալի և վավերացվող լինեն՝ համաձայն ուսանողի ծրագրի ավարտին ձեռք բերած գիտելիքների,
- ուսումնառության վերջնարդյունքները պետք է հստակ աշխատանքային ծանրաբեռնվածության սահմաններում իրագործելի լինեն,
- ուսումնառության վերջնարդյունքները պետք է կապված լինեն համապատասխան ուսումնական գործընթացների, գնահատման մեթոդների և գնահատման չափանիշների հետ,
- ծրագրային մակարդակում չկան հստակ կանոններ ուսումնառության վերջնարդյունքների կատարյալ թվի վերաբերյալ: Համաձայն փորձի՝ 10 –12 բավարար է:

Լայնորեն ընդունված է ուսումնառության վերջնարդյունքները ձևակերպել հիմնվելով երեք էական տարրերի վրա[9]: Դրանք են՝

1. Նկարագրելիս գործածե՛ք ակտիվ բայ՝ արտահայտելու, թե ինչ է ակնկալվում ուսանողներից իմանալ և կարողանալ անել (օր.՝ շրջանավարտները կարող են «նկարագրել», «իրականացնել», «եզրահանգումներ անել», «գնահատել», «ծրագրավորել» և այլն).

[9] Moon 2004

2. Նշեցե՛ք, թե այս վերջնարդյունքը ինչին է վերաբերում (առարկա, հմտություն, օր.՝ կարող է բացատրել «սարքավորման մասերի նշանակությունը», կարող է ճշգրտորեն ներկայացնել «ճաշատեսակի ռեցեպտը»).
3. Նշեցեք՝ ձեռք բերված ուսումնառության վերջնարդյունքների ներկայացման ձևը (օր.՝ «ներկայացնել անվտանգ էլեկտրատեխնիկական ծառայությունների ոլորտում առավել հաճախ օգտագործվող նյութերի վերաբերյալ», «պարզաբանել հետազոտության կառուցվածքը՝ կիրառելով ժամանակակից գիտական մեթոդներ» և այլն):

Ծրագրի ուսումնառության վերջնարդյունքները պետք է ներառվեն դասընթացի կառուցվածքում և դիպլոմի հավելվածի մեջ:

### 3.4 Ծրագրի կառուցվածքը և կրեդիտների բաշխում

Ծրագրի բովանդակությունը բաժանվել է ուսումնական բաղադրիչների, որոնք կարող են բաղկացած լինել մեկ կամ մի քանի մոդուլներից, այլ տեսակի դասընթացներից, աշխատանքային և կլինիկական պրակտիկայից, հետազոտական նախագծերից, լաբորատոր աշխատանքներից և այլ համապատասխան ուսումնական գործունեություններից: Դրանք կարող են նաև ներառել սոցիալական և համայնքային գործունեություն (օրինակ՝ կրկնուսուցում և ղեկավարում), եթե դրանք համապատասխանում են ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին և կուտակում են կրեդիտներ:

Ուսումնառության վերջնարդյունքները և դրանց գնահատման կարգը և չափանիշները պետք է սահմանվեն յուրաքանչյուր կրթական բաղադրիչի համար:

Ծրագրի և դրա կրթական բաղադրիչների ուսումնառության վերջնարդյունքները հաճախ քարտեզագրվում են՝ փոխադարձ առնչությունները ցույց տալու համար: Շատ հաստատություններ կիրառում են ալգորիթմ, որպեսզի համադրեն կրթական աստիճանի ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքները դրանց կրթական բաղադրիչների հետ

Nota Bene

**Կրթական առանձին բաղադրիչների ուսումնառության վերջնարդյունքները**

Կրթական առանձին բաղադրիչների ուսումնառության վերջնարդյունքների ձևակերպման սկզբունքները նույնն են, ինչ ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքներինը:

Չկան բացարձակ կանոններ կրթական առանձին բաղադրիչների ուսումնառության վերջնարդյունքների կատարյալ թվի վերաբերյալ: Այն կախված է միավորի մակարդակից և բնույթից, ինչպես նաև հաշվարկված աշխատանքային ծանրաբեռնվածությունից: Այնուամենայնիվ, լավագույն փորձառությունը ցույց է տալիս, որ այդ թիվը պետք է սահմանափակ լինի, իսկ ընդհանուր առմամբ 6–8-ը բավարար թիվ է:

Հավելվածը ներառում է ուսումնառության վերջնարդյունքների վերաբերյալ առաջարկվող գրականության ցանկ, որոնք պարունակում են ցուցումներ:

Ծրագրի բաղկացուցիչ մասերը որոշելուց հետո պետք է կազմել դրա ամբողջական կառուցվածքը և յուրաքանչյուր միավորին բաշխվող կրեդիտները՝ հիմնված ուսումնառության վերջնարդյունքների և դրա հետ կապված աշխատանքային ծանրաբեռնվածությանը՝ հաշվի առնելով այն, որ 60 կրեդիտը համարժեք է առկա ուսուցմամբ մեկ ուսումնական տարվան:

Երբ կրթական բաղադրիչները կանոնավոր մեծության են (օր.՝ 5, 10, 15), դրանք հաճախ անվանվում են «մոդուլներ»: Մոդուլներից (մոդուլայնացված կառուցվածք) կազմված ծրագրի պարագայում կրեդիտների կեսը կարող է օգտագործվել, երբ արդարացված է (օրինակ՝ ամեն կիսամյակում 4 մոդուլի դեպքում), սակայն այլ տիպի տասնորդական թվերից հարկ է խուսափել: Օգտակար է, երբ հաստատությունը սահմանում է հիմնական կրեդիտային միավորը՝ նկատի ունենալով բաղադրիչին հատկացվող կրեդիտների նվազագույն թիվը, քանի որ սա կնպաստի ուսումնական պլանի շուրջ տարբեր առարկաների ու ֆակուլտետների համագործակցությանը:

Ուսումնական պլանում «շարժունության պատուհաններ»-ի ներառումը կնպաստի կրթական շարժունությանը: Շարժունության պատուհանները կարող են ծրագրի նախագծման մեջ սահմանվել ինչպես բովանդակության և ժամանակային առումով, այնպես էլ կարող են անհատ ուսանողի համար ճկունության հնարավորություն տալ: Ցանկալի չէ, որ շարժունության պատուհանները օգտա-

գործվեն վերարտադրելու այն, ինչ պետք է սովորել տանը, այլ պետք է ուսանողներին հնարավորություն տան օգուտ քաղել տարբեր կրթական փորձառություններից այլ համատեքստերում:

Առաջխաղացման պահանջները պետք է հստակ լինեն, եթե ուսանողները պետք է ծրագիրը հաջողությամբ անցնեն և ստանան նախատեսված որակավորում: Առաջխաղացման պահանջները կարող են ի թիվս այլ նախադրյալների ներառել նախապայմաններ, համապայմաններ և առաջարկություններ: Առաջընթացի կանոնները կարող են արտահայտվել կրեդիտների թվով և տարբեր փուլերում կրեդիտային տիրույթներով, որոնք պահանջվում են որևէ ուսումնական ծրագրի շրջանակներում տարբեր փուլերում (օրինակ՝ մի ուսումնական տարվանից/կիսամյակից մյուսն անցնելու համար նվազագույն թվով անհրաժեշտ կրեդիտների քանակը): Դրանք կարող են նաև ձևակերպվել մանրամասն կանոնների հիման վրա, թե ինչ բաղադրիչներ պետք է և/կամ կարող են ընտրվել և թե ինչ փուլում ու որ մակարդակում (օրինակ՝ պարտադիր դասընթացներ, կամընտրական դասընթացներ և նախապայմաններ):

Պաշտոնական ծրագրին միացող անկախ սովորողները պետք է ստանան համապատասխան խորհրդատվություն/խորհուրդներ՝ նրանց օգնելու բավարարելու առաջադիմության պահանջներին: Հարկ եղած դեպքում այս խորհրդատվությունը պետք է ներառի նախկինում ստացած կրթության և փորձի ճանաչում: Ճկուն ծրագրերի կառուցվածքներն ուսանողներին ընտրության հնարավորություն են տալիս՝ ներառելով ուսումնառության և ուսուցման նոր եղանակների հասանելիության հնարավորություններ:

### 3.5 Ուսումնառություն, ուսուցում և գնահատում

Բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է սահմանեն իրենց ուսման և ուսուցման նպատակները՝ հարցելով իրենց ուսումնական ծրագրերին. և թե ինչպես պետք է դրանք մատուցվեն ու գնահատվեն:

**Ուսումնառության, ուսուցման և գնահատման հիմնական սկզբունքներ**

Ցանկացած ծրագրի մատուցման ժամանակ ուսումնառության, ուսուցման և գնահատման որոշ հիմնական սկզբունքներ պետք է հաշվի առնվեն՝ անկախ ուսումնառության և ուսուցման եղանակից:

**Բաց երկխոսություն և մասնակցություն**

Ուսանողակենտրոն մոտեցումը պահանջում է ուսանողների, դասախոսների և համապատասխան վարչական մարմինների միջև բաց երկխոսություն և հետադարձ կապ, որի միջոցով նրանց կարիքներն ու ձգտումները կարող են արտահայտվել ու քննարկվել: Բոլոր շահառու կողմերը պետք է ներգրավված լինեն ծրագրի մշակման ու մատուցման կառուցողական քննարկման մեջ: Ուսանողների ներկայացուցիչները պետք է մասնակցեն նման քննարկումներին՝ ունենալով լիարժեք ձայնի իրավունք:

**Թափանցիկություն և հուսալիություն**

Դասընթացի կատալոգը պետք է տրամադրի հուսալի, ժամանակակից, դրակյալ ու վստահելի տեղեկություն կրթական աստիճանների, ինչպես նաև առանձին կրթական բաղադրիչների վերաբերյալ: Այն պետք է ապահովի կրթական աստիճանի ծրագրի ճշգրիտ նկարագրություն՝ ներառյալ բոլոր մանրամասները, այն է՝ կառուցվածքը, բաղադրիչները, ուսումնառության վերջնարդյունքները, աշխատանքային ծանրաբեռնվածությունը, ուսուցանման և ուսուցման մեթոդները, գնահատման մեթոդներն ու չափանիշները և առաջխաղացման կանոնները:

**Համապատասխանություն**

Ծրագրի և դրա բաղադրիչների մատուցման համար պատասխանատու ակադեմիական անձնակազմը պետք է ապահովի համապատասխանություն ծրագրում նշված ուսումնառության վերջնարդյունքների, ուսումնառության և ուսուցման գործունեության ու գնա-

համամ ընթացակարգերի միջև: Այս կառուցողական համապատասխանեցումը[10] ուսումնառության արդյունքների, ուսուցման գործունեության ու գնահատման միջև կրթական ծրագրերի կողմից հիմնարար պահանջ է:

### Ճկունություն

Ծրագրի ճկուն կառուցվածքը հնարավորություն է տալիս ուսանողներին ընտրել և արտահայտել նրանց պահանջները, օրինակ՝ նրանց հնարավորություն տալ մշակել անհատական ուսուցման ուղիներ, և այլընտրանքային գործողություններ:

Ուսումնառության, ուսուցման և գնահատման ճկուն կազմակերպումը՝ ներառյալ ժամանակացույցի ճկունությունը և ինքնուրույն ուսման հնարավորությունները, կարևոր են ուսուցման տարբեր ձևերի առումով: Սա ընդլայնում է ուսումնառության և ուսուցման նյութերի և գործունեությունների ընտրությունը և հնարավորություններ բացում տարբեր ուղղվածություններով կամ կարիքներով ուսանողների համար (օրինակ՝ խնամող ուսանողներ կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար): Թվային տեխնոլոգիաների ներմուծումը բարձրագույն կրթության դաշտ նշանակում է ունենալ զգալի ազդեցություն ուսման և ուսուցման մոտեցումների վրա:

Տեխնոլոգիաների միջոցով հնարավոր դարձած նոր մոտեցումների միջոցով տեղեկության մատուցման արդյունքում ստացված կրեդիտների բաշխումն ուսումնառության վերջնարդյունքներին հիմնված է միևնույն սկզբունքների վրա, ինչպես ավանդական կրթական բաղադրիչներին հատկացվող կրեդիտների բաշխումն ուսումնառության վերջնարդյունքներին:

### Ձեռքբերումների համապատասխան գնահատում

Կրեդիտները հատկացվում են, երբ համապատասխան գնահատումը վկայում է, որ սահմանված ուսումնառության արդյունքները ձեռք են բերվել համապատասխան մակարդակով: Եթե ուսանողը չի հասել ուսումնառության վերջնարդյունքներին, ապա նրան կրեդիտներ չեն տրվում: Ուսումնառության վերջնարդյունքներին հասած ուսանողին շնորհվող կրեդիտների թիվը նույնն

[10] John Biggs: Aligning teaching for constructing learning; http://www.heacademy.ac.uk/assets/documents/resources/database/id477_aligning_teaching_for_constructing_learning.pdf

է, ինչ ուսումնական բաղադրիչին հատկացվող կրեդիտների թիվը:

Գնահատման մեթոդները ներառում են գրավոր, բանավոր և գործնական թեստերի/ քննությունների, ծրագրերի ու թղթապանակների ողջ տեսականին, որոնք գործադրվում են գնահատելու ուսանողի առաջընթացը և պարզելու դասընթացի միավորի կամ մոդուլի ուսումնառության վերջնարդյունքների հասնելը, մինչդեռ գնահատման չափանիշներն ուսանողից ակնկալվող գիտելիքի նկարագրություններ են ցույց տալու համար, որ վերջինս հասել է ուսումնառության վերջնարդյունքին:

Համապատասխանեցում առումով կրթական բաղադրիչի համար ընտրված գնահատման մեթոդներն ու չափանիշները պետք է համահունչ լինեն ուսումնառության վերջնարդյունքներին, որոնք արդեն սահմանվել են դրա համար, և ուսուցման գործունեությանը, որը տեղի է ունեցել

Nota bene

**Դոկտորական աստիճանը** փոփոխության գործընթաց է, որն ունի դոկտորական աստիճանին հասնելու տարբերվող ճանապարհներ, և այն սկզբունքի ճանաչումը, որ բարձրակարգ վերապատրաստումն օգտակար է երրորդ փուլի ընդհանրական (փոխանցելի) ու հատուկ առարկայական կարողություններ զարգացնելու համար: Որոշ երկրներում և հաստատություններում ԿՓԿՀ-ն նույնպես կիրառվում է երրորդ փուլում: ԿՓԿՀ կրեդիտները հատկացվում են դոկտորական աստիճանի ամբողջական ծրագրին կամ դրա որոշ/բոլոր կրթական բաղադրիչներին (օր.՝ դասավանդված դասընթացների միավորներին):

Երբ կիրառվում է ԿՓԿՀ, ապա անհրաժեշտ է օգտվել Ուղեցույցի ցուցումներից՝ հաշվի առնելով այս կամ այն դոկտորական աստիճանի բնույթը: Դրան վերաբերող տեղեկությունը պետք է ներառվի դասընթացի կատալոգում:

Երրորդ փուլում կոնկրետ շրջանների համար սահմանվող ուսումնառության վերջնարդյունքները որոշ դեպքերում կարող է այն թեկնածուներին, որոնք ընդհատել են իրենց ուսումը, թույլատրել ունենալ վկայական, որը կներկայացնի, թե մինչ այդ իրենք ինչի են հասել: Վկայականը կարող է նաև արժեքավոր լինել տարբեր գործատուներին ցույց տալու առումով, թե ընդհանրական և հատուկ առարկայական ինչ կարողություններ են ձեռք բերվել ուսման ընթացքում:

## 3.6 Կրեդիտների շնորհման մոնիթորինգը

Ծրագրի մոնիթորինգի նպատակն է պարզելու, թե արդյոք կրեդիտների բաշխումը, ուսումնառության սահմանված վերջնարդյունքները և հաշվարկված աշխատանքային ծանրաբեռնվածությունը հասանելի են, իրական են և համապատասխան: Մոնիթորինգը կարող է իրականացվել տարբեր եղանակներով, ինչպես օրինակ՝ հարցաշարերի, թիրախային խմբերի կամ հարցազրույցների միջոցով կամ դիտարկելով ստացված արդյունքները: Ինչ մեթոդ էլ կիրառվի, ուսանողներից, անձնակազմից և, երբ հարկ է, շահառու կողմերից արձագանքը պետք է կազմի կրեդիտների բաշխման ստուգման և վերանայման կարևորագույն մասը: Ավարտման ժամկետների ու ծրագրերի գնահատման արդյունքների տվյալները և դրանց բաղադրիչները նույնպես կարող են կիրառվել:

Կարևոր է ուսանողներին և անձնակազմին տեղեկացնել մոնիթորինգի նպատակի և թե այն ինչպես է իրականացվելու՝ ապահովելու համար ճշգրիտ պատասխաններ և մասնակցության բարձր ցուցանիշ: Եթե կուտակված տեղեկության միջոցով ուսանողների մեծ մասի մոտ բացահայտվում է ուսումնառության սահմանված վերջնարդյունքներին հասնելու համար նախատեսված ծանրաբեռնվածության և իրականում ծախսած ժամանակի միջև հակասություն, ապա հարկավոր է վերանայել ծանրաբեռնվածությունը, ուսումնառության վերջնարդյունքները կամ ուսուցման և ուսուցանման գործողությունները ու մեթոդները: Սա կարող է նաև ներառել ուսումնական ծրագրի և դրա ուսումնական բաղադրիչների վերամշակում: Վերանայումը պետք է կատարվի որքան հնարավոր է շուտ՝ առանց ծրագրի մասնակիցների համար խնդիրներ ստեղծելու, և պետք է տեղեկացվի այն մարդկանց, ովքեր մասնակցել են մոնիթորինգին, որպեսզի հաստատությունում ամրապնդվի շարունակական և համագործակցության վրա հիմնված արձագանքի մշակույթը:

# 4

# ԿՓԿՀ–Ն ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ



# ԿՓԿՀ-Ն ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ

Այս բաժինը ընդհանուր առմամբ նվիրված է կրեդիտների փոխանցմանն ու ճանաչմանը, որն իրականացվում թե՛ աստիճանային շարժունության, թե՛ կրեդիտային շարժունության ժամանակ:

Ուսումնառության հաջող շարժունությունը պահանջում է ակադեմիական ճանաչում և կրեդիտների փոխանցում: Կրեդիտների ճանաչումը գործընթաց է, որի միջոցով մի հաստատությունը հավաստում է, որ մեկ այլ հաստատությունում ստացված և գնահատված ուսումնառության վերջնարդյունքները բավարարում են առաջարկվող ծրագրերից մեկի պահանջներին:

Հաշվի առնելով ծրագրերի և բուհերի բազմազանությունը՝ քիչ է հավանական, որ երկու տարբեր ծրագրերի կրեդիտներն ու ուսումնառության վերջնարդյունքները նույնը լինեն: Սա հենց այն դեպքն է, որ կճանաչի այլ ուսումնական համատեքստերում ստացված ուսումնառությունը (օրինակ՝ մասնագիտական կրթության և վերապատրաստման): Հենց այս պատճառով էլ խորհուրդ է տրվում այլ համատեքստում ստացված կրեդիտների ճանաչման համար ունենալ բաց և ճկուն մոտեցում, այդ թվում՝ ուսումնառության շարժունության՝ ավելի շատ հիմնված ուսումնառության վերջնարդյունքների համադրելիության, այլ ոչ թե դասընթացի բովանդակության համարժեքության վրա: Գործնականում ճանաչում նշանակում է, որ այլ համատեքստում ձեռք բերված համադրելի ուսումնառության արդյունքների համար շնորհված կրեդիտների թիվը փոխարինվի համեմատելի կրեդիտների թվով:

Հաստատությունները պետք է ճանաչեն և հեշտ հասանելի դարձնեն իրենց՝ կրեդիտների ճանաչման ընթացակարգերը:

## 4.1 Աստիճանային շարժունություն

Աստիճան շնորհող ծրագրերը կարող են տարբերվել ԿՓԿՀ կրեդիտների թվով (տե՛ս Մաս 3, Nota Bene): ԿՓԿՀ կրեդիտների թվի տարբերությունը խնդրահարույց չէ, երբ որակավորումների ճանաչումը հայցվում է հետագա ուսուցման նպատակով: Ծրագրի ուսումնառության վերջնարդյունքները պետք է լինեն հիմնական գործոն

ճանաչման համար: Ասվածը նշանակում է, որ, օրինակ, բակալավրի [illegible] աստիճանը պետք է ճանաչվի՝ մագիստրոսական ծրագիր ընդունվելու համար՝ անկախ այն բանից, թե՝ արդյոք այն հիմնված է 180 կամ 240 ԿՓԿՀ կրեդիտների վրա:

Nota Bene

**Լիսաբոնի ճանաչման կոնվենցիա**

Լիսաբոնի ճանաչման կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 1999թ.-ին, տրամադրում է իրավական շրջանակ տրանսազգային ակադեմիական ճանաչման համար: Կոնվենցիան սահմանում է.

«36. Գրեթե նույն մակարդակին ռնեցող որակավորումները կարող են ունենալ տարբերություններ բովանդակության, ուղղվածության, ծանրաբեռնվածության, որակի և ուսումնառության վերջնարդյունքների առումով: Օտարերկրյա որակավորումների գնահատման մեջ այդ տարբերությունները պետք է դիտարկվեն ճկուն ձևով և ճանաչման համար միայն էական տարբերությունները պետք է հաշվի առնվեն (օրինակ՝ ակադեմիական կամ de facto մասնագիտական ճանաչումը)՝ հանգեցնելու է օտարերկրյա որակավորումների մասնակի ճանաչմանը կամ չճանաչմանը:

37. Օտարերկրյա որակավորումների ճանաչում պետք է տրվի, եթե չկան էական տարբերություններ այն որակավորման ճանաչման համար, որի համար հայց է ներկայացվել, և ազգային համապատասխան որակավորման միջև»:

EAR ձեռնարկը[48] տալիս է էական տարբերության հետևյալ բացատրությունը[49]

«Կենտրոնանալով հինգ առանցքային տարրերի վրա, որոնք միասին կազմում են որակավորման հենքը (մակարդակ, ծանրաբեռնվածություն, որակ, ուղղվածություն և ուսումնառության վերջնարդյունքներ) և հաշվի առնելով էական տարբերությունները՝ ճանաչման իրավասու մարմինները փոփոխել են իրենց մոտեցումը՝ օտարերկրյա որակավորումներից ակնկալելով ոչ թե լինել գրեթե նույնը, ինչ առաջարկվում է իրենց երկրներում՝ այլ կենտրոնանալով «ճանաչման» վրա՝ հիմնվելով էական տարբերությունների սկզբունքի վրա»:

[48] http://www.eurorecognition.eu/emanual/Chapter%2010/introduction.aspx)

[49] Էական տարբերությունների վերաբերյալ հակված ընկալումը՝ E. Stephen Hunt and Sjur Bergan (eds.): Developing attitudes to recognition. Substantial differences in an age of globalisation (Strasbourg 2010: Council of Europe Publishing. Council of Europe Higher Education Series No 13)

Nota Bene

Էական տարբերությունները օտարերկրյա որակավորման և ազգային որակավորման միջև եղած տարբերություններ են, որոնք այնքան կարևոր են, որ ամենայն հավանականությամբ կխոչընդոտեն դիմորդին հաջողության հասնել գործունեության ցանկալի ոլորտում, ինչպես օրինակ՝ հետագա ուսումը, հետազոտական աշխատանքները կամ աշխատանքի անցնելը:

Էական տարբերության ապացուցման բեռն ընկած է հյուրընկալող երկրի ճանաչում շնորհող իրավասու մարմինների վրա որոնք պետք՝ առաջնորդվեն հետևյալ սկզբունքներով.

- յուրաքանչյուր տարբերություն չէ, որ պետք է համարվի «էական»,
- էական տարբերության առկայությունը չի նշանակում օտարերկրյա որակավորման պարտադիր մերժում,
- տարբերությունը պետք է էական լինի ճանաչման ներկայացվող որակավորման գործառույթի և նպատակի առումով:

NotaBene

**Մասնագիտական որակավորումների ճանաչում**

ԵՄ 2013/55/EU հրահանգը փոփոխում է մասնագիտական որակավորումների ճանաչմանն ուղղված 2005/36 /EC հրահանգը:

Այն թույլ է տալիս, որ ԿՓԿՀ-ն օգտագործվի որպես լրացուցիչ միջոց՝ արտահայտելու ամբողջ դասընթացի տևողությունը յոթ «սեկտորիալ» մասնագիտությունների դեպքում: Դասընթացի տևողությունը ամբողջ ուսումնական տարվա և ժամերի ընդհանուր թվի կտրվածքով արտահայտելու պարտավորությունը կպահպանվի բժիշկների, ընդհանուր խնամքի բուժքույրերի, ատամնաբույժների և մանկաբարձուհիների համար: Ատամնաբուժական վիրաբույժների, դեղագործների և ճարտարապետների համար այդ պարտավորությունը տարածվում է միայն ամբողջ ուսումնական տարիները:

Նույն ձևով ԿՓԿՀ-ն կարող է նաև օգտագործվել որակավորումների (d) և (e) աստիճանակարգման մեջ, որը կիրառվում է գլխավոր համակարգում և որը ներառում է ԵՄ-ում և Եվրոպական տնտեսական տարածքում որակավորման հենքի վրա կարգավորվող բոլոր այլ մասնագիտությունների համար:

Այս Նոր Հրահանգը ընդլայնել է իր շրջանակները՝ ընդգրկելով աշխատանքի պրակտիկայի ճանաչում, որն անհրաժեշտ է դեպի կարգավորվող մասնագիտություն մուտք գործելու համար: Դրանք կարող են ծառայել ցանկացած ԵՄ / ԵՏԳ անդամ պետություններում՝ անկախ այն բանից, թե որակավորումը որտեղ է շնորհվել՝ ապահովելով լրիվ ճանաչում: Կետ 27-ում ասվում է, որ «Մեկ այլ անդամ պետությունում ստացած մասնագիտական վերապատրաստման ճանաչումը պետք է հիմնված լինի ուսումնառության նպատակների և համաձայնեցված աշխատանքների հստակ գրավոր նկարագրության վրա, որոնք որոշվել են վերապատրաստողի՝ ընդունող անդամ պետության ղեկավարի կողմից»: Հոդված 55a-ն պահանջում է, որ իրավասու մարմինները «հրապարակեն մեկ այլ անդամ պետությունում կամ երրորդ երկրում իրականացվող մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման և ճանաչման վերաբերյալ ուղեցույցներ, մասնավորապես վերապատրաստման ղեկավարի դերի վերաբերյալ:

Վերջապես Նոր Հրահանգը ներկայացնում է վերապատրաստման ընդհանուր շրջանակները՝ հիմնված «գիտելիքների, հմտությունների և կարողությունների համընդհանուր փաթեթի» վրա, որոնք պահանջվում են կրթության և վերապատրաստման համակարգերից և կիրառելի են անդամ պետությունների առնվազն մեկ երրորդի կողմից: Այս ծրագրերը կարող են առաջարկվել ԵՄ-ում կամ ազգային մակարդակում գործող ներկայացուցչական մասնագիտական մարմինների կամ իրավասու մարմինների կողմից: Նրանք պետք է հղում կատարեն եվրոպական որակավորումների շրջանակին և կարող են ազատորեն օգտվել ԿՓԿՀ-ից:

## 4.2 Կրեդիտային շարժունություն

ԿՓԿՀ-ն մշակվել է հաստատությունների միջև ուսումնառության կարճաժամկետ տևողության («կրեդիտային շարժունություն») շարժունության գործընթացը խթանելու համար: Ինչպես պարզ է դառնում այս Ուղեցույցից, ԿՓԿՀ-ն մշակվել և ընդունվել է կրեդիտների կուտակման նպատակով, սակայն այն դեռ կենսական դեր է խաղում ուսանողների շարժունության մեջ՝ խթանելով շարժունակ ուսանողի տեղաշարժը ու ձեռքբերումների ճանաչումը:

ԿՓԿՀ-ի մի շարք լրացուցիչ հիմնական փաստաթղթերը նպաստում են կրեդիտների ճանաչմանը շարժունության նպատակով.

- դասընթացի կատալոգ,
- ուսումնառության պայմանագիր,
- գնահատականների ներդիր,
- վերապատրաստման վկայական:

Այդ փաստաթղթերը տրամադրում են տեղեկատվություն ուսանողի կողմից ձեռք բերված ուսումնառության վերջնարդյունքների մասին, որի հիման վրա որակավորումը շնորհող հաստատությունը կարող է որոշումներ կայացնել կրեդիտների ճանաչման և փոխանցման վերաբերյալ (մանրամասների համար տե՛ս Մաս 7):*

> **Միջհաստատությունային պայմանագրերի շրջանակում կրեդիտային շարժունության ճանաչման ճկուն կանոն**
> Այլ երկրում սովորած ժամանակահատվածում կամ միջազգային շարժունության ընթացքում ձեռք բերված բոլոր կրեդիտները, համաձայն ուսումնառության պայմանագրի, որոնք հավաստվում են գնահատականների ներդիրով, պետք է փոխանցվեն առանց հապաղելու և հաշվարկվեն ուսանողի կրթական ծրագրի համար՝ առանց որևէ լրացուցիչ աշխատանքի կամ ուսանողի գնահատման:

* Բուհերի համար նախատեսված Եվրոպական ճանաչման ձեռնարկը պարունակում է օգտակար գործիք արտասահմանում ուսման ժամանակահատվածների ճանաչման համար (http://www.ehea.info/Uploads/SubmitedFiles/3_2014/141723.pdf էջ 134):

### 4.2.1 Մինչ կրեդիտային շարժունության ժամանակաշրջան

Կրեդիտային շարժունությունն ու դրա ճանաչումը խթանելու համար երեք ներգրավված կողմերը՝ ուսանողը, ուղարկող հաստատությունը և հյուրընկալող հաստատությունը կամ կազմակերպությունը/ձեռնարկությունը պետք է համաձայնության գան արտերկրում կազմակերպվող ծրագրի շուրջ: Նրանք պետք է ձևակերպեն դա ուսումնառության պայմանագրում, որը պետք է ստորագրեն երեք կողմերն էլ շարժունության ժամանակահատվածի մեկնարկից առաջ:[13] Ուսումնառության պայմանագիրը նախատեսված է ուսանողին վստահեցնելու, որ նրա կողմից շարժունության ժամանակահատվածում հաջողությամբ ստացված կրեդիտները կճանաչվեն:

Սովորաբար պարտադիր չէ, որ շարժունության ժամանակահատվածում կրթական բաղադրիչները ընտրվեն ուղարկող հաստատությունում առաջարկվող առանձին կրթական բաղադրիչների հետ իրենց համարժեքության հիման վրա: Արտերկրում ամբողջ ծրագրի ուսումնառության վերջնարդյունքները պետք է համատեղելի կամ համադրելի լինեն մայր հաստատության կրթական աստիճանի ուսումնառության վերջնարդյունքների հետ, որի համար արտերկրում սովորելու ժամանակահատվածից հետո ճանաչում պետք է շնորհվի: Սա ավելի հեշտ է դարձնում հյուրընկալող հաստատությունում ստացած կրեդիտները ճկուն կերպով փոխարինումը ուղարկող հաստատության կրթական աստիճանի ծրագրի համարժեք թվով կրեդիտներով: Հնարավոր է նաև շարժունության ժամանակահատվածն արձանագրել որպես մի ամբողջություն՝ բաղադրիչ առ բաղադրիչ արձանագրելու փոխարեն:

Ուսումնառության պայմանագիրը պետք է սահմանի ընդունող հաստատությունում կրթական բաղադրիչների ցանկը, որոնց պետք է հաճախել, նաև ինչպես դրանք կարող են ինտեգրվել ուղարկող հաստատության ծրագրում: Ընդունող հաստատությունում ձեռք բերած կրեդիտների թիվը պետք է համաչափ լինի արտերկրում սովորելու համար անցկացրած ժամանակին: Ուսանողից ակնկալվում է, որ նա առկա ուսուցմամբ, մեկ ուսումնական տարվա

[13] «Էրասմուս+» ծրագիրը իրենց ծրագրին մասնակցելու համար հաստատություններին տրամադրում է ուսումնառության և վերապատրաստման պայմանագրերի ձևանմուշներ: Այն նույնպես հաստատություններին տրամադրում է ուղեցույց, թե ինչպես պետք է օգտագործել ձևանմուշները, և սահմանում է հստակ պահանջներ, որոնց պետք է հաստատությունները հետևեն:

ընթացքում լրացնի 60 ԿՓԿՀ-ին համարժեք կրթական բաղադրիչներ:

Հյուրընկալող հաստատությունը պարտավորվում է նաև ուսանողին գրանցել նախատեսված կրթական բաղադրիչներում՝ ստուգելով, թե արդյոք այդ բաղադրիչները հասանելի են շարժունության նախատեսված ժամանակահատվածում:

Ուսումնառության պայմանագիրը բոլոր երեք կողմերից ստորագրությունից հետո, հարկ եղած դեպքում կարող է փոփոխվել այդ կողմերի համաձայնության դեպքում:

Nota Bene

ՏՀՏ-ի միջոցով մատուցվող ուսուցման նոր եղանակները ուսանողներին հնարավորություն կտան մասամբ գործել և հետևել ուսումնական հաստատության դասընթացներին («վիրտուալ շարժունություն»): Նման ուսանողների համար պետք է առաջարկվի հատուկ խորհրդատվություն և «ուղարկող հաստատության» և ուսանողի միջև ուսումնառության պայմանագիր պետք է ստորագրվի:

Համատեղ ծրագրերի պարագայում գործընկեր հաստատությունների կողմից համաձայնեցված շարժունության սխեմաներ պետք է ընդունվեն, որոնք ներառում են կրեդիտների ճանաչման կանոնները: Ուսումնառության պայմանագրերը անհրաժեշտ չեն համատեղ ծրագրերի դեպքում: գործընկեր հաստատություններում ձեռք բերված կրեդիտները ավտոմատ ճանաչվում են, եթե համաձայնեցված կանոնների հանդեպ հետևողական են գտնվել և բոլոր պայմանները բավարարվել են: Այնուամենայնիվ, ուսուցման նախատեսված ուղին պետք է ուսանողի համար պարզ լինի և ուսումնառության պայմանագրերը կարտացոլեն այդ փոփոխությունը:

#### 4.2.2 Հետ կրեդիտային շարժունության ժամանակացույցը

Հյուրընկալող հաստատությունը ուղարկող հաստատությանը և ուսանողին տրամադրում է գնահատականների ներդիր հնարավորինս կարճ ժամանակահատվածում (սահմանված երկու հաստատությունների միջև) ընդունող հաստատության կողմից ուսանողի արդյունքների հաշվարկից հետո:

Ուսումնառության պայմանագրի և ընդունող հաստատության ուղարկվող գնահատականների ներդիրում ամրագրված կրթական բաղադրիչների փաթեթի հաջող ավարտից ուղարկող հաստատությունը պետք է լիովին ճանաչի համաձայնեցված ԿՓԿՀ կրեդիտների

թյունը, փոխանցի դրանք ուսանողի ծրագրի և գործածի դրանք՝ բավարարելու որակավորման պահանջները: Ուղարկող հաստատությունը պետք է լիովին պարզ դարձնի, թե ինչպես արտասահմանում անցած կրթական բաղադրիչները կինտեգրվեն մայր հաստատության կրթական աստիճանի ծրագրի մեջ: Որտեղ հարկ է, գնահատականները փոխարկվում են (տե՛ս գնահատականների բաշխման աղյուսակին նվիրված մասը): Այս ողջ տեղեկատվությունը պետք է արձանագրվի գնահատականների ներդիրի մեջ (կամ համարժեք փաստաթղթում/բազայում), որը հասանելի կլինի ուսանողի համար:

Ինստիտուցիոնալ ընթացակարգերը պետք է սահմանվեն կրթական բաղադրիչների գնահատման համար, եթե ուսանողները հաջող չեն ավարտել դրանք ընդունող հաստատությունում: Նման ընթացակարգերը պետք է ուսանողներին տեղեկացվեն նախապես:

Դիպլոմի հավելվածը նախատեսված է շրջանավարտներին իրենց ուսման վերաբերյալ թափանցիկ գրառում տրամադրելու համար: Հետևաբար, արտերկրում հաջողությամբ ավարտված կրթական բաղադրիչները պետք է իրենց օրիգինալ անվանումներով (և դրանց թարգմանությամբ այն լեզվով, որով կազմված է դիպլոմի հավելվածը) ընդգրկվեն գնահատականների ներդիրի մեջ, որը կցվում է դիպլոմի հավելվածին՝ նշելով այն հաստատությունը, որտեղից դրանք ստացվել են, ինչպես նաև շնորհված կրեդիտներն ու գնահատականները: Արտերկրում աշխատանքի տեղավորման դեպքում փոխանցվող կրեդիտները կփաստագրվեն աշխատանքային պրակտիկայի վկայականում և դիպլոմի հավելվածում կամ Europass-ի շարժունության վկայականում: Նոր շրջանավարտների աշխատանքային պրակտիկայի դեպքում Europass-ի շարժունության վկայականի առկայությունը ցանկալի է, քանի որ նրանց պրակտիկան տեղի է ունենում ուսուցման ավարտին, և վերոնշյալ մյուս փաստաթղթերն այս դեպքում նրանց համար կարևոր չեն:

### 4.2.3 Ինստիտուցիոնալ կանոններ և ընթացակարգեր

Փորձը ցույց է տալիս, որ լավ փորձառությանը հետևելը նպաստում է կրեդիտների շարժունության և ճանաչման կառավարմանը:

#### Ինստիտուցիոնալ պատասխանատվություն

Հստակ ինստիտուցիոնալ կանոններ պետք է մշակվեն ուսումնառության փորձի ճանաչման համար, որոնք թույլ

կրած տարբեր տեսակի շարժունության միջոցով կրեդիտների կուտակում և փոխանցում (ներառյալ «ազատ շարժվողներ»), աշխատանքային փորձ, վիրտուալ ուսուցում, նախնական և ինֆորմալ ուսումնառություն):

Հաստատությունը պետք է հստակեցնի սահմանի կրեդիտային շարժունության իրականացման և մոնիթորինգի պարտականություններ և ապահովի միասնական կրեդիտային շարժունության թափանցիկ և արդար ընթացակարգերն ու ընդունության չափանիշները, և որ հարկ եղած դեպքում գործի բողոքարկման մեխանիզմ: Յուրաքանչյուր բաժնում կամ առարկայական դաշտում անձնակազմի մի անդամ պետք է նախապես նշանակվի և պաշտոնապես լիազորված լինի ուսանողի հետ աշխատելու ծրագրի ընտրության համար, և որ այդ ընտրված անձը հաստատի ու ստորագրի ուսումնառության պայմանագիրը ուղարկող հաստատության անունից շարժունության մեկնարկից առաջ, ինչպես նաև շարժունության ժամանակահատվածից հետո գնահատականների ներդիրը[4]: Այն ուսանողները, ովքեր փոխված են, պետք է չբանակցեն ակադեմիական ճանաչման համար անձնակազմի անդամների կամ հանձնաժողովի հետ, այդ երկրում իրենց ուսումնառության ժամանակահատվածից առաջ կամ հետո, ոչ էլ պետք է ուսանողից պահանջել, որ նա հանձնի ցանկացած այլ քննություններ կամ վերադարձից հետո կատարի լրացուցիչ աշխատանք:

### Գործընկեր հաստատությունների ընտրություն

Առաջարկվում է ուսանողների փոխանակման վերաբերյալ համաձայնությունների գալ հաստատությունների հետ.

- որոնք առաջարկում են իրենց ծրագրերի թափանցիկ նկարագրություններ՝ ներառյալ ուսումնառության վերջնարդյունքները, կրեդիտները, ուսման և ուսուցման մոտեցումները և գնահատման մեթոդները,

[4] Երաշխավոր փաստաթղթը պարունակում է ուսումնառության պայմանագրի ձևանմուշ, որտեղ պատասխանատու անձանցից պահանջվող տեղեկությունը ամփոփված է այսպես. ուղարկող հաստատության պատասխանատու անձը՝ դասախոս, որն իրավասու է հաստատել ներքին ուսանողների շարժունության ծրագրին մասնակցությունը (ուսումնառության պայմանագրեր), բացառապես փոփոխել դրանք, երբ անհրաժեշտ է, ինչպես նաև երաշխավորել նման ծրագրերի լիարժեք ճանաչումը պատասխանատու ակադեմիական մարմնի անունից:
Ընդունող հաստատության պատասխանատու անձ – դասախոս, որն իրավասու է հաստատել շարժունության ծրագիրը ներգնա ուսանողների համար և պատասխանատու է ընդունող հաստատությունում նրանց սահուն ակադեմիական ինտեգրման իրենց ներգրավվածությունների ընթացքում:

- որոնց ուսման, ուսուցման և գնահատման ընթացակարգերը ընդունվում են ողջամիտ համապատասխանության կողմից՝ առանց ուսանողից պահանջելու լրացուցիչ աշխատանք կամ քննություն,
- որոնք պատշաճ կերպով որակ են ապահովում՝ համաձայն իրենց ազգային համակարգերի:

Պարտադիր չէ, որ համաձայնագրեր կնքվեն միայն այն հաստատությունների հետ, որոնք առաջարկում են նմանատիպ ծրագրեր, այլ նաև լրացուցիչ ծրագրեր առաջարկողների հետ:

**Կրեդիտային շարժունության խնդիրները ծրագրերի մեջ**

Ուսանողական պլանում կրեդիտային շարժունության ներառումը խթանում է ճանաչումը: Հաստատությունները կարող են.

- նշել այն կիսամյակը կամ տարին, որը լավագույն ժամանակահատվածն է ծրագրի սահմաններում (շարժունության պատուհան),
- այդ կիսամյակում/տարվա ընթացքում պլանավորել ուսումնառության վերջնարդյունքներով կրթական բաղադրիչներ, որոնք հեշտորեն կարող են նաև ստացվել արտասահմանում (օր.՝ միջազգային կամ համեմատական դասընթացներ, լրացուցիչ/կամընտրական դասընթացներ, ստենդախոսության նախապատրաստական փուլ, աշխատանքային պրակտիկա),
- գտնել գործընկեր հաստատություններ, որտեղ ուսումնառության համատեղելի/լրացուցիչ վերջնարդյունքներ կարող են ստացվել:

Էրասմուս+ ծրագրում մի քանի գործիքներ, ինչպես օրինակ բարձրագույն կրթության նվիրված Էրասմուսի կանոնադրությունը (ինստիտուցիոնալ պարտավորություն), շարժունության համար նախատեսված որակի կանոնադրությունը, ուսանողների համար նախատեսված Էրասմուսի կանոնադրությունը (Էրասմուս+ ուսանողներ քայլ փորձի նվիրապահական օրինագիրքը, որոնք սրբագրում են կրեդիտային շարժունության և ճանաչման կազմակերպման շրջանակը:

## 4.3. Գնահատականների բաշխում

Շնորհիվ տարբեր մշակութային և ակադեմիական ավանդույթների՝ Եվրոպական կրթական համակարգերը մշակել են ոչ միայն ազգային գնահատման տարբեր սանդղակներ, այլև միևնույն երկրի ներսում, տարբեր առարկաներում և հաստատություններում դրանք օգտագործելու տարբեր ուղիներ: Թեև կարևոր է ճանաչել այդ տարբերությունները, բայց նաև կարևոր է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում դրանք թափանցիկ դարձնել այնպես, որ բոլոր երկրներում, առարկաների շրջանակներում և հաստատություններում շնորհվող գնահատականները պատշաճ կերպով հասկացվեն և ճշգրտորեն համեմատվեն:

Շարժունակ ուսանողները իրավունք ունեն արդար վերաբերմունքի և իրենց գնահատականների թափանցիկության, երբ կրեդիտները մեկ հաստատությունից փոխանցվում են մյուսին, քանի որ հետագա ուսման հնարավորությունը, դրամաշնորհներ կամ այլ տեսակի արտոնություններ ստանալը կարող է կախված իրենց առաջադիմության մակարդակից: Առաջադիմության մակարդակների թափանցիկությունը հավասարապես կարևոր է իրենց սեփական կամ մեկ այլ երկրում աշխատանքի համար դիմող շրջանավարտների համար:

Անհատ ուսանողի ներկայացման վերաբերյալ թափանցիկ և միասնական տեղեկատվություն ապահովելու համար՝ յուրաքանչյուր բուհ պետք է ի լրումն իրենց ազգային/ինստիտուցիոնալ գնահատման սանդղակի և դրա բացատրության ապահովի նաև ուսանողի կողմից մասնակցած ծրագրի կամ ուսուցման առարկայի արդյունքում շնորհվող անցողիկ գնահատականների վիճակագրական բաշխման աղյուսակ (գնահատականների բաշխման աղյուսակ)՝ ցույց տալով, թե իրականում ինչպես է այդ գնահատման սանդղակը կիրառվում տվյալ ծրագրում:[15]

Նույնիսկ այն դեպքերում, երբ տեղական հաստատություններում կրեդիտների փոխանցումը անհրաժեշտ ակադեմիական ավանդույթ չէ, գնահատականների բաշխման աղյուսակի հաշվարկումը կնպաստի ուղարկող հաստատություն վերադառնալիս մուտքային ուսանողների հանդեպ արդար վերաբերմունք: Պետք է նշել, որ նաև լավ փորձ է հանդիսանում քննողների ներքին խոր-

[15] Գնահատականների բաշխման աղյուսակը առաջին անգամ ներկայացվել է ԿՓԿՀ Ուղեցույցում 2009թ.-ին՝ որպես փոխարինում նախկին ԿՓԿՀ գնահատման ցուցիչներին (A, B, C, D, E), որոնք այլևս չեն կիրառվում.

հարցը քննության գնահատման վերաբերյալ մանրամասն վիճակագրական տվյալներով ապահովումը՝ այդ գործընթացն ավելի թափանցիկ դարձնելու և անհամապատասխանությունները ցույց տալու համար, որոնք կարող են հետագա քննարկման խնդիրներ լինել:

Համատեղ կրթական ծրագրերի գործընկերները պետք է նախապես համաձայնության գան իրենց կոնսորցիումի շրջանակներում, թե ինչպես են նրանք պատրաստվում զբաղվել գնահատման և գնահատականների փոխանցման հարցերով:

Գնահատականների բաշխման աղյուսակները ցույց են տալիս, թե ինչպես է տվյալ ազգային կամ ինստիտուցիոնալ սանդղակը օգտագործվում այս կամ այն հաստատությունում, թե արդյոք այն կիրառվում է բաց մուտքային կամ կամընտրական համակարգերում, և թե արդյոք այն թույլ է տալիս գնահատականների վիճակագրական բաշխման համեմատություն մի մեկ այլ հաստատությունում նմանատիպ հղում արվող խմբում: Դրանք ներկայացնում են դրական գնահատականների վիճակագրական բաշխումը (անցողիկ և ավելի բարձր), որոնք շնորհվում են տվյալ հաստատությունում՝ յուրաքանչյուր ոլորտում: Կարևոր է լրացուցիչ տեղեկություն տրամադրել հաջողության ցուցանիշների վերաբերյալ կուտակման նույն մակարդակում, սակայն դրանք չպետք է օգտագործվեն փոխանցման նպատակով:

Գնահատականների բաշխման աղյուսակները պետք է միևնույն առարկային պատկանող կրթական ծրագրում ընդգրկված հղում արվող ուսանողների խմբերի համար մշակվեն ստանդարտացված ձևաչափով: Նման խմբերը պետք է լինեն վստահելի մեծության՝ ուսանողների թվի և ուսումնառության նախատեսվող տարիների առումով:

Գնահատականների բաշխման աղյուսակների հաշվարկումը մի խնդիր է, որ շատ հաստատություններում իրականացվում է կենտրոնացված: Բաշխման աղյուսակների ձևակերպումը չպետք է հաստատություններում անհարկի դժվարություններ ստեղծի, քանի որ անհրաժեշտ տվյալները, ընդհանուր առմամբ, հասանելի են ինստիտուցիոնալ տեղեկատվական համակարգերում և տոկոսների հաշվարկը հեշտությամբ արվում է համակարգչային պարզ ծրագրերի օգնությամբ: Այն միայն պահանջում է հետևյալ քայլերը:

- Ձեր հաստատությունում ընտրեք հղում արվող խմբեր՝ օգտագործելով օբյեկտիվ և թափանցիկ չափանիշներ, որոնք պետք է կցված լինեն գնահատականների բաշխման աղյուսակներին: Ուսումնառության համարժեքի վերջնարդյունքների

վրա հիմնված մեթոդների բացակայության դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել ISCED-F դասակարգումը, որն առաջարկում է ուսումնասիրության ասպարեզների առանձնացված և հիերարխիկ դասակարգում: Վիճակագրորեն համապատասխան հղման խմբեր ունենալու համար, որոնք բավականաչափ մեծ են՝ խորհուրդ է տրվում «նեղ» կամ «մանրամասն» մակարդակներում օգտագործել ISCED կոդը[16]:

- Հաշվարկե՛ք յուրաքանչյուր հղում արվող խմբին շնորհված անցողիկ գնահատականների բացարձակ թիվը, որը նշված է առնվազն վերջին երկու տարիների ընթացքում: Հիշե՛ք, որ հաջողության ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տրամադրվել ընդհանուր ձևով, սակայն ոչ այս հաշվարկումը:
- Հաշվարկե՛ք հղում արվող խմբին շնորհված անցողիկ գնահատականների բաշխման տոկոսները և այնուհետև հաշվե՛ք գումարային տոկոսներ: Արդյունքում կստացվի գնահատականների բաշխման տոկոսների և գումարային տոկոսների աղյուսակ յուրաքանչյուր խմբի համար:

Ստորև ներկայացված է գնահատականների աղյուսակի պատկերավոր օրինակ:

| Համապատասխան [illegible] | Հղում արվող խմբին շնորհող անցողիկ գնահատականների թիվ | Յուրաքանչյուր գնահատականի տոկոսային հարաբերությունը շնորհված ընդհանուր գնահատականների նկատմամբ | Շնորհված գնահատականների գումարային տոկոս |
|---|---|---|---|
| 10 | 50 | 5% | 5% |
| 9 | 100 | 10% | 15% |
| 8 | 350 | 35% | 50% |
| 7 | 300 | 30% | 80% |
| 6 | 200 | 20% | 00% |
| Ընդհանուր՝ | 1,000 | 100% | |

[15] http://www.uis.unesco.org/Education/Pages/international-standard-classification-of-education.aspx
[16] Գնահատման համակարգերը/մոտեցումները կարող են տարբերվել ազգային մակարդակով:

Ընդգրկվելով ուսանողների Գնահատականների ներդիրի և Դիպլոմի հավելվածի մեջ՝ այս աղյուսակը կխթանի շնորհված գնահատականի մեկնաբանումը, և լրացուցիչ հաշվարկման կարիք չի լինի:**

## 4.4 Գնահատականների փոխարկում

Երբ հաստատությունները որոշում են փոխանցել իրենց շարժունակ ուսանողների գնահատականները, կրեդիտների փոխանցման համար պատասխանատու դասախոսը պետք է համեմատի իր հղում արվող խմբի գնահատականների բաշխման աղյուսակը մյուս հաստատության կողմից զուգահեռաբար՝ միևնույն համար ընտրված խմբի համար մշակված աղյուսակի հետ: Գնահատականների աղյուսակներում յուրաքանչյուր գնահատականի զբաղեցրած դիրքը կարող է համեմատվել, և այս համեմատության վրա հիմնվելով՝ առանձին գնահատականները փոխարկվում են:

Սովորաբար գնահատականների տոկոսային տիրույթները համընկնում են: Վարժության նպատակը թափանցիկությունն է: Ուստի, հյուրընկալող հաստատությունը պետք է նախապես որոշի, թե արդյոք նրանց համար ընդունելի է համընկնող տիրույթների նվազագույն, միջին, և թե առավելագույն համեմատելի գնահատականը:

Հավելված 2-ը ներառում է օրինակներ, թե ինչպես կարող է իրականացվել գնահատականների փոխարկումը:

** Ներկայիս ընթացող «EGRACONS» ծրագիրը մշակում է գնահատման աղյուսակի առցանցային ներկայացման օրինակներ:

# 5

# ԿՓԿՀ և ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ



# ԿՓԿՀ ԵՎ ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Այս բաժինը նվիրված է ԿՓԿՀ-ի դերին ցկյանս ուսումնառությունը, բաց կրթական հնարավորությունները և նախկին կրթության և փորձն ընդունելու գործընթացները խթանելու հարցում:

## 5.1 Ցկյանս ուսումնառություն – բաց կրթության հնարավորություններ

Բարձրագույն կրթության ուսուցման սահմանները փոխվում են կրթական հնարավորությունների ավելի մեծ բազմազանության և ճկունության արագ զարգացման արդյունքում՝ ներառյալ խառը ուսուցումը, բաց օնլայն ուսուցման նոր ձևերը, զանգվածային բաց առցանց դասընթացներ (MOOCs – ԶԲԱԴ), բաց կրթական ռեսուրսներ (ԲԿՌ), աշխատանքի վրա հիմված ուսուցումը, ինքնամետ ուսուցում, անհատական ուսուցման ուղիներ, մասնագիտական շարունակական զարգացում (տե՛ս Մաս 3): Զգալիորեն աճում է այն սովորողների թիվը, ովքեր նախընտրում են «առանձին» ուսումնական միավորներ կամ դասընթացներ՝ առանց կոնկրետ որակավորմանը հետամուտ լինելու: Բարձրագույն ուսումնական հաստատությունները կանգնած են ուսանողական բազմազան խմբի կարիքները բավարարելու, ինչպես նաև ուսուցման անհատական ուղիներ և ուսուցման տարաբնույթ եղանակներ ապահովելու անհրաժեշտության առջև: Հետևաբար, շատ ուսումնական հաստատություններ բազմազանեցնում են առաջարկվող ծրագրերը և մատուցման եղանակները, նոր տեխնոլոգիաների ու բաց կրթական ռեսուրսների միջոցով առաջարկում բոլորին հասանելի ուսման և ուսուցման նորարարական եղանակներով մատուցվող կրթական բաղադրիչներ:

ԿՓԿՀ այնքանով է ուժեղ, որ կարող է օգտագործվել բոլոր ցկյանս ուսումնառության համատեքստերում՝ կիրառելով կրեդիտների բաշխման, ճանաչման, կուտակման և փոխանցման միևնույն սկզբունքները: Այսպես, ինչպես ծրագրերի բաղադրիչ մասերին է հատկացվում կրեդիտներ, նույն կերպ կրեդիտներ բաշխվում են նաև բաց ուսուցման և ցկյանս ուսումնառության այլ մոդելներին, որոնք, որպես կանոն, անհրաժեշտ են ուսումնառության սահմանված վերջնարդյունքներին հասնելու համար:

Բոլոր «պաշտոնապես» որակ ապահովող բարձրագույն կրթության

տրամադրող հաստատությունները (այն է՝ նույն կերպ իրականացվող և ավանդական բարձրագույն ուսումնական հաստատությունների նույն չափանիշները բավարարող), ինչպիսին են բաց ուսուցմամբ, խրախուսվում են օգտագործել ԿՓԿՀ նույն թափանցիկ մեխանիզմների կիրառմամբ, ինչպես նկարագրված է սույն Ուղեցույցում: Սա մեծապես կդյուրացնի ուսուցման տարբեր եղանակների, ճանաչման և փոխանցման միջև անցումը և կավելացնի սովորողի և շահագրգիռ կողմի՝ բաց ուսուցման վերջնարդյունքների հանդեպ վստահությունը:

Բարձրագույն կրթության բոլոր ձևերին՝ ներառյալ շարունակական և մասնագիտական կրթությունը, տրամադրվող կրեդիտները կարող են ճանաչվել և կուտակվել կամ չկուտակվել որակավորման ստացման համար՝ կախված սովորողի ցանկությունից և/կամ որակավորում տրամադրելու պահանջներից: Որոշ անկախ սովորողներ կարող են հետաքրքրված լինել ընտրելու միայն մեկ կրթական բաղադրիչ՝ առանց որակավորում ձեռք բերելու ցանկության, սակայն կրեդիտների բաշխումն ու գրանցումը կարող է նրանց թույլ տալ ցանկության դեպքում օգտագործել դրանք ապագայում:

Կրթության տվյալ մակարդակում բոլոր ձեռքբերումների արձանագրումն ու համապատասխան թվով ԿՓԿՀ կրեդիտների շնորհումը հնարավոր է դարձնում, որպեսզի ստացված կրթությունը ճանաչվի թափանցիկ, հավաստման ճանապարհով, այնպես, որ ստացված կրեդիտները նպաստեն ապագա որակավորմանը: Ձևական կրթության վավերացման ու ճանաչման գործիքները պետք է միտված լինեն ավելի բազմազան, ճկուն կրթական միջավայրի զարգացմանը՝ ընդունելով բաց կրթության նոր ձևեր, որոնք հնարավոր են դարձել տեխնոլոգիաների շնորհիվ: ԿՓԿՀ-ի ճիշտ օգտագործումը մեծապես կբարելավի և կդյուրացնի այս գործընթացը:

NotaBene

Շարունակական մասնագիտական զարգացումը (ՇՄԶ) մեծապես կարևորված է կանոնակարգվող մասնագիտություններով աշխատողների համար: Սա հատկապես վերաբերում է առողջապահական մասնագիտություններին: ՇՄԶ-ն ունի տրանսազգային ծավալ, որը հատկապես կարևոր է: Անկախ նրանից, թե կամավոր է թե պարտադիր՝ այն մասնագետների և տրամադրողների կողմից ընկալվում է նույնաբար՝ որպես ցկյանս ուսումնառության եղանակ: Այն ընդգրկում է ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունը: Մինչդեռ ՇՄԶ-ի տարրերը կարող են փոխարկելի լինել երկրորդ փուլի (մագիստրատուրայի) որակավորումներում կամ մասնագիտական դոկտորական աստիճաններում (կախված ազգային օրենսդրությունից)՝ ՇՄԶ-ն՝ որպես զուտ մասնագիտական պրակտիկա, ունի իր սեփական բնույթը. այն կարող է լինել ինքնակառավարվող և գործընկերների կողմից գնահատված ինքնավերլուծություն: Հենց ընդունելով աշխատունակությունը, աշխատանքի շարունակական հրավերը, մասնագիտական աշխատանքի ստանդարտների չափանիշները, սպառողների/հասարակության պաշտպանությունը և առողջապահական մասնագիտություններում հիվանդի անվտանգությունը, կարևոր է նշել, որ դրանց հասնելը պետք է լինի չափելի, ստուգելի և հավաստագրված ճանաչված/լիազորված մարմինի կողմից:

Թե ինչպես է պետք այս ամենին հասնել, ՇՄԶ ոլորտի ներսում մնում է քննարկման հարց: Թե՛ ՄՄՎՌԵԿՀ-ն, և թե՛ ԿՓԿՀ-ն ընկալվում են որպես հավաստագրի կարևորություն ունեցող, քանզի ՇՄԶ-ն կարող է գտնվել եվրոպական որակավորումների շրջանակի ցանկացած ութ մակարդակներում: Այդուհանդերձ, նշված երկու համակարգերի միակցումը դեռևս բավականաչափ խորաթափանց չէ, և տարբեր մասնագիտություններ ունեն տարբերվող մշակույթներ և ազգային ենթամշակույթներ: Եվրոպական կրեդիտային համակարգի կապերի վերաբերյալ քննարկումը շարունակական է, և հուսով ենք, որ այն կհանգեցնի ՇՄԶ-ի համար գործածվող կրեդիտների ավելի մեծ պարզության: Միևնույն ժամանակ ՇՄԶ տրամադրողները եվրոպական որակավորումների շրջանակի հինգից մինչև ութ մակարդակներում խրախուսվում են հաշվի առնել ԿՓԿՀ կրեդիտների համապատասխանելիությունը կրեդիտների բաժանելիության, ճանաչման, կուտակման և փոխանցման նպատակով՝ օգտագործելով այս Ուղեցույցում նշված մեթոդաբանությունը:

## 5.2 Նախկին կրթության ճանաչում և փորձառություն

Բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է իրավասու լինեն ուսուցման ֆորմալ համատեքստից դուրս աշխատանքային փորձի, կամավորական աշխատանքի, ուսանողական մասնակցության, անկախ ուսումնառության միջոցով ձեռք բերված ուսումնական վերջնարդյունքների համար կրեդիտներ շնորհել, եթե այդ ուսումնական վերջնարդյունքները բավարարում են իրենց որակավորումների կամ դասընթացների պահանջները: Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության միջոցով ձեռք բերված ուսումնառության վերջնարդյունքների ճանաչումը պետք է ավտոմատ կերպով հաջորդի պաշտոնական ծրագրին՝ շնորհելով նույն թվով ԿՓԿՀ կրեդիտներ:

Ինչպես ֆորմալ կրթության դեպքում, կրեդիտների շնորհմանը նախորդում է գնահատումը՝ ստուգելու համար ուսումնառության վերջնարդյունքները: Գնահատման մեթոդները և չափանիշները պետք է կառուցված լինեն չափելու համապատասխան մակարդակում ուսումնառության պահանջվող վերջնարդյունքների ձեռքբերումը՝ առանց հղում անելու որոշակի կրթական գործունեության կամ ծանրաբեռնվածության: Օրինակ՝ «դասարանում քննարկումների մասնակցությունը» որպես այդպիսին այլևս չի համարվում գնահատում, մինչդեռ «խմբի հետ համագործակցելիս փաստարկների մշակման» համար ուսումնառության համապատասխան վերջնարդյունքը կդառնա էական:

Յուրաքանչյուր ամբիոնում կամ առարկայի բնագավառում համապատասխան անձնակազմ պետք է նշանակվի, որը պետք է ունենա պաշտոնական լիազորություն և անցած լինի հատուկ վերապատրաստում՝ շնորհելու կրեդիտներ ֆորմալ համատեքստից դուրս ձեռք բերված ուսումնառության վերջնարդյունքների համար հաստատության կողմից սահմանված և հրապարակված թափանցիկ չափանիշների հիման վրա: Պետք է ընդունել, որ նրանցից ակնկալվում է համապատասխան ամբիոնի/ֆակուլտետի/ հաստատության հանձնաժողովին զեկուցել և արձանագրել իրենց որոշումները պարբերական զեկույցների միջոցով:

**NotaBene**

Գոյություն ունի **նախկին կրթության և փորձի ճանաչման գնահատման մեթոդների** լայն ընտրանի: Գնահատման գործիքներից մեկը ուսանողի անձնական գործերի փաթեթի մեթոդն է: Այս փաթեթները ներառում են փաստաթղթեր, որոնք սովորողները հավաքել են տարբեր ճանապարհներով ձեռք բերած անհատական հմտությունների բացահայտման նպատակով:
Անձնական գործերի փաթեթը հաշվի է առնում նյութերի մի հավաքածու, որը ստուգում է ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության նախկին փորձով ձեռք բերված հմտությունները ու գիտելիքները: Այս փաթեթը ներառում է գործատուներից և ղեկավարներից երաշխավորագրեր, այն կարող է ներառել նաև կատարողականության գնահատում, կենսագրություն և այլ փաստաթղթեր: Օգտագործելով փաստաթղթերի այս փաթեթը՝ գնահատողը վերլուծում է սովորողների կողմից ստացված տեղեկությունների շարքը: Սովորողները կարող են իրենց անձնական փաստաթղթերի ապացույց փաթեթի պատրաստման համար ստանալ օգնություն և խորհրդատվություն:

Հաստատությունները պետք է ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության համար ճանաչման քաղաքականություն մշակեն: Այս քաղաքականությունները պետք է ներառեն այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ խորհրդատվության, գնահատման արդյունքների վերաբերյալ սովորողներին տրամադրվող կարծիք և նրանց համար բողոքարկման հնարավորություն: Հաստատությունները նաև պետք է ստեղծեն ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության վերաբերյալ խորհրդատվության և ճանաչման հնարավորություններ: Դրանք կարող են ընդունել տարբեր ձևեր՝ կախված ազգային և ինստիտուցիոնալ պրակտիկայից (օրինակ՝ դրանք կարող են գոյություն ունենալ առանձին բարձրագույն ուսումնական հաստատություններում կամ որպես մի քանի հաստատությունների համատեղ կենտրոններ): Հաստատությունների քաղաքականությունը և փորձը պետք է ակնառու ձևով հրապարակվի իրենց կայքում:

Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ճանաչումն օգնում է բուհերին հասու լինել հասարակության լայն շերտերի համար: Մասնագիտական բնագավառում սովորողներին լայն հնարավորությունների ընձեռումը և ուսումնառության ոչ ավանդական միջավայրերի տեսականին օգնում են ցկյանս ուսումնառու-

թյունն իրականություն դարձնել: Հաստատությունները հատկապես պետք է բաց լինեն մասնագիտական կրթության և վերապատրաստման ճանաչման համար:

**Nota Bene**

Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությանը կրեդիտներ շնորհելու գործընթացն ունի չորս հիմնական փուլ: Դրանք են՝

- սկզբնական խորհրդատվություն և ուղորդում (թե ինչ է ծրագիրը պարունակում սովորողի համար, ոչ ֆորմալ/ինֆորմալ կրթության կրեդիտների սահմանները, ուսումնառության ծախսերը, սովորողի և դասախոսողի/խորհրդատուի դերերն ու պատասխանատվությունները և որակավորում ստանալու ուսումնառության տարբեր ուղիները),
- աջակցություն (անդրադարձ, ուսումնառության վերջնարդյունքների հասկանալը, ուսումնառության սեփական վերջնարդյունքներ սահմանելը, փաստերի հավաքագրումը և ընտրությունը),
- ճանաչում/գնահատում (ստացված ուսումնառության վերջնարդյունքների փաստերի գնահատում և գնահատման չափանիշներ),
- կրեդիտի շնորհում (այս գործընթացի միջոցով շնորհված կրեդիտը համարժեք է ֆորմալ կրթության արդյունքում ստացված կրեդիտին):

**Nota Bene**

Միջին մասնագիտական և վերապատրաստման ոլորտների եվրոպական կրեդիտային համակարգը (ՄՄԿՈԵԿՀ) հիմնադրվել է 2009թ.-ին եվրոպական խորհրդարանի և խորհրդի հանձնարարականով (2009/Գ 155/02):
ՄՄԿՈԵԿՀ-ն միտված է դյուրացնելու այն անհատների ուսումնառության գնահատված վերջնարդյունքների փոխանցումը, կուտակումը և ճանաչումը, ովքեր ցանկանում են ստանալ որակավորում միջին մասնագիտական և վերապատրաստման (ՄՄԿ) ոլորտում:
Ինչպես ԿՓԿՀ-ն, այնպես էլ ՄՄԿՈԵԿՀ-ն դյուրացնում է և աջակցում սովորողներին՝ հարթելու իրենց ուսումնառության սեփական ուղին կրեդիտների կուտակման միջոցով՝ անկախ այն բանից, թե ուսուցումն իրականացվում է մի որևէ կոնկրետ հաստատությունում, հաստատությունից մեկ այլ հաստատություն, երկրից երկիր.

Կրթության տարբեր ենթահամակարգերի միջև և ուսումնառության համատեքստերում (այն է՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն)՝ օգնելով նրանց կառուցել ուսումնառության իրենց անհատական ուղին ու փորձը:
Ինչպես ԿՓԿՀ-ն, ՄՄԿՄՈՒԿՀ-ն ևս հիմնված է 60 կրեդիտների գաղափարի վրա, սակայն կրեդիտների բաշխումն այլ է: ՄՄԿՄՈՒԿՀ-ն հաճախ կիրառված է ուսումնառության գնահատված վերջնարդյունքներն արձանագրելու և կուտակելու համար՝ առանց կրեդիտային միավորների փոխանցման: Այդ իսկ պատճառով կրեդիտների փոխանցման փոխարեն խորհուրդ է տրվում ուսումնառության ճանաչումը հիմնել ՄՄԿ ուսումնառության վերջնարդյունքների վրա:

# 6 ԿՓԿՀ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ



## ԿՓԿՀ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

**Այս բաժինը ներկայացնում է, թե ինչպես է ԿՓԿՀ-ն նպաստում բուհերում որակի բարձրացմանը և տալիս օրինակներ ԿՓԿՀ-ի իրականացման գնահատման համար:**

Որակի ապահովման առաջնային պատասխանատվությունն ընկած է յուրաքանչյուր հաստատության վրա, ինչպես համաձայնեցվել է Բոլոնիայի գործընթացում ներգրավված երկրների կրթության նախարարների կողմից:[19] Ներքին որակի ապահովումը ենթադրում է բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ձեռնարկվող բոլոր ընթացակարգերը, որոնք ուղղված են ապահովելու իրենց ծրագրերի և որակավորումների որակը համապատասխանությունը իրենց սեփական և այլ համապատասխան մարմինների՝ ինչպես օրինակ որակի ապահովման գործակալությունների առանձնահատկություններին: Որակի ապահովման գործակալությունների կողմից ձեռնարկված արտաքին որակի գնահատումները հաստատություններին տրամադրում են հետադարձ կապ, իսկ շահագրգիռ կողմերին՝ տեղեկատվություն: Որակի ապահովման սկզբունքները և գործընթացները կիրառվում են ուսումնառության և ուսուցման բոլոր եղանակներում (ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ, ուսուցման նոր եղանակներ, դասավանդում և գնահատում): *Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման չափանիշներն ու ուղենիշները*[20] աջակցում են ներքին և արտաքին որակի ապահովմանը:

[19] Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի իրականացում: Բեռլինում 2003թ.-ի սեպտեմբերի 19-ին կայացած բարձրագույն կրթության պատասխանատու նախարարների հանդիպման կոմյունիկե:
[20] http://www.enqa.eu/files/ESG_3edition%20(2).pdf

Nota bene

«ԵՎԶՈւ–ն բարձրագույն կրթության ոլորտում ներքին և արտաքին որակի ապահովման չափանիշների ու ուղենիշների փաթեթ է: ԵՎԶՈւ–ն որակի չափանիշներ չէ, ոչ էլ պարտադրանք է, թե ինչպես պետք է իրականացվեն որակի ապահովման գործընթացները. փոխարենը դրանք տրամադրում են ուղղորդում՝ ընդգրկելով այն ոլորտները, որոնք կենսական նշանակություն ունեն որակի հաջող ապահովման և բարձրագույն կրթության ուսումնառության միջավայրերում: ԵՎԶՈւ–ն պետք է հաշվի առնվի ավելի լայն համատեքստում, որը նաև ներառում է որակավորումների շրջանակները, ԿՓԿՀ և դիպլոմի հավելվածը, որոնք նույնպես նպաստում են ԵԲԿՏ–ում բարձրագույն կրթության թափանցիկության և փոխադարձ վստահության խթանմանը»:
1.2, 1.3, 1.4 չափանիշները և հարակից ուղենիշները վերաբերում են ԿՓԿՀ–ին առնչվող ոլորտներին (մասնավորապես ծրագրի մշակում, ուսանողակենտրոն ուսումնառություն, ուսուցում, գնահատում և ուսանողների ընդունում, առաջխաղացում, ճանաչում և հավաստագրում).

ԿՓԿՀ կիրառելու լավ փորձը կօգնի հաստատություններին բարելավել իրենց ծրագրերի որակը և իրենց կողմից առաջարկվող ուսումնառության չափելիության առաջարկը: Այսպիսով, ԿՓԿՀ կիրառումը պետք է վստահաբար որակ ապահովի համապատասխան գնահատման գործընթացների (օրինակ՝ մոնիթորինգ, ներքին և արտաքին որակի վերանայումներ, ինչպես նաև ուսանողների կարծիքների հավաքագրում) և որակի շարունակական բարելավման միջոցով: Որևէ ծրագրի արդյունավետության գնահատման համար (այդ թվում՝ ուսումնառության վերջնարդյունքները, ծանրաբեռնվածությունը և գնահատման մեթոդները), մի շարք միջոցառումներ պետք է գործի դրվեն: Դրանք կարող են ներառել դուրս մնալու կամ ձախողման բարձր ցուցանիշները կամ ավարտելու ավելի երկար ժամանակահատվածները: Ծրագիրը կարելի է արդյունավետ համարել, երբ վերջինիս նպատակներին հասնել են ճիշտ ժամանակին, այսինքն՝ երբ ուսանողները հասնում են ուսումնառության սահմանված վերջնարդյունքներին, կուտակում պահանջվող կրեդիտները և ստանում որակավորում, ինչպես նախատեսված է ծրագրով: Այնուամենայնիվ, ցանկացած վերլուծություն պետք է պատշաճ իրականացվի, առանձին տարրերին ընդադատորեն մոտենալու, քանի որ դրանք նույնպես կարող են ցույց տալ անար-

դյունավետ պլանավորում կամ ծրագրի մատուցում կամ ուսանողներին աջակցելու ոչ տեղին միջոցառումներ:

Հետևյալ ցուցիչները կարող են գործածվել ԿՓԿՀ իրականացման որակի գնահատման համար՝

- կրթական բաղադրիչներն արտահայտված են համապատասխան ուսումնառության վերջնարդյունքների համաձայն, և դրանց մակարդակի, կրեդիտների, մատուցման ու գնահատման վերաբերյալ հասանելի է պարզ տեղեկություն,
- դասընթացներն ավարտին կարող են հասցվել պաշտոնապես դրանց հատկացված ժամանակի ընթացքում (այսինքն՝ ծանրաբեռնվածությունը, որն համապատասխանում է մեկ ուսումնական տարուն, կիսամյակին, եռամսյակին կամ մեկ առանձին բաղադրիչ դասընթացին հարող աշխատանքային ծանրաբեռնվածությանը– իրատեսական է),
- տարեկան մոնիթորինգը ստուգում է ձեռքբերումների և ստացված արդյունքների ցանկացած տատանումները, ինչին հաջորդում է համապատասխան վերանայումը,
- ուսանողներին տրամադրվում է մանրամասն տեղեկատվություն և խորհրդատվություն, որպեսզի նրանք կարողանան հետևել առաջընթացի կանոններին, իրենց որակավորման համապատասխան մակարդակում օգտագործեն ճկուն ուղիներ և ընտրեն կր ական բաղադրիչները,
- ուսանողներին անմիջապես տեղեկացվում են նրանց արդյունքների մասին:

Շարժունակ ուսանողների և ճանաչման համար սա նշանակում է, որ.

- կրեդիտների փոխանցման գործընթացները ներառված են մոնիթորինգի, վերանայման և վավերացման ընթացակարգերում,
- կրեդիտների ճանաչման և փոխանցման հարցերի համար պատասխանատու համապատասխան անձնակազմ է նշանակված,
- ուսումնառության պայմանագրերն ավարտին են հասցվում բոլոր դեպքերում, դրանց մշակումը և դրանց վերաբերող հետագա ցանկացած փոփոխությունները ենթակա են հաստատման,
- ներգնա շարժունակ ուսանողներն ընտրում են կրթական բաղադրիչները առկա դասընթացների կատալոգից, նրանք գնահատվում են այնպես, ինչպես տվյալ բուհի ուսանողները,
- նրանց տրամադրվում է գնահատականների մանրամասն տեղեկատվությամբ ներդիր, որը պարու-

նակում է շնորհված կրեդիտները և գնահատականները.

- ճանաչում տրվում է հաջողությամբ ավարտած կրթական բաղադրիչներին հարող բոլոր կրեդիտներին՝ որպես վերջնական տարբերակով հաստատված ուսումնառության պայմանագրի մաս. արդյունքները տրամադրվում են և անմիջապես փոխանցվում,
- շնորհված գնահատականների մեկնաբանման համար գոյություն ունեն գնահատականների աղյուսակներ, որպեսզի բացի գնահատականներից, նաև կրեդիտները համապատասխանորեն արտացոլվեն ցանկացած ստացված վերջնական որակավորման մեջ:

Ուսանողական ներկայացուցիչները պետք է ակտիվ ներգրավված լինեն ԿՓԿՀ-ի որակի ապահովման գործընթացներում.

- ներքին որակի ապահովման մեջ, որտեղ ուսանողները տրամադրում են տեղեկատվություն (պարբերաբար պատասխանելով հարցումների, մասնակցելով ֆոկուս խմբերի), մասնակցում են հաստատությունների ինքնագնահատման հաշվետվությունների նախապատրաստման աշխատանքներին, ինչպես նաև ակտիվորեն ներգրավված են ներքին որակի ապահովման գործընթացներում և ԿՓԿՀ կրեդիտների բաշխման մոնիթորինգի պատասխանատու մարմիններում,
- արտաքին որակի ապահովման մեջ, որտեղ ուսանողները բարձրագույն ուսումնական հաստատությունների անկախ ծրագրերի՝ արտաքին վերանայման հանձնաժողովների խմբերի անդամներ են:

# 7

# ԿՓԿՀ-Ն ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ



## ԿՓԿՀ-Ն ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԿՓԿՀ կրեդիտների կիրառումն ապահովվում է այս Ուղեցույցում նշված սկզբունքների հիման վրա ձևավորված փաստաթղթերով: Այս բաժինը առաջարկում է այն տարրերը, որոնք պետք է ընդգրկված լինեն այդ փաստաթղթերում, քանի որ դրանք տեղեկության հաղորդման լայնորեն կիրառվող և ընդունված ձևն են, որ օգտակար է բոլոր ուսանողների (շարժունակ և ոչ շարժունակ ուսանողներ), ակադեմիական և վարչական անձնակազմի, գործատուների ու այլ շահառուների համար:

Ուսանողների կարիքներին ծառայելու համար՝ հաստատությունները պետք է թափանցիկ եղանակով արձանագրեն նրանց ձեռքբերումները, որը կարող է հեշտությամբ հասկացվել: Հենց այդ պատճառով այս Ուղեցույցը տրամադրում է տեղեկատվական կետերը, որոնք պետք է ընդգրկվեն շարժունության հիմնական փաստաթղթերում, որպեսզի խթանեն ավելի լավ պատկերացում տարբեր հաստատությունների և երկրների, ներքին ու արտաքին շահագրգիռ կողմերի միջև:

### 7.1 Դասընթացների ձեռնարկ

Դասընթացների ձեռնարկը ներառում է հաստատության ուսումնական միջավայրի վերաբերյալ մանրամասն, օգտագործողի համար դյուրին և արդի տեղեկատվություն, որը պետք է ուսանողներին հասանելի լինի ընդունելությունից առաջ և ողջ ուսումնառության ընթացքում, ինչը նրանց ճիշտ ընտրություն և ժամանակն արդյունավետ օգտագործելու հնարավորություն կտա: Այս տեղեկությունը վերաբերում է, օրինակ, առաջարկվող որակավորումներին, ուսումնառության, ուսուցման և գնահատման ընթացակարգերին, ծրագրերի մակարդակին, առանձին կրթական բաղադրիչներին և ուսումնական նյութերին: Դասընթացի ձեռնարկը պետք է ներառի այն մարդկանց անունները, որոնց կարելի է դիմել հարցերով:

Դասընթացի ձեռնարկը պետք է հրապարակվի հաստատության պաշտոնական կայքում՝ նշելով դասընթացի/առարկայի անվանումները ազգային լեզվով (կամ տարածաշրջանային համար ընդհանուր լեզվով, եթե տեղին է) և անգլերենով, որպեսզի բոլոր հետաքրքրված կող-

մերի համար այն հեշտ հասանելի լինի: Այն պետք է հրապարակվի նախապես, որպեսզի ապագա ուսանողները կարողանան ընտրություն կատարել:

Համառոտությունը ազդում է ձեռնարկի ծավալի ընտրության և տեղեկության տրամադրման հաջորդականության մեջ: Այդուհանդերձ, սույն առաջարկվող ընդհանուր կառուցվածքը հնարավորություն է տալիս ձեռնարկների համադրումը և բարելավում է դրանց թափանցիկությունը: Ամեն դեպքում այդ դասընթացի ձեռնարկը պետք է ներառի ընդհանուր տեղեկություն հաստատության, նրա ռեսուրսների և մատուցած ծառայությունների, ինչպես նաև իր կողմից առաջարկվող ծրագրերի և առանձին կրթական բաղադրիչների վերաբերյալ ակադեմիական տեղեկատվություն:

CourseCatalogue

**Դասընթացի ձեռնարկի համար առաջարկվող տարրեր**

***Ընդհանուր տեղեկություն***

- անվանում և հասցե
- հաստատության նկարագիր (ներառյալ տեսակն ու կարգավիճակը)
- իրավասու ակադեմիական մարմին
- ուսումնական տարվա օրացույց
- առաջարկվող ծրագրերի ցանկը
- ընդունելության պահանջներ՝ ներառյալ լեզվական բավարարվածություն և գրանցման ընթացակարգերը
- կրեդիտային շարժունության և նախկին կրթության (ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ) ճանաչման ոլորտում միջոցառումներ
- ԿՓԿՀ կրեդիտների բաշխման քաղաքականություն (ինստիտուցիոնալ կրեդիտային շրջանակ)
- ակադեմիական խորհրդատվական միջոցառումներ

***Ռեսուրսներ և ծառայություններ***

- ուսանողների գործերով զբաղվող գրասենյակ
- բնակարանային տեղավորում
- կերակուր

- կեցության ծախսեր
- ուսանողներին տրամադրվող ֆինանսական աջակցություն
- բժշկական օգնություն
- ապահովագրություն
- հաշմանդամություն և հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար նախատեսված հարմարություններ
- ուսումնառության հարմարություններ
- միջազգային շարժունության հնարավորություններ
- ներգնա շարժունակ ուսանողների համար գործնական տեղեկություն
- լեզվի դասընթացներ
- աշխատանքի տեղավորման հնարավորություններ
- սպորտի և ժամանցի հարմարություններ
- ուսանողական միություններ

**Ծրագրերի վերաբերյալ տեղեկություն**

- շնորհվող որակավորում
- ծրագրի երկարություն
- կրեդիտների թիվ
- որակավորման մակարդակ՝ համաձայն Որակավորումների ազգային և եվրոպական որակավորումների շրջանակների
- ուսումնառության ոլորտ(ներ)ը (օր.՝ ISCED-F)
- ընդունելության հատուկ պահանջներ (առկայության դեպքում)
- նախկին կրթության ճանաչմանն ուղղված միջոցառումներ (ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ) (առկայության դեպքում)
- որակավորման պահանջներ և կանոնակարգեր՝ ներառյալ ուսումնառությունն ավարտելու պահանջներ (առկայության դեպքում)
- ծրագրի ուղղվածություն[31]
- ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներ

[31] Տե՛ս ծրագրի մշակմանը նվիրված գլուխը:

- ծրագրի կառուցվածքի կրեդիտային սխեման (առկա ուսուցմամբ մեկ ուսումնական տարին համարժեք է 60 ԿՓԿՀ կրեդիտների)
- ուսման եղանակը (առկա/հեռակա/էլ–ուսուցում /...)
- քննությունների կանոնակարգն ու գնահատման սանդղակը
- պարտադիր կամ կամընտրական շարժունության պատուհաններ (առկայության դեպքում)
- աշխատանքի տեղավորում (ներ) (առկայության դեպքում)
- աշխատավայրում հիմնված ուսումնառություն
- ծրագրի ղեկավար կամ նրան համարժեք անձ
- շրջանավարտների զբաղվածության հնարավորություններ
- հետագա ուսման հնարավորություն

Համատեղ ծրագրերի դեպքում խորհուրդ են տրվում որոշ լրացուցիչ տարրեր՝
- դիպլոմի և դիպլոմի հավելվածի վերաբերյալ տեղեկատվություն (համատեղ/կրկնակի/բազմակի)
- կոնսորցիումի անդամներն ու նրանց դերը
- ծրագրի շարժունության կառուցվածքը

**Անհատական կրթական բաղադրիչների վերաբերյալ տեղեկություն՝**
- դասիչ
- վերնագիր
- տեսակ (պարտադիր/կամընտրական)
- փուլ (կարճաժամկետ/առաջին/երկրորդ/երրորդ)
- ուսման այն տարին, որի ընթացքում մատուցվելու է տվյալ բաղադրիչը (առկայության դեպքում)
- բաղադրիչի դասավանդման կիսամյակ/եռամսյակ
- հատկացվող ԿՓԿՀ կրեդիտների թիվը
- դասախոս(ներ)ի անունները

CourseCatalogue

- ուսումնառության վերջնարդյունքները
- մատուցման եղանակ (դեմ առ դեմ/հեռավար ուսուցում/...)
- նախադրյալներ և վավերապայմաններ (անհրաժեշտության դեպքում)
- դասընթացի բովանդակություն
- առաջարկվող կամ պարտադիր գրականության ցանկ և ուսումնառության ռեսուրսներ/գործիքներ
- նախատեսվող ուսումնական միջոցառումներ և դասավանդման մեթոդներ
- գնահատման մեթոդներն ու չափանիշները
- դասավանդման լեզուն

### 7.2 ԿՓԿՀ և կրեդիտային շարժունության փաստաթղթեր

Ուսումնառության պայմանագիրը դա՝ իրականացվող ողջ կրթական գործունեության վերաբերյալ պաշտոնական և պարտադիր պարտավորություն է ուսանողի, ուղարկող հաստատության և հյուրընկալող հաստատության/ կազմակերպության/ ընկերության միջև:

Ուսումնառության պայմանագրի հաստատումը և դրա փոփոխությունները հնարավոր են էլեկտրոնային ստորագրությունների կամ սկանավորված և էլեկտրոնային եղանակով ուղարկված ստորագրությունների միջոցով՝ ըստ ինստիտուցիոնալ կանոնակարգերի կամ փորձառության:

### 7.2.1 Ուսումնառության պայմանագիր կրեդիտային շարժունության ուսման փուլում

***Ուսման կրեդիտային շարժունության Ուսումնառության պայմանագրի համար առաջարկվող փաստաթղթի ուսանողի անձնական ու կոնտակտային տվյալները***

- ուղարկող և ընդունող հաստատությունների անվանումները և/կամ վարչական կոնտակտային անձանց անունները ու հասցեները
- ուղարկող հաստատությունում ուսանողի մասնագիտացման ոլորտը (ISCED–F կոդը)
- ուսման փուլ (կարճաժամկետ/բակալավրիատ/մագիստրատուրա/դոկտորանտուրա փուլ)
- ընդունող հաստատությունում ուսման ժամանակահատված (–ից/մինչև)
- ակնկալվող ուսման ծրագիր՝ ընդունող հաստատության դասընթացների ծանրաչափերն ու ուսանողի կողմից ընտրված կրթական բաղադրիչները պետք է լինեն իրար հետ կապված (դասընթացով և ԿՓԿՀ կրեդիտներով)
- ուղարկող հաստատության կրթական այն բաղադրիչները, որոնցից ուսանողը կազատվի, երբ ընտրված բաղադրիչները հաջողությամբ ավարտին հասցնի, կամ պահանջվի, որ շարժունության ժամկետը կճանաչվի որպես մի ամբողջություն փոխարեն՝ սա կլինի շարժունության պատուհանների դեպքը և կրթական այն ծրագրերի, որոնք ինտեգրում են արտասահմանում ապրելու ժամանակահատվածը).
- երեք կողմերի ստորագրությունները (ուսանող, ուղարկող և ընդունող հաստատությունների ներկայացուցիչները)

### 7.2.2 Ուսումնառության պայմանագիր աշխատանքի տեղավորման համար

Ուսումնառության պայմանագրի առկայությունը նաև կարևոր է աշխատանքի տեղավորման պարագայում որպես պարտադիր փաստաթուղթ, որն ընդգծում է այն կրթական գործունեությունը, որը ուսանողի կողմից կիրականացվի տվյալ կրթական ծրագրի շրջանակներում:

Ընդունող կազմակերպության պարտավորվում է պրակտիկայի ընթացքում ուսանողին ապահովելու որակյալ աշխատատեղով, որը կարևոր է ուսանողի ուսումնառության հստակ սահմանված վերջնարդյունքների առումով, և աշխատանքի տեղավորման ավարտից հետո տալ աշխատավայրից վկայական: Ուղարկող հաստատության պարտավորությունն է ապահովել պրակտիկայի համար ընտրված աշխատատեղի համապատասխանությունը և որակը, նաև վերահսկելը ուսանողի առաջադիմությունը և հաջողությամբ ավարտված ուսումնառության վերջնարդյունքների դիմաց շնորհել կրեդիտներ է:

Աշխատանքի տեղավորման համար Ուսումնառության պայմանագիրը պետք է ստորագրվի երեք կողմերի ներկայացուցիչների կողմից՝ ուսանող, ուղարկող հաստատություն և ընդունող կազմակերպություն/ընկերություն:

***Աշխատանքի տեղավորման Ուսումնառության պայմանագրի համար առաջարկվող դաշտեր***

- ուսանողի անուն ու կոնտակտային տվյալներ
- ուղարկող և հյուրընկալող հաստատության/ընկերության և այլոց կոնտակտային անձանց անուններ ու հասցեներ
- ուղարկող հաստատությունում ուսանողի ուսումնասիրության առարկա (ISCED-F կոդեր)
- ուսման փուլ (կարճաժամկետ/առաջին/երկրորդ/երրորդ)
- հաստատության/ընկերության տեսակ (սեփական/հանրային/և այլն)
- ընդունող հաստատությունում վերապատրաստման ժամանակահատվածը (-ից/մինչև) և ԿՓԿՀ կրեդիտներ
- վերապատրաստման ավարտին վերապատրաստվողի կողմից անհրաժեշտ ուսումնառության վերջնարդյունքներ
- վերապատրաստման ժամանակահատվածի մանրամասն ծրագիր՝ ներառյալ առաջադրանքները/մատուցվող նյութեր
- շաբաթական աշխատանքային ժամերի քանակ
- աշխատավայրում գործածվող լեզվի հմտության մակարդակ, որ ուսանողն ունի կամ համաձայնվում է ձեռք բերել ուսումնական ժամանակահատվածի սկզբին (տեղեկության դեպքում)
- մշտադիտարկման միջոցառումներ և գնահատման պլան
- աշխատանքի տեղավորման համար Ուսումնառության պայմանագրի դրույթներում տեղ գտած փոփոխություններ
- ուղարկող հաստատությունում ճանաչման ընթացակարգեր
- երեք կողմերի ստորագրություններ (ուսանող, ուղարկող հաստատություն և ընդունող հաստատության/ընկերության ներկայացուցիչներ), ինչպես նաև ղեկավարինը)

## 7.3 Գնահատականների ներդիր

Գնահատականների ներդիրը դա ուսանողների ուսման առաջընթացի վերաբերյալ արձանագրություն է, որում ներառված է տեղեկություն անցած կրթական բաղադրիչների, կրեդիտներ քանակի և ստացած գնահատականների վերաբերյալ:

Քանի որ ներդիրն առաջադիմությունը արձանագրելու և ուսումնառության ձեռքբերումները ճանաչելու

համար կարևոր փաստաթուղթ է, ապա անհրաժեշտ է որոշել, թե ով է պատասխանատու դրա պատրաստման և տրամադրման համար: Հաստատությունների մեծ մասը գնահատականների ներդիրը պատրաստում են իրենց ինստիտուցիոնալ տվյալների բազայի հիման վրա: Կարևոր է հաշվի առնել, որ ներդիրը կարող է նաև կիրառվել այլ համատեքստերում, ուստի տեղեկությունը պետք է տրամադրվի թափանցիկ, ամբողջական և հստակ ձևով:

Կրեդիտային շարժունության դեպքում ընդունող հաստատությունը բոլոր շարժունակ ուսանողներին տրամադրում է գնահատականների ներդիր և ուսման ավարտին նաև ուղարկող հաստատությանը՝ պաշտոնապես հավաստելու շարժունության ժամանակահատվածում ավարտված աշխատանքը, ձեռ-

CourseCatalogue

**Գնահատականների ներդիրում ներառվող կետերը**

- ուսանողի անուն
- ուսանողի անձը հաստատող փաստաթուղթ կամ կրտսակոդային տվյալներ (առկայության դեպքում)
- հաստատության անվանում ու կոնտակտային տվյալներ
- ուսանողի ուսումնառության առարկան ու ծրագրի անվանում
- ուսման ներկա տարին
- հաստատությունում անցած կրթական բաղադրիչները (իրենց դասիչներով, կրեդիտներով և գնահատականներով)
- ինստիտուցիոնալ գնահատման համակարգի նկարագիր
- նշված հղում արվող խմբին տրվող գնահատականների բաշխման վերաբերյալ տեղեկություն
- տրման ամսաթիվ և պատասխանատու անձի ստորագրություն

րիված կրեդիտները և գնահատականները: Սա պետք է ուղարկվի ուսանողի արդյունքների հրապարակումից հետո ողջամիտ կարճ ժամկետում:[12]

Ուղարկող հաստատությունը ողջամիտ ժամանակահատվածում պետք է ուսանողին տրամադրի գնահատականների ներդիր (կամ համարժեք փաստաթուղթ/տվյալների բազա)՝ առանց հավելյալ պահանջների: Սա նպաստում է արտերկրում շարժունության ժամանակահատվածի ընթացքում ստացված վերջնարդյունքների ճանաչմանը:

Ուսման շարժունության համար խորհուրդ է տրվում ներառել բաղադրիչներ, որոնք արդեն փոխարինվել են ուսանողի մայր բուհի կրթական ծրագրում, դրանց համապատասխան կրեդիտների քանակը, և, անհրաժեշտության դեպքում արտերկրում ուսանողի ստացած գնահատականների բացատրությունը: Երբ շարժունության ժամկետը ճանաչվում է որպես մի ամբողջություն, այլ ոչ թե բաղադրիչ առ բաղադրիչ, ուղարկող հաստատությունը պետք է պարզապես արձանագրի կրեդիտների թիվը, գնահատականները (որտեղ կիրառելի է) և ուսումնառության վերջնարդյունքները՝ սահմանված ողջ շարժունության ժամանակահատվածի համար:

Վերապատրաստումների դեպքում ուղարկող հաստատության գնահատականների ներդիրը առնվազն կներառի շարժունությունից առաջ ստորագրված Ուսումնառության պայմանագրով համաձայնեցված ճանաչման ընթացակարգերը կատարելու համար անհրաժեշտ տեղեկություն: Ավելին կարող է ներառել կոնկրետ թվով կրեդիտներ, գնահատական և այլն:

### 7.4 Աշխատանքային պրակտիկայի վկայական

Աշխատանքային պրակտիկայի վերաբերյալ վկայականը միտված է տրամադրելու թափանցիկություն և լուսաբանելու ուսանողի աշխատանքի փորձի արժեքը: Այս փաստաթուղթը տրամադրվում է ընդունող կազմակերպության/ձեռնարկության կողմից վերապատրաստվողի կողմից աշխատանքային պրակտիկայի ավարտին և կարող է ուղեկցվել այլ փաստաթղթերով, ինչպես օրինակ՝ երաշխավորագրով:

[12] Տե՛ս Կրեդիտային շարժունության և ճանաչման մասը:

CourseCatalogue

***Աշխատանքային պրակտիկայի վկայականի համար առաջարկվող դաշտեր***

- ուսանողի անուն
- կազմակերպության/ձեռնարկության անուն
- կազմակերպության/ձեռնարկության կոնտակտային տվյալներ (փողոց, քաղաք, երկիր, հեռախոս, էլ-փոստ հասցե, կայք)
- կազմակերպության/ձեռնարկության տեսակը (անհատական/հանրային/հարակից ոլորտ/...)
- աշխատանքային պրակտիկայի սկիզբ ու ավարտ
- պրակտիկայի մանրամասն ծրագիր՝ նշելով առաջադրանքները
- գիտելիք, հմտություններ (մտավոր և գործնական) և ձեռք բերված կարողություններ (ուսումնառության վերջնարդյունքներ)
- ուսանողի կատարողականության գնահատում
- տրամադրման ամսաթիվ, ընդունող կազմակերպության/ձեռնարկության պատասխանատու անձի անուն ու ստորագրություն



## ԵՐԱԺՇՏԻՔԻ ԽՈՒՄԲ

Այս ուղեցույցը մշակվել է վերջին տարիների ընթացքում Բոլոնիայի գործընթացի համատեքստում և առանձին երկրների կողմից արված աշխատանքների արդյունքում: Անհնար կլիներ նշել այն բոլոր կազմակերպությունները և անհատների անունները, որոնք իրականացել են այս ամենը:

Եվրոպական հանձնաժողովը մասնավորապես ցանկանում է շնորհակալություն հայտնել աշխատանքային խմբի անդամներին, որ առաջադրվել են ԵԲԿՏ երկրների և մասնակից կազմակերպությունների կողմից` ԿՓԿՀ-ից ուղեցույցը վերանայելու և իրենց աջակցության ու նվիրվածության համար:

Իվան Բաքին (Ուկրաինա)
Թիմ Բիրտվիսլ
(Միացյալ թագավորություն)
Ռեգինե Բոլթեր (Ավստրիա)
Հովարդ Դեյվիս (Համալսարանների եվրոպական ասոցիացիա – ՀԵԱ)
Բեատրիս Դելպուշ (Ֆրանսիա)
Ռոզա Դումբրավեանու (Մոլդովա)
Լյուք Ֆրանսուա (Բելգիա)
Ֆոլկեր Գեհմլիխ (Գերմանիա)
Ներսես Գևորգյան (Հայաստան)
Ջուդիթ Հիդասի (Հունգարիա)
Մարիա Քելո (Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական միություն - ԲԿՈԱԵՄ)
Էլիանե Քոթլեր (Ֆրանսիա)
Սանդրա Կալզե (Եվրոպական համալսարանների ասոցիացիա )
Ֆրեդրիկ Լունդքվիստ (Շվեդիա)
Ռայմոնդա Մարկեվիչիենե (Լիտվա)
Լենե Օֆթեդալ (Նորվեգիա)
Ջոն Ռեյլի (Միացյալ թագավորություն)
Մարիա Սոֆիա Դամիանի (Իտալիա)
Էնթոնի Վիկերս (Միացյալ թագավորություն)
Նեվենա Վուկսանովիչ (Եվրոպական ուսանողական միություն – ԵՈՒՄ)
Ռոբերտ Վագենար (Նիդերլանդներ)

# ՀԱՎԵԼՎԱԾ 1
# ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԿՓԿՀ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



# ԲԱՌԱՐԱՆ

## Ա

**Աշխատանքի վրա հիմնված կրթություն**

Աշխատանքի վրա հիմնված կրթությունը ուսումնառություն է, որը մատուցվում է աշխատավայրում որևէ համալսարանի, քոլեջի կամ այլ վերապատրաստում տրամադրողի կողմից, սովորաբար նույն հիմնարկությունից որևէ անձի հսկողության ներքո, ինչպես նաև հիմնարկից դուրս արհեստավարժ ուսուցչի ներկայությամբ:[23]

**Աշխատանքային ծանրաբեռնվածություն**

Աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվարկված ժամանակահատված է, որը սովորաբար սովորողներից պահանջվում է ուսումնառության գործունեությունը (օրինակ՝ դասախոսությունները, սեմինարները, ծրագրերը, գործնական աշխատանքները, աշխատանքային պրակտիկա, անհատական ուսումնասիրությունը), ավարտելու համար, որոնք ֆորմալ կրթական միջավայրերում պահանջվում են ուսումնառության սահմանված վերջնարդյունքներին հասնելու համար: Մեկ ուսումնական տարվա առկա ուսուցման աշխատանքային ծանրաբեռնվածության համապատասխանեցումը 60 կրեդիտներին հաճախ ձևակերպվում է ազգային իրավական դրույթներով: Ընդհանուր առմամբ ուսանողների ծանրաբեռնվածությունը մեկ ուստարվա համար տատանվում է 1500 ժամից 1800 ժամ, ինչը նշանակում է, որ մեկ կրեդիտը համապատասխանում է 25–30 ժամվա աշխատանքի: Պետք է ընդունել, որ սա ներկայացնում է նորմալ ծանրաբեռնվածությունը, և որ անհատ սովորողների դեպքում ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու համար՝ տրամադրված ժամանակը կարող է տարբեր լինել:

**Ազատ շարժվող ուսանող**

Ազատ շարժվող ուսանողը կրեդիտային շարժունության և կազմակերպված ուսանողական շարժունության ծրագրից դուրս մասնակցող ուսանողն է (ինչպես օրինակ՝ «Էրազմուս+» ծրագիրը): Ազատ շարժվող ուսանողն ինքն է ընտրում հյուրընկալող հաստատու-

[23] http://www.sfc.ac.uk/housekeeping/glossary/glossary.aspx

թյունը և այդ հաստատությունում կազմակերպում իր կրեդիտային շարժունությունը:

### Առաջընթաց

Առաջընթացը գործընթաց է, որը հնարավորություն է տալիս սովորողին անցնել որակավորման մեկ փուլից մյուսին և մուտք ունենալ կրթական ծրագրերին, որոնք պատրաստում են ավելի բարձր մակարդակի որակավորման համար, քան այն մեկը, որը սովորողն արդեն ունի:

### Առաջընթացի կանոններ

Առաջընթացի կանոնները որակավորումների սահմաններում և դեպի այլ որակավորումներ սովորողների առաջխաղացման համար պայմաններ սահմանող կանոնների խումբ են:

## Բ

### Բաց կրթական ռեսուրսներ (ԲԿՌ)

Բաց կրթական ռեսուրսները թվայնացված նյութեր են, որոնք անվճար և հասանելի առաջարկվում են կրթվողներին, ուսանողներին և ինքնուսներին՝ ուսուցման, ուսումնառության և հետազոտության համար օգտագործելու և վերաօգտագործելու նպատակով. այն ներառում է ուսումնառության բովանդակություն, բովանդակությունը զարգացնելու, օգտագործելու և բաշխելու համար ծրագրային գործիքներ, ինչպես նաև ռեսուրսների իրականացում, ինչպես օրինակ՝ բաց լիցենզիաներ: ԲԿՌ-ն նաև վերաբերում է կուտակված թվային ակտիվներին, որ կարող են ճշգրտվել, ու որոնք օգուտ են բերում առանց սահմանափակելու մյուսների կողմից դրանք օգտագործելու հնարավորությունները:[24]

## Գ

### Գնահատման մեթոդներ

Գնահատման մեթոդները ներառում են գրավոր, բանավոր և պրակտիկ թեստավորումների/ քննությունների, ծրագրերի, կատարողականության և ուսանողների անձնական գործերի փաթեթների ամբողջությունը, որը կիրառվում է սովորողի առաջընթացը գնահատելու և մի որևէ կրթական բաղադրիչի (միավոր/մոդուլ) ուսումնառության վերջնարդյունքները հաստատելու համար:

[24] Նույն տեղում:

**Գնահատման չափանիշներ**

Գնահատման չափանիշները նկարագրում են է, թե որ մակարդակում ինչ է ուսանողից ակնկալվում կատարել, ուսումնառության որևէ վերջնարդյունքին հասնելու համար:

Կրթական որևէ ծրագրի համար կիրառվող գնահատման մեթոդները և չափանիշները պետք է լինեն համապատասխան սահմանված ուսումնառության վերջնարդյունքներին և տեղի ունեցած ուսումնառության գործունեությանը:

**Գնահատականների բաշխման աղյուսակ**

Գնահատականների բաշխման աղյուսակները ցույց են տալիս, թե ինչպես է տվյալ հաստատությունում կիրառվող գոյություն ունեցող ազգային կամ ինստիտուցիոնալ գնահատման սանդղակները, արդյոք բաց մուտքային, թե ընտրական համակարգերի միջոցով, և թույլ են տալիս համեմատել այլ հաստատության զուգահեռաբար ընտրված հղման խմբի գնահատականների վիճակագրական բաշխման հետ: Դրանք ներկայացնում են դրական գնահատականների (անցողիկ և անցողիկից բարձր) վիճակագրական բաշխումը՝ շնորհված կոնկրետ հաստատությունում յուրաքանչյուր առարկայի համար:

**Գնահատականների ներդիր**

Գնահատականների ներդիրը ուսման մեջ ուսանողների առաջընթացի անհապաղ արձանագրումն է, որը ներառում է վերցրած կրթական բաղադրիչները, ստացած ԿՓԿՀ կրեդիտների թիվը, նրանց շնորհված գնահատականները: Այն առաջընթացն ու ուսումնառության ձեռքբերումները՝ ներառյալ ուսանողների շարժունությունը, արձանագրելու կարևոր փաստաթուղթ է: Հաստատությունների մեծ մասը գնահատականների ներդիր տրամադրում են ն իրենց տվյալների բազայից:

Դ

**Դասընթացի կատալոգ**

Դասընթացի ձեռնարկը ներառում է հաստատության կրթական միջավայրի վերաբերյալ մանրամասն, հեշտ ընթեռնելի և արդի տեղեկատվություն (ընդհանուր տեղեկություն հաստատության վերաբերյալ, վերջինիս ռեսուրսներն ու մատուցած ծառայությունները, ինչպես նաև առաջարկվող ծրագրերի և առանձին կրթական բաղադրիչների վերաբերյալ ակադեմիական տեղեկություն), որը պետք է ուսանողներին հասու լինի նախքան ընդունվելն ու իրենց ուսման ողջ ընթացքում՝ նրանց հնարավորություն ընձեռելով կատարել ճիշտ ընտրություններ և առավելապես արդյունավետ օգտագործել ժամանակը:

Դասընթացի կատալոգը պետք է հրապարակվի հաստատության կայքում՝ նշելով դասընթացի/ առարկայի վերնագրերն ազգային լեզվով (կամ հարկ եղած դեպքում տարածաշրջանային լեզվով) և անգլերենով, որպեսզի հետաքրքրված բոլոր կողմերի համար այն լինի հեշտ հասանելի: Հաստատությունը ազատ է կատալոգի ձևաչափի ընտրության, ինչպես նաև տեղեկատվության հերթականության հարցում: Այն պետք է բավականաչափ վաղ հրապարակվի, որպեսզի ապագա, հավանական ուսանողները ընտրություն կատարեն:

**Դասընթացի միավոր**

Դասընթացի միավորը ամբողջական, պաշտոնապես կառուցված կրթական բաղադրիչ է: Այն պետք է ունենա ուսումնառության վերջնարդյունքների հետևողական և հստակ շարք, ուսումնառության սահմանված գործունեություն, որը համապատասխանում է հատկացված ուսումնական պլանին և գնահատման չափանիշներին:

**Դիպլոմի հավելված**

Դիպլոմի հավելվածը (ԴՀ) փաստաթուղթ է, որը կցվում է բարձրագույն կրթության դիպլոմին՝ ներառելով անձի կողմից հաջողությամբ ավարտած ուսումնառության բնույթի, մակարդակի, բովանդակության և կարգավիճակի նկարագրությունը: Այն կազմվում է բարձրագույն կրթության հաստատությունների կողմից՝ համաձայն Եվրոպական հանձնաժողովի, Եվրոպայի խորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից համաձայնեցված չափանիշների: Դիպլոմի հավելվածը Europass-ի թափանցիկության գործիքաշարից է:

Այն ներառում է հետևյալ ութ բաժինները՝

- տեղեկություն որակավորում ստացած անձի մասին
- տեղեկություն որակավորման մասին
- տեղեկություն որակավորման մակարդակի մասին
- տեղեկություն բովանդակության ու ձեռք բերված արդյունքների մասին
- հավելվածի վավերականություն
- տեղեկություն ազգային բարձրագույն կրթական համակարգի (տրամադրված ազգային տեղեկատվական կենտրոնների կողմից)
- այլ լրացուցիչ համապատասխան տեղեկություն:

Բոլոնիայի գործընթացի մասնակից բոլոր երկրների շրջանավարտներն իրավունք ունեն ավտոմատ և անվճար ստանալ Դիպլոմի հավելված՝ եվրոպական հիմնական լեզվով:

**Դուբլինյան նկարագրիչներ**

Դուբլինյան նկարագրիչները 2003թ–ին ներկայացված և 2005թ–ին ընդունված Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակի փուլային նկարագիրչներ են (կամ «Մակարդակի նկարագրիչներ»): Դրանք տիպային և ընդհանրական պնդումներ են, թե ինչպիսի ձեռքբերումներ և կարողություններ են ակնկալվում (Բոլոնիա) փուլի կամ մակարդակի ավարտին: Նկարագրիչները սահմանվում են ըստ կարողության մակարդակների, այլ ոչ թե ուսումնառության վերջնարդյունքների, և դրանք հնարավորություն են տալիս ավելի լայն ու ընդհանուր կերպով տարբերակել փուլերը: Մակարդակի նկարագրիչը ներառում է հետևյալ հինգ բաղադրիչները՝

- գիտելիք և իմացություն
- գիտելիքի և իմացության կիրառում
- դատողություններ անել
- հաղորդակցություն
- ցկյանս ուսումնառության հմտություններ

**Եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ (ԿՓԿՀ)**

Եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը ուսանողակենտրոն համակարգ է՝ հիմնված ուսումնառության, ուսուցման և գնահատման գործընթացների թափանցիկության սկզբունքի վրա: Դրա նպատակն է հեշտացնել կրթական ծրագրերի մշակումը, մատուցումն ու գնահատումը և ուսանողների շարժունությունը՝ ճանաչելով ուսումնառության ձեռքբերումները, որակավորումները և ուսումնառության ժամանակահատվածները:

**Եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ)**

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքը (ԵԲԿՏ) մեկնարկել է Բոլոնիայի գործընթացի տասնամյա տարելիցին՝ 2010թ.-ի մարտին Բուդապեշտ–Վիեննա նախարարների համաժողովի ժամանակ: 1999թ.–ից Բոլոնիայի գործընթացի գործարկումից ի վեր հիմնվելով վերջինիս հիմնական նպատակի վրա,՝ ԵԲԿՏ-ն կոչված է Եվրոպայում ապահովել բարձրագույն կրթության ավելի համեմատելի, համադրելի, համահունչ և գրավիչ համակարգեր:

**Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակ (ՈՇ–ԵԲԿՏ)**

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում գոյություն ունեն երկու մակարդակների որակավորումների շրջանակներ: 2005թ.-ին ընդունվել է

համընդհանուր շրջանակը (ՌՇ-ԵԲԿՏ) և բոլոր անդամ երկրները պարտավորվել են մշակել ազգային որակավորումների շրջանակներ, որոնք համադրելի կլինեն համընդհանուր շրջանակի հետ:

Բարձրագույն կրթության ազգային որակավորումների շրջանակները ներառում են բարձրագույն կրթական համակարգի բոլոր որակավորումները: Այն ցույց է տալիս այս կամ այն որակավորման համար ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքները, և թե ինչպես կարող են ուսանողները շարժվել որակավորումների միջև:

ՌՇ-ԵԲԿՏ-ի նպատակն է բարձրագույն կրթության ազգային որակավորումները համադրել լայորեն ճանաչված եվրոպական համընդհանուր որակավորումների շրջանակին: Այս շրջանակում որակավորումները դասավորվում են աստիճանակարգ կարգով՝ հաշվի առնելով մակարդակների (բակալավր, մագիստրոս, դոկտոր) բարդությունը և դժվարությունը:

ՌՇ-ԵԲԿՏ-ն սահմանում է Դուբլինյան նկարագրիչներով բնութագրվող երեք հիմնական փուլերը: Դրանք տիպային և ընդհանրական պնդումներ են, թե ինչպիսի ձեռքբերումներ և կարողություններ են ակնկալվում յուրաքանչյուր փուլի ավարտին: Առաջին և երկրորդ փուլերը նաև արտահայտվում են կրեդիտային միավորներով:

**Ջ Զանգվածային բաց առցանց դասընթացներ (ԶԲԱԴ-ներ)**

Զանգվածային բաց առցանց դասընթացները ազատ մուտքով, անվճար բաժանորդագրմամբ դասընթացներ են և մատուցվում են առցանց՝ գործընկերոջ կամ սարքավորումների աջակցությամբ: Դրանք սովորաբար ներառում են մեծ թվով մասնակիցներ:

**Է Էրազմուս+**

«Էրազմուս+»-ը կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի հարցերով ծրագիր է՝ 2014-2020թթ. համար:[25]

**Ի Ինֆորմալ կրթություն**

Ինֆորմալ կրթությունը աշխատանքին, ընտանիքին և ժամանցին հարող առօրյա գործունեությունից բխող ուսումնառություն է, որը նպատակների, ժամանակացույցի և ուսումնառության աջակ-

[25] Կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի միասնական «Էրազմուս+» ծրագրի մասին 2013թ.-ի դեկտեմբերի 11-ին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի կողմից ընդունված ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ) N 1288/2013 (http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2013:347:0050:0073:EN:PDF)

ցության առումով կազմակերպված և կառուցվածքային չէ. սովորողի տեսանկյունից այն կարող է կանխամտածված չլինել: Ինֆորմալ կրթության արդյունքում ձեռք բերած ուսումնառության վերջնարդյունքների օրինակներ կարող են լինել կյանքի և աշխատանքային փորձի արդյունքում ձեռք բերած հմտությունները, ծրագրի ղեկավարման հմտությունները, աշխատավայրում ձեռք բերած ՏՀՏ հմտությունները, սովորած լեզուն, այլ երկրում ապրելու և սովորելու արդյունքում ձեռք բերած միջմշակութային հմտությունները, աշխատանքից դուրս ձեռք բերված ՏՀՏ հմտությունները, կամավոր աշխատանքների, մշակութային գործունեության, սպորտի, երիտասարդական աշխատանքի և տանը հանձն առված գործունեության (օր.՝ երեխային խնամելը) միջոցով ձեռք բերված հմտությունները:*

Ծ

### Ծրագիր (կրթական)

Ծրագիրը կրթական բաղադրիչների փաթեթ է՝ հիմնված ուսումնառության վերջնարդյունքների վրա, որոնք ճանաչվում են որոշակի որակավորում շնորհելու համար:

Կ

### Կրեդիտների կուտակում

Կրեդիտների կուտակումը ֆորմալ համատեքստերում կրթական բաղադրիչներից ձեռք բերած ուսումնառության վերջնարդյունքների և ինֆորմալ կամ ոչ ֆորմալ համատեքստերում իրականացրած կրթական գործունեությունների դիմաց շնորհված կրեդիտների հավաքագրման գործընթացն է: Ուսանողը կարող է կրեդիտներ կուտակել՝ որակավորում ստանալու, ինչպես պահանջվում է կրթական աստիճան շնորհող հաստատության կողմից կամ ցկյանս ուսումնառության նպատակով անձնական հաջողությունները փաստագրելու նպատակով:

### Կրեդիտների բաշխում

Կրեդիտների բաշխումը որակավորումներին, կրթական աստիճանի ծրագրերին և առանձին կրթական բաղադրիչներին կրեդիտների որոշակի թիվ նշանակելու գործընթացն է: Կրեդիտները հատկացվում են որակավորմանը կամ ծրագրերին՝ համաձայն ազգային օրենսդրության կամ պրակտիկայի, որտեղ հարկ է՝ հղում կատարելով ազգային և/կամ եվրոպական որակավորումների շրջանակներին: Դրանք

* 2012թ.-ի դեկտեմբերի 20-ին ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության վավերացման վերաբերյալ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ (2012/Գ 398/01), Հասանելի է, http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2012:398:0001:0005:EN:PDF

հատկացվում են կրթական բաղադրիչներին, ինչպիսիք են օրինակ դասընթացի միավորները, գիտական աշխատանքները, աշխատանքային փորձի վրա հիմնված ուսուցումը՝ հիմք ընդունելով ամբողջ ուսուցման ակադեմիական մեկ տարվա համար հատկացվող 60 կրեդիտները՝ ըստ յուրաքանչյուր բաղադրիչի ուսումնառության սահմանված վերջնարդյունքներին հասնելու համար պահանջվող հաշվարկված աշխատանքային ծանրաբեռնվածության:

### Կրեդիտների շնորհում

Ուսանողներին և այլ սովորողներին պաշտոնապես կրեդիտներ շնորհվում է սահմանված է որակավորման և/կամ դրա բաղադրիչների համար, եթե նրանք հասել են նախատեսված ուսումնառության վերջնարդյունքներին: Ազգային մարմինները պետք է նշեն, թե որ հաստատությունները իրավունք ունեն շնորհելու ԿՓԿՀ կրեդիտներ: Կրեդիտները շնորհվում են անհատ ուսանողներին այն բանից հետո, երբ նրանք ավարտում են ուսումնառության պահանջվող գործընթացը և հասնում սահմանված վերջնարդյունքներին: Եթե ուսանողները և այլ սովորողները հասել են ուսումնառության վերջնարդյունքներին ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ համատեքստերում կամ ժամանակահատվածներում, կրեդիտներ կարող են շնորհվել այդ ուսումնառության վերջնարդյունքների գնահատման և ճանաչման միջոցով:[6]

### Կարողություն

ԵՈՏ-ն սահմանում է կարողությունը որպես գիտելիքը, հմտությունները ու անձնական, սոցիալական և/կամ մեթոդաբանական ունակությունները աշխատավայրում կամ ուսումնական իրավիճակներում, ինչպես նաև մասնագիտական և անձնական զարգացման մեջ գործի դնելու ունակություն: Եվրոպական որակավորումների շրջանակի համատեքստում կարողությունը նկարագրվում է պատասխանատվության և ինքնավարության տեսանկյունից:

Կարողությունների խթանումը բոլոր կրթական ծրագրերի նպատակն է: Կարողությունները զարգացվում են դասընթացների բոլոր միավորներում և գնահատվում են ծրագրի տարբեր փուլերում. Որոշ կարողություններ համապատասխանում են առարկայական ոլորտին (հատուկ են որոշակի ուսումնառության առարկային), մյուսները ընդհանրական են (վերաբերում են յուրաքանչյուր կրթական աստիճանի ծրագրին): Սովորաբար կարողությունների զարգացումը ողջ ծրագրի ընթացքում իրականացվում է ինտեգրացված և փուլային ձևով:

**Կրեդիտ (ԿՓԿՀ)**

ԿՓԿՀ կրեդիտներն արտահայտում են ուսումնառության ծավալը՝ հիմնված ուսումնառության սահմանված վերջնարդյունքների և դրանց հետ կապված ծանրաբեռնվածության վրա: 60 ԿՓԿՀ կրեդիտ տրամադրվում է ուսումնառության վերջնարդյունքներին և դրանց հետ կապված ամբողջ ուսուցման մեկ ակադեմիական տարվա ծանրաբեռնվածությանը համար, որը սովորաբար ներառում է կրթական բաղադրիչների որոշ քանակ, որին հատկացվում են կրեդիտներ (ուսումնառության վերջնարդյունքների և ծանրաբեռնվածության հիման վրա): ԿՓԿՀ կրեդիտները, ընդհանուր առմամբ, արտահայտվում են ամբողջական թվերով:

**Կրեդիտային շարժունություն**

Կրեդիտային շարժունությունը փոխանակվող ուսանողի շարժունությունն է հյուրընկալող հաստատությունում, ով որոշակի ժամանակահատվածում իրականացնում է ակադեմիական կրեդիտներ շնորհող գործունեություններ, որոնք հետագայում ճանաչվում են մայր հաստատության կողմից:

**Կրեդիտների փոխանցում**

Կրեդիտների փոխանցումը մի գործընթաց է, որը թույլ է տալիս մի բանրագույն կրթության կրեդիտներ շնորհող մարմնի կողմից հատկացված կրեդիտների ճանաչումը և հաշվարկումը մեկ այլ հաստատության ծրագրի պահանջների բավարարման համար կամ որոշակի ծրագրի արդյունքում ձեռք բերած կրեդիտների ուղղորդումը մեկ այլ ծրագրի պահանջների բավարարմանը:

**Կրթական աստիճանի շարժունություն**

Կրթական աստիճանի շարժունությունը կրթական աստիճանի ստացմանն ուղղված կրթական շարժունություն է, նույնիսկ եթե ուսանած ծրագրի միայն մի մասն է անցկացվել արտասահմանում (օր.՝ համատեղ տրամադրվող կամ համատեղ կրթական աստիճան շնորհող ծրագրերի պարագայում):[27]

**Կրթական աստիճանի ծրագիր**

Կրթական աստիճանի ծրագիրը կրթական բաղադրիչների փաթեթ է, որը հանգեցնում է կրթական աստիճանի շնորհմանը՝ ուսանողի կողմից բոլոր պահանջները հաջողությամբ ավարտին հասցնելուց հետո:

[27] ՄԱՈՒՆԻՄՈ (Համալսարանական Շարժունության Քարտեզագրման ծրագիր)՝ http://www.maunimo.be/index.php/mobility-definitions

**Կրթական բաղադրիչ**

Կրթական բաղադրիչն ինքնաբովանդակ և պաշտոնապես կառուցված կրթական փորձառություն է (ինչպես օրինակ՝ դասընթացի միավոր, մոդուլ, պրակտիկա):

**Կրեդիտների ճանաչում**

Կրեդիտների ճանաչումն այն գործընթացն է, որի միջոցով մի հաստատություն հավաստում է մեկ այլ հաստատությունում ձեռք բերված ու գնահատված ուսումնառության վերջնարդյունքները (որոշները կամ բոլորը)՝ որոշակի ծրագրի, դրա բաղադրիչի կամ որակավորման պահանջները բավարարելու համար:

**Համատեղ աստիճան**

Միասնական փաստաթուղթ, որը տրվում է համատեղ ծրագիրը իրականացնող բուհերի կողմից և ճանաչվում է որպես համատեղ ծրագրի շնորհ:

**Համատեղ ծրագիր**

Համատեղ կրթական ծրագիր է, որն առաջարկվում է համատեղ տարբեր բուհերի կողմից, և ավարտվում կրկնակի/բազմակի կամ համատեղ որակավորման շնորհմամբ:[79]

**Ճանաչում (ակադեմիական ճանաչում)**

Ճանաչումը մեկ բարձրագույն ուսումնական հաստատության (տվյալ երկրում և արտերկրում ) դասընթացների, որակավորումների կամ դիպլոմների ճանաչումն է այլ հաստատության կողմից՝ ուսանողի՝ հետագա ուսուցումը շարունակելու նպատակով:

Ակադեմիական ճանաչում կարող է հայցվել նաև երկրորդ հաստատությունում ակադեմիական կարիերայի համար, իսկ որոշ դեպքերում աշխատաշուկայում՝ այլ աշխատանքի ընդունելության համար (ակադեմիական ճանաչում մասնագիտական նպատակով): Ինչ վերաբերում է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին, ապա կարող են իրականացվել ճանաչման երեք հիմնական մակարդակ՝ իրենց կից գործիքաշարով (ինչպես առաջարկվել է Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայով և Բոլոնիայի հռչակագրով): Դրանք են՝

79 Համատեղ ծրագրերի որակի ապահովման Եվրոպական մոտեցում հաստատված նախարարների առաջարկ, որը պետք է ընդունվի Երևանում 2015թ.-ի մայիսին կայանալիք նախարարների համաժողովում https://eqar.eu/fileadmin/documents/bologna/02_European_Approach_QA_of_Joint_Programmes_v8_5_endorsedByBFUG.pdf

- որակավորումների ճանաչում՝ ներառյալ նախկին կրթությունը և մասնագիտական փորձառությունը՝ թույլ տալով ընդունվել կամ վերաընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն,
- կարճաժամկետ ուսուցման ճանաչում՝ կապված ուսանողների շարժունության հետ՝ որպես հիմնական գործիք ունենալով ԿՓԿՀ-ն (Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը),
- ամբողջական կրթական աստիճանների ճանաչում՝ որպես հիմնական գործիք ունենալով դիպլոմի հավելվածը:[29]

**Ճկունություն**

Ճկունությունը վերաբերում է այն միջոցներին, որոնք բարձրագույն կրթության տրամադրումը դարձնում են ավելի ճկուն: Այս գաղափարի հիմնվում է բարձրագույն կրթության հասանելիությանը թվով ավելի շատ մարդկանց համար ու հարմարվողականության խթանման ժամանակակից հասարակություններում: Այն նաև վերաբերում է ծրագրի/ուսումնական պլանի մշակման, ուսուցման և դասավանդման մոտեցումների ճկունությանը:

**Մասնագիտական կրթության և վերապատրաստումների եվրոպական կրեդիտային համակարգ (ECVET)**

Մասնագիտական կրթության և վերապատրաստումների եվրոպական կրեդիտային համակարգ միտված է որակավորում ստանալու համար ուսումնառության վերջնարդյունքների փոխանցումը, ճանաչումն ու կուտակումը թույլ տալուն: Այն ապակենտրոնացված համակարգ է՝ հիմնված անհատ պետությունների և մասնագիտական ուսուցման շահառուների կամավոր մասնակցության վրա՝ հաշվի առնելով ազգային օրենսդրությունն ու կանոնակարգությունը: Այն տալիս է որակավորումները բնութագրող մեթոդաբանական շրջանակ ուսումնառության վերջնարդյունքների համար կիրառվող միավորների առումով և թույլ տալով տարբեր կրթական և որակավորումների շրջանակ ունեցող անհատ պետությունների փոխանցման միավորների կուտակումը: Համակարգը ստեղծված է գործընկերների պայմանագրերի հիման վրա՝ կապված որակավորումների թափանցիկության և շահառուների փոխադարձ վստահության վրա[30]:

[29] Vlăsceanu L., et al., Որակի ապահովում և հավատարմագրում․ Հիմնական եզրույթների և հասկացությունների բառարան, Բարձրագույն կրթության փաստաթղթեր UNESCO–CEPES 2004.
[30] http://www.ecvet-team.eu/en/ecvet-system

**Մակարդակների նկարագրիչներ**

Տե՛ս «Ընդհանուր (մակարդակների) նկարագրիչներ և «Ոլորտային նկարագրիչներ»-ը

**Մոդուլ**

Մոդուլը դասընթացի միավոր է, որում դասընթացի ամեն միավոր ունի կրեդիտների միևնույն թիվը կամ դրա բազմապատիկը:

**Մասնագիտական որակավորումների ճանաչում**

2005/36/ԵՀ հրահանգը ԵՄ անդամ պետությունների համար սահմանում է կանոններ՝ կանոնակարգվող մասնագիտության հասանելիության կամ հետամուտ լինելու վերաբերյալ, որոշակի մասնագիտական որակավորումներ ձեռք բերելուց պահից ի վեր: Հրահանգը սահմանում է, որ ընդունող անդամ պետությունը պետք է ճանաչի մեկ այլ անդամ պետությունում ստացած մասնագիտական որակավորումները, ինչը թույլ կտա նշված որակավորումների կրողին այնտեղ շարունակել նույն մասնագիտությունը՝ այդ մասնագիտության հասանելիության կամ շարունակման համար:

Հյուրընկալող անդամ պետության կողմից մասնագիտական որակավորումների ճանաչումը շահառուներին թույլ է տալիս այդ անդամ պետությունում մուտք ունենալ նույն մասնագիտություն, որի որակավորումն ունեն մայր անդամ պետությունում և ընդունող անդամ պետությունում շարունակել այն նույն պայմաններով, ինչ տեղացիները:[31]

Ն

**Նախկին ուսումնառության և փորձառության ճանաչում**

Նախկին կրթության և փորձառության ճանաչումը ուսումնառության վերջնարդյունքների վավերացումն է՝ անկախ նրանից, թե ձեռք են բերվել ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ կրթությամբ, մինչ վավերացման պահանջը:[32]

Շ

**Շարունակական մասնագիտական զարգացումը (ՇՄԶ)**

Ցկյանս ուսումնառության ասպեկտը, որը հաճախ ամփոփում են շարունակական մասնագիտական կրթություն, նկարագրում է այն հմտությունները, գիտելիքները և փորձը, որը անհատը ձեռք է բերում իր աշխա-

[31] http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:02005L0036-20140117&from=EN
[32] 2012թ.-ի դեկտեմբերի 20-ին ոչ պաշտոնական և ոչ ֆորմալ կրթության վավերացման վերաբերյալ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ (2012/C 398/01), Հավելված:
http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2012:398:0001:0005:EN:PDF

տանքում ֆորմալ և ոչ ֆորմալ ձևերով և որը հիմնված է նրա հիմնական որակավորումների ու վերապատրաստման վրա: Մասնագիտական կարիերայում գնալով աճում է ուսումը շարունակելու պաշտոնական պահանջը և ողջ կարիերայի ընթացքում գիտելիքը, հմտությունները և կարողությունները զարգացնելը՝ ժամանակին համընթաց շարժվելու և ապահով, օրինական ու արդյունավետ աշխատելու ունակության համար: Ֆորմալ ՇՄԶ-ն, որը մասնագիտական պահանջ է, վավերացվում և փաստաթղթերով հաստատվում է: Գործատուները մեծապես ակնկալում են ունենալ անհատի ՇՄԶ-ի պաշտոնական վավերացված արձանագրություն, և հետևապես այն դառնում է ուսումնական պլանի կարևոր տարր:

**Շրջափուլ**

1999 թ.-ին ընդունված Բոլոնիայի հռչակագրի նպատակներից մեկը «երկու փուլերի վրա հիմնված մի համակարգի ընդունումն էր, այն է՝ բուհական և հետբուհականը»: 2003-ին դոկտորական մակարդակը նույնպես ներառվեց Բոլոնիայի կառուցվածքի մեջ՝ որպես երրորդ փուլ: Այսպիսով ԵԲԿՏ-ն սահմանել է բարձրագույն կրթության երեք փուլերի հիերարխիա (առաջին փուլ, երկրորդ փուլ և երրորդ փուլ): Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում բարձրագույն կրթության բոլոր որակավորումները զետեղված են այս երեք փուլերի սիրույթում:

**Շրջափուլի (մակարդակի) նկարագրիչներ**

Սրանք ընդհանրական պնդումներ են այս երեք փուլերից յուրաքանչյուրից բխող ակնկալվող վերջնարդյունքների վերաբերյալ: Ընդհանրական փուլի (մակարդակի) նկարագրիչների լավ օրինակ են Դուբլինի նկարագրիչները, որոնք որպես հիմք են ծառայել Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակի (ի թիվս ԿՓԿՀ-ների) հիմնադրման համար:

**Շարժունության պատուհան**

Շարժունության պատուհանը ուսանողների միջազգային շարժունության համար նախատեսված ժամանակահատված է, որը ներառված է կրթական ծրագրի ուսումնական պլանում:[33]

[33] Mobility Windows: From Concept to Practice/Irina Ferencz, Kristina Hauschildt and Irma Garam (eds.) – Bonn: Lemmens Medien GmbH, 2013 (ACA Papers on International Cooperation in Education), էջ 35 http://www.aca-secretariat.be/fileadmin/aca_docs/images/members/ACA_2013_Mobility_windows.pdf

## Որակավորումների ազգային շրջանակ (ՈԱՇ)

Որակավորումների ազգային շրջանակը կոնկրետ մակարդակների վերջնարդյունքների չափորոշիչների վրա հիմնված որակավորումների դասակարգման գործիք է, որի նպատակն է ինտեգրել և համակարգել ազգային որակավորումների ենթահամակարգերը և բարելավել որակավորումների թափանցիկությունը, հասանելիությունը, առաջընթացն ու որակը՝ աշխատաշուկային և քաղաքացիական հանրությանը համապատասխան:[14]

Որակավորումների ազգային շրջանակները ներառում են կրթական բոլոր որակավորումները կամ բարձրագույն կրթության բոլոր որակավորումները՝ կախված տվյալ երկրի քաղաքականությունից: Դրանք ցույց են տալիս, թե սովորողներից ինչ է ակնկալվում իմանալ, հասկանալ և ունակ լինել անել՝ այս կամ այն որակավորման հիման վրա (ուսումնառության վերջնարդյունքների), ինչպես նաև թե ինչպես են որակավորումները փոխկապակցվում համակարգում այսինքն՝ թե ինչպես են կարող սովորողները շարժվել կրթական համակարգում որակավորումների միջև:

Որակավորումների ազգային շրջանակները մշակվում են իրավասու պետական մարմինների կողմից ՝ տվյալ երկրում՝ շահագրգիռ կողմերի մի ընդգրկուն շրջանի հետ համագործակցելու արդյունքում՝ ներառյալ բարձրագույն ուսումնական հաստատությունները, ուսանողները, անձնակազմն ու գործատուները:

### Ոչ-ֆորմալ կրթություն

Ոչ ֆորմալ կրթությունն ուսումնառություն է, որը տեղի է ունենում ծրագրավորված գործունեության միջոցով (ուսումնառության նպատակների, ժամանակամիջոցի առումով), որտեղ առկա է որոշ կարգի ուսումնական աջակցություն (օր.՝ սովորող-ուսուցիչ փոխհարաբերություններ), այն կարող է ներառել այնպիսի ծրագրեր, որոնք հաղորդում են աշխատանքային հմտություններ, մեծահասակների գրագիտություն և դպրոցը վաղ ավարտողների համար հիմնական կրթություն: Ոչ ֆորմալ կրթության շատ հանդիպող տեսակները ներառում են վերապատ-

[14] 2012թ.-ի դեկտեմբերի 20-ին ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության վավերացման վերաբերյալ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2012/Գ 398/01), Հավելված: http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2012:398:0001:0005:EN:PDF

ցասատում հիմնարկություններում, որի միջոցով հիմնարկությունները ճանաչում և քարտեզագրում են իրենց աշխատողների հմտությունները, ինչպես օրինակ՝ առցանց ուսուցման վրա հիմնված ՏՀՏ հմտությունները (օր.՝ օգտվելով բաց կրթական ռեսուրսներից), և դասընթացներ, որոնք կազմակերպված են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից իրենց անդամների, թիրախային խմբի կամ ընդհանուր հանրության համար:*

**Որակավորում**

Որակավորումը իրավասու մարմնի կողմից շնորհված ճանաչված ատտեստատ, դիպլոմ կամ որևէ վկայական է, որը հաստատում է ճանաչված ուսումնական ծրագրի հաջող ավարտը:

**Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ճանաչում**

Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ճանաչումը այն գործընթացն է, որի միջոցով մի հաստատություն հաստատում է, մեկ այլ համատեքստում (ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ուսումնառություն) ձեռք բերված ու գնահատված ուսումնառության վերջնարդյունքները (որոշները կամ բոլորը)՝ որոշակի ծրագրի, դրա բաղադրիչի կամ որակավորման պահանջները բավարարելու համար:

**Որակի ապահովում**

Որակի ապահովումը ազգային կամ ինստիտուցիոնալ մակարդակներում ընդունված գործընթաց է կամ գործընթացների շարք՝ ապահովելու կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակը:

Որակի ապահովումը պետք է երաշխավորի կրթական այնպիսի միջավայր, որում ծրագրերի բովանդակությունը, ուսումնառության հնարավորությունները ու հարմարությունները համապատասխանեն վերջինիս նպատակին: Որակի ապահովմանը հաճախ են անդրադառնում շարունակական բարելավման փուլի համատեքստում (այն է՝ ապահովման և բարելավման գործունեություն):

Պ

**Պրակտիկա**

Պրակտիկան հաստատությունից դուրս փորձառության (օրինակ՝ որևէ աշխատավայրում) համար հատկացված պլանավորված ժամանակահատված է, որը որպես ծրագրի մաս ուսանողներին կօգնի զարգացնել հատուկ հմտություններ, գիտելիք կամ ընկալում:

* 2012թ.-ի դեկտեմբերի 20-ին ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության վավերացման վերաբերյալ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2012/Գ 398/01), Հասանելի է՝
http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2012:398:0001:0005:EN:PDF

**Պրակտիկայի վկայական**

Պրակտիկայի վկայականը մի փաստաթուղթ է, որը տրվում է ընդունող կազմակերպության/ձեռնարկության կողմից վերապատրաստվողի աշխատանքի տեղավորման ժամանակահատվածի ավարտից հետո ըստ նրա պահանջի, որին կարող են կցվել այլ փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ երաշխավորագրերը: Դրա նպատակն է տրամադրել թափանցիկություն և վեր հանել պրակտիկայի ընթացքում ուսանողի փորձառության արժեքը:

**Սովորող**

Սովորողն անհատ է, որը ներգրավված է ուսումնական գործընթացի մեջ (ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ կրթության): Ուսանողները սովորողներ են, որոնք ներգրավված են ֆորմալ կրթության գործընթացում:*

**Վավերացում**

Վավերացումն իրավասու մարմնի կողմից հաստատման գործընթացն է, որ անհատը ձեռք է բերել ուսումնառության վերջնարդյունքներ՝ համաձայն որևէ կարևոր ստանդարտի, և բաղկացած է հետևյալ հստակ փուլերից՝

1. հարցազրույցի միջոցով անհատի փորձի ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ,
2. անհատի փորձառությունը տեսանելի դարձնելու ՓԱՍՏԱԳՐՈՒՄ,
3. այդ փորձառությունների պաշտոնական ԳՆԱՀԱՏՈՒՄ,
4 գնահատման արդյունքների ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ, ինչը կարող է հանգեցնել մասնակի կամ ամբողջական որակավորման:[37]

* Այն հարցը, թե արդյոք ուսանողների մասին խոսելիս նրանց դիմել որպես «ուսանողներ», թե «սովորողներ», նախագահությունից քննարկվել է աշխատանքային խմբում և շահառու կողմերի հետ: Արդյունքում խումբը համաձայնվել է, որ բարձրագույն կրթությունը ընդգրկում է շատ ավելի ճկուն ուղիներ և որ բարձրագույն կրթական հաստատությունների մեծ մասը կազմակերպված են նախատեսված ուսանողական մարմնին ֆորմալ ծրագրերի տրամադրման շուրջ: Քանի որ նախապես ենթադրվում էր Ուղեցույցում գործածել միայն «սովորող» եզրույթը, «ուսանողը» եզրույթը գործածվում է համապատասխան ընդգրկելու բարձրագույն ուսումնական հաստատություններում բոլոր սովորողներին (անկախ այն բանից, թե ուսանում են ցերեկ, թե հեռակա, ներգրավված են հետազոտ., լսարանային կամ աշխատանքի վրա հիմնված ուսուցման վրա՝ ձգտելով առանց որակավորում կամ առանձին կրթական միավորների կամ դասընթացների վերաբերյալ վկայական):

[37] 2012թ.-ի դեկտեմբերի 20-ի ոչ պաշտոնական և ոչ ֆորմալ կրթության վավերացման վերաբերյալ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ (2012/C 398/01), Հասանելի է՝ http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2012:398:0001:0005:EN:PDF

**Վիրտուալ շարժունություն**

Տրանսազգային էլեկտրոնային ուսուցումը դա, երբ ուսանողն անցնում է հեռահար ուսուցման դասընթացներ, որոնք առաջարկվում են օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատության կողմից: Վիրտուալ շարժունությունը կարող է օգտակար լինել ֆիզիկական շարժունությունը խթանելու և այն լրացնելու համար: Վիրտուալ շարժունությունը կարող է կարևոր դեր խաղալ հաստատության միջազգայնացման ռազմավարության հարցում:[38]

**9 Ցկյանս ուսումնառության եվրոպական որակավորումների շրջանակ (ԵՈՇ) (EQF–LLL)**

Ցկյանս ուսումնառության եվրոպական որակավորումների շրջանակը ընդհանրական եվրոպական հղումային շրջանակ է, որը Եվրամիության երկրներին հնարավորություն է տալիս իրենց որակավորումները միակցել մեկը մյուսին: Այն ընդունվել է 2008թ.–ի ապրիլի 23–ին Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կողմից: ԵՈՇ–ը գործածում է հղումների ութ մակարդակ՝ հիմնված ուսումնառության վերջնարդյունքների վրա, որոնք սահմանված են գիտելիքի, հմտությունների և կարողության առումով: Այն ուշադրությունը շեղում է ներդրումից (ուսումնառության ժամանակահատված, հաստատության տեսակը) և կենտրոնանում թե որոշակի որակավորում ունեցող անձը ինչ գիտի և ինչ կարող է անել: Այն որակավորումները դարձնում է ավելի ընթեռնելի և հասկանալի Եվրոպական միության տարբեր երկրների և համակարգերի միջև:

**Ցկյանս ուսումնառություն**

Ցկյանս ուսումնառությունը ողջ կյանքի ընթացքում ձեռնարկած կրթական գործունեություններն է, որը նպատակ ունի բարելավելու գիտելիքը, հմտությունները ու կարողությունները անձնական, քաղաքացիական, սոցիալական և/կամ աշխատանքի տեսանկյունից:[39]

Բարձրագույն կրթության համապատասխան ոլորտում ցկյանս ուսումնառությանը նպաստող ծրագրերն ու ծառայությունները կարող են ներառել հիմնական ուղղությամբ ծրագրեր, շարունակական կրթություն, երեկոյան դասընթացներ, հեռակա ուսուցմամբ սովորողների համար հատուկ ծրագրեր,

[38] ՀՇՄՔԾ (Համալսարանական Շարժունության Քարտեզագրման) ծրագիր՝ http://www.maunimo.be/index.php/mobility-definitions
[39] Ցկյանս ուսումնառության համար եվրոպական տարածքի իրականացման դարձնելը COM(2001) 678 վերջնական http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2001:0678:FIN:EN:PDF

մուտք գրադարաններին/բարձրագույն ուսումնական հաստատության ռեսուրսներին, հեռահար ուսուցում, վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև այլ գործողությունների ու նախաձեռնությունների վրա կենտրոնացում և խորհրդատվական ծառայություններ:

### Ուսումնառության պայմանագիր

Ուսումնառության պայմանագիրը շարժունության մեջ ներգրավված երեք կողմերի՝ ուսանողի, ուղարկող հաստատության և ընդունող հաստատության կամ կազմակերպության/ձեռնարկության պաշտոնական ուսումնառության պայմանագիրն է, որը ուղղված է խթանելու կրեդիտների շարժունությունն ու ճանաչումը: Պայմանագիրը պետք է ստորագրվի երեք կողմերի ներկայացուցիչների կողմից նախքան շարժունության ժամանակահատվածի սկիզբը և նպատակ ունի ուսանողին տրամադրել հավաստում, որ շարժունության ընթացքում իր կողմից հաջողությամբ ձեռք բերած կրեդիտները ճանաչվեն:

### Ուսումնառության շարժունություն

Սովորաբար ուսումնառության շարժունությունն ինքնըստինքյան ներառում է ֆիզիկական շարժունություն, որի ընթացքում սովորողը/ուսանողը տեղափոխվում է այլ երկրում գտնվող հաստատություն՝ որպես ուսումնական ծրագրի մաս կամ ամբողջություն: Այս տիպի շարժունության մեծ մասը տեղի է ունենում մշակված և կազմակերպված ծրագրերի համատեքստում: Նման շարժունությունից ձեռք բերած կրեդիտները պաշտոնապես ճանաչվում են ուղարկող հաստատության կողմից:

Գոյություն ունի նաև «ազատ շարժվող ուսանողի» մեծ թվաքանակ, որը կախված է անձնական նախաձեռնությունից:

Ֆիզիկական շարժունության նման ուսանողները մեծապես հնարավոր է, որ մասնակցեն վիրտուալ շարժունությանը: Սա նույնպես կարող է իրականացվել կազմակերպված, համատեղ կամ կիսվող ուսումնական պլանի սահմաններում կամ բաց համալսարանների, բաց կրթական ռեսուրսների, ԶԲԱԴ-ների (MOOCs) կամ այլ առցանց նյութերի միջոցով:

### Ուսումնառության վերջնարդյունք

Ուսումնառության վերջնարդյունքները սահմանում են, թե սովորողն ինչ գիտի, ինչ է հասկանում կամ ինչ կարող է անել այս կամ այն ուսումնական գործընթացի ավարտին: Ուսումնառության վերջնարդյունքներին հասնելը պետք է գնահատվի պարզ և թափանցիկ չափա-

նիշների վրա հիմնված ընթացակարգերի միջոցով: Ուսումնառության վերջնարդյունքները հատկացվում են առանձին կրթական բաղադրիչներին կամ ամբողջ ծրագրին: Դրանք նույնպես կիրառվում են եվրոպական և ազգային որակավորումների շրջանակներում՝ նկարագրելու առանձին որակավորման մակարդակը:

**Ուսումնառության ուղի**

Ուսումնառության ուղին սովորողի անցած ճանապարհն է, որը նրան թույլ է տալիս աստիճանաբար կառուցել գիտելիք և ձեռք բերել ցանկալի կարողությունների փաթեթը: Ուսումնառության ուղին կարող է լինել «նշանային» հաստատության ուղորդման և կանոնակարգերի միջոցով (ներառյալ նախկին նկրթության և փորձառության ճանաչումը), ինչպես նաև ուսումնառության տարբեր ուղիներ կարող են հանգեցնել միևնույն որակավորման շնորհմանը: Ըստ էության՝ «ուսումնառության ուղի» հասկացությունը շեշտադրում է ուսանողի ցանկալի կրթական նպատակներին հասնելու ընտրությունը:

**Ուսանող**

Ուսանողը ֆորմալ կրթության ծրագրում ներգրավված սովորողն է:

**Ուսանողակենտրոն կրթություն**

Ուսանողակենտրոն կրթությունը ուսումնառության մոտեցում է, որը բնութագրվում է դասավանդման նորարարական մեթոդներով, որոնք միտված են խթանել ուսուցումը դասախոս և ուսանող հաղորդակցության միջոցով: Այնը մեծ կարևորությամբ է մոտենում ուսուցման գործընթացում ուսանողների դերին՝ նրանց ընդունելով որպես իրենց իսկ ուսուցման ակտիվ մասնակիցներ՝ ուժեղացնելով փոխանցվելի հմտությունները, ինչպես օրինակ՝ խնդիրներ լուծելու հմտությունները, քննադատական և տրամաբանական մտածողությունը:[10]

Փ

**Փոխանցում (կրեդիտների)**

Փոխանցումը մեկ համատեքստում (ծրագիր, հաստատություն) շնորհված կրեդիտների ճանաչումն է մեկ այլ ֆորմալ համատեքստում՝ որակավորում ստանալու նպա-

[10] Ուսանողակենտրոն կրթություն. ուսանողների համար գործիքների փաթեթ. Բարձրագույն ուսումնական հաստատություններ, Բրյուսել, նոյեմբեր 2010, էջ 6 http://www.esu-online.org/resources/6068/Student-Centred-Learning-Toolkit/

տակով: Մի ծրագրի շրջանակներում ուսանողներին շնորհված կրեդիտները կարող են փոխանցվել հաստատության կողմից, որպեսզի գումարվեն տվյալ կամ մեկ այլ հաստատության կողմից առաջարկվող ծրագրին: Կրեդիտների փոխանցումը ուսանողների հաջող շարժունության գրավականն է: Հաստատությունները, ֆակուլտետներն ու ամբիոնները կարող են կրեդիտների ավտոմատ ճանաչում և փոխանցում երաշխավորող պայմանագրեր կնքել:

**Ֆորմալ կրթություն**

Ֆորմալ կրթությունը սովորաբար իրականացվում է կրթական կամ վերապատրաստող հաստատության կողմից, որը կազմակերպված է (կրթական նպատակների, ուսումնառության ժամանակահատվածի և աջակցության առումով) և հանգեցնում է որակավորման: Ֆորմալ կրթությունը սովորողի տեսանկյունից կանխամտածված է:

**Europass շարժունություն**

Europass-ը հինգ փաստաթղթերի փաթեթ է (ինքնակենսագրություն, լեզվական անձնագիր. Europass-ի շարժունության վկայական. դիպլոմի հավելված), որը միտված է եվրոպայում հմտություններն ու որակավորումները դարձնել պարզ և հեշտ հասկանալի: Europass-ի շարժունության փաստաթուղթը, որով արձանագրվում են մեկ այլ եվրոպական երկրում անհատի ձեռք բերած գիտելիքն ու հմտությունները՝ լրացված է շարժունության մեջ ներգրավված հաստատությունների (ուղարկող և հյուրընկալող հաստատություն) կողմից:

# ՀԱՎԵԼՎԱԾ 2
# ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ



# ՀԱՎԵԼՎԱԾ 2[*]
## ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

**1. Գնահատականների փոխարկում՝ հղումներ հիմնված տարբեր ազգային գնահատման համակարգերին պատկանող երկու խմբերի գնահատականների բաշխման երկու աղյուսակների վրա՝**

**Ա խումբ Իտալիայից** *(անցողիկ գնահատականներ են 18-ից 30 գերազանցությամբ ընդգրկում)*

*Հղում արվող խումբ/ուսումնասիրության առարկան՝* ISCED կոդ. 023 լեզուներ

**Բ խումբ Ֆրանսիայից** *(անցողիկ գնահատականները գտնվում են 10-ից 20 միջակայքում)*

*Հղում արվող խումբ /ուսումնասիրության առարկան՝* ISCED կոդ. 023 լեզուներ

*Գնահատականների բաշխումը հղում արվող խմբի ներսում

**Գնահատականը կամ դրանից ցածր ստացող ուսանողների գումարային տոկոսը




* Խնդրում ենք դիմել ԿՓԿՀ ուղեցույցին այլ ավելացված օրինակների համար:

*Ուղղությամբ՝ University of Paris, France – Փարիզի համալսարան, Ֆրանսիա*
*ISCED–F CODE 023 Languages – ԿԴՄՍ–Ֆ կոդ 023 Լեզուներ*
*University of Rome, Italy – Հռոմի համալսարան, Իտալիա*
*ISCED–F CODE 023 Languages – ԿԴՄՍ–Ֆ կոդ 023 Լեզուներ*

Այս դեպքում գնահատականների տոկոսային տիրույթները կարող են համընկնել: Հյուրընկալող հաստատությունը պետք է նախորոք որոշի, թե արդյոք իրենց համար ընդունելի կլինի համընկնող տիրույթների նվազագույնը, միջինը, թե առավելագույն համեմատելի գնահատականը: Այդ իսկ պատճառով Հռոմի համալսարանը նախորոք որոշում է կայացրել, որ նրանք օգտագործելու են նվազագույնը կամ միջինը և ուսանողի գնահատականը կլինի 27, և եթե նրանք որոշեն, որ կօգտագործեն առավելագույնը, ապա ուսանողի գնահատականը կկազմի 28:

**2 Գնահատականների փոխանցում՝ հաշվեմնի հիմնված տարբեր ազգային գնահատման համակարգերին պատկանող երկու հաշվետու խմբերի գնահատականների բաշխման երկու աղյուսակների վրա՝**

**Կիրառական գիտությունների Ֆրայբուրգի համալսարան Ավստրիայում** *(անցողիկ գնահատականները գրանցվում են 1-ից 4 տիրույթում)*

*Հղում արվող խումբ/ուսումնառության դաշտ՝* ISCED կոդ 071 Ճարտարագիտություն և ճարտարագիտական պայմանագրեր

**Գենտի համալսարան Բելգիայում** *(անցողիկ գնահատականները գրանցվում են 10-ից 20 տիրույթում)*

*Հղում արվող խումբ/ուսումնառության դաշտ՝* ISCED կոդ 071 Ճարտարագիտություն և ճարտարագիտական պայմանագրեր

## ISCED-F Code 071 Engineering and Engineering Trades




*Աղյուսակում՝* *ISCED–F Code 071 Engineering and Engineering Trades – ԿՄՍԴ-Ֆ կոդ 071 Ճարտարագիտություն և ճարտարագիտական արհեստներ*
*FHV, AT – Կիրառական գիտությունների Ֆորարլբերգ համալսարան, Ավստրիա UGent, BE – Գենտի համալսարան, Բելգիա Excellent – գերազանց, Good – լավ, Satisfactory – գոհացուցիչ, Sufficent – բավարար*

Այս օրինակում Ավստրիայի հաստատության 2(լավ) գնահատականը Բելգիայի հաստատությունում կփոխարկվի 13 գնահատականի: Իսկ Բելգիայի հաստատության 11-ը՝ Ավստրիայում կփոխարկվի 3-ի (գոհացուցիչ): Այս պարագայում երկու հաստատություններն էլ որոշել են համընկնող տոկոսային տիրույթի դեպքում գործածել միջինը:

# ՀԱՎԵԼՎԱԾ 3
# ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ



# ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

**Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ**
**այլ փաստաթղթեր՝**
Բոլոնիայի շրջանակ ու հավաստագրումը (2008),
http://www.ehea.info/Uploads/QF/Bologna_Framework_and_Certification_revised_29_02_08.pdf

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակի ապահովման եվրոպական չափանիշներ ու ուղենիշներ
(https://revisionesg.files.wordpress.com/2014/10/esg-draft-endoresed-by-bfug.pdf)

Համատեղ ծրագրերի որակի ապահովման եվրոպական
սկզբունքը- Բոլոնիայի գործադիր խմբի կողմից երաշխա-
վորված նա ազգային առաջարկ, որը պետք է ընդունվի Եր-
ևանում 201 թ.-ի մայիսին կայանալիք նախարարական հա-
մաժողովու
https://eqar u/fileadmin/documents/bologna/02_European_
Approach_Q _of_Joint_Programmes_v8_5 endorsedByBFUG.pdf

**Եվրոպական միության պաշտոնական փաստաթղթեր՝**
2012թ.-ի դեկտեմբերի 20-ին ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության վավերացման վերաբերյալ Խորհրդի երաշխավորությունը (2012/Գ 398/01)
http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2012:398:0001:0005:EN:PDF

Հանձնաժողովի հաղորդակցություն COM(2001) 678 վերջնական՝ Ցկյանս կրթության եվրոպական տարածքը իրականություն դարձնելու վերաբերյալ

http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2001:0678:FIN:EN:PDF

2008թ.-ի ապրիլի 23-ին ցկյանս կրթության համար եվրոպական որակավորման շրջանակի ստեղծմանն ուղղված Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի երաշխավորությունը http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32008H0506(01)&from=EN.

«Էրազմուս+»-ի՝ կրթության, վերապատրաստման, երիտասարդների և սպորտի միության հիմնադրմանն ուղղված 2013թ.-ի դեկտեմբերի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի երաշխավորություն (ԵՄ) No 1288/2013 (http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2013:347:0050:0073:EN:PDF)

**Կայքեր և հրատարակություններ՝**
ECVET՝ http://ec.europa.eu/education/policy/vocational-policy/ecvet_en.htm

Ավելի լավ ճանաչե՛ք ECVET-ն. հարցեր և պատասխաններ, Բրյուսել, 2011 http://www.ecvet-team.eu/en/system/files/documents/14/questions-answers-about-ecvet-21/04/2010.pdf
ENIC-NARIC ցանց՝ http://www.enic-naric.net/

Բարձրագույն կրթության ոլորտում նախկին ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչում, Eurydice, 2012. http://eacea.ec.europa.eu/education/eurydice/documents/focus-on/152.pdf
EUA հոդվածներ MOOC-երի վերաբերյալ՝
http://www.eua.be/Libraries/Publication/MOOCs_Update_January_2014.sflb.ashx

Bergan, S. (2007): Qualifications -- Introduction to a concept (Council of Europe higher education series No.6)

Bergan, S, Rauhvargers, A. (eds.) (2005): Standards for recognition: the Lisbon recognition convention and its subsidiary texts (Council of Europe higher education series No. 3)
Biggs, J. (2003): Aligning teaching for constructing learning; https://www.heacademy.ac.uk/aligning-teaching-constructing-learning

Bingham (1999): Guide to Developing Learning Outcomes,
Cedefop (2009) European guidelines for Validating Non-formal and Informal learning; Luxembourg; http://www.cedefop.europa.eu/EN/Files/4054_en.pdf

Cedefop (2011): Using learning outcomes. European Qualifications Framework Series: Note 4 http://www.cedefop.europa.eu/EN/Files/Using_learning_outcomes.pdf

Colucci, E.; Davies, H.; Korhonen, J.; Gaebel, M. (2012): Mobility: Closing the gap between policy and practice; European University Association, Brussels http://www.maunimo.be/images/Oslo/eua%20maunimo_web.pdf

Ferencz,I.; Hauschildt, K.; Garam, I. (eds.) (2013): Mobility Windows: From Concept to Practice, Bonn: Lemmens Medien GmbH (ACA Papers on International Cooperation in Education); http://www.aca-secretariat.be/fileadmin/aca_docs/images/members/ACA_2013_Mobility_windows.pdf

Hunt, E. S.; Bergan, S. (eds.) (2010): Developing attitudes to recognition. Substantial differences in an age of globalization

(Strasbourg: Council of Europe Publishing. Council of Europe Higher Education Series No 13)

Lokhoff, J. et al (2010): A Guide to Formulating Degree Programme Profiles: Bilbao, Groningen, The Hague http://core-project.eu/documents/Tuning%20G%20Formulating%20Degree%20PR4.pdf

Vlăsceanu L., et al. (2004): Quality Assurance and Accreditation: A Glossary of Basic Terms and Definitions, Papers on Higher Education, UNESCO-CEPES.

**Եվրոպական ճանաչման ձեռնարկ բուհերի համար**
http://eurorecognition.eu/Manual/EAR%20HEI.pdf
Joint Degrees from A to Z project, co-funded by the Erasmus Mundus Programme, http://www.nuffic.nl/en/expertise/jdaz
MAUNIMO (Mapping UNIversity MObility) project ` http://www.maunimo.be/index.php

Բարձրագույն կրթության հավատարմագրման (ԲԿՀ) եվրոպական կոնսորցիումի համատեղ ծրագրերի պորտալ, որը համաֆինանսավորվել է ԵՄ-Էրազմուս Մունդուս ծրագրի կողմից, http://ecahe.eu/w/index.php/Portal:Joint_programmes

Ինտեգրացված տրանսազգային շարժունություն պարունակող կրթական աստիճան շնորհող ծրագրերի մշակման գործնական ուղեցույց – MOCCA project (արտասահմանում ինտեգրացված շարժունություն պարունակող հիմնական ուսումնական պլանի մոդել), որը համաֆինանսավորվել է ԵՄ «Սոկրատես» ծրագրի կողմից

Ուսանողակենտրոն կրթություն (2010) Ուսանողների, անձնակազմի և բուհերի համար գործիքների փաթեթ, Բրյուսել, Եվրոպական ուսանողների միության ծրագիր, որը համա-

Ֆինանսավորվել է ԵՄ Տեմպուս ուսումնառության ծրագրի կողմից http://www.eau-online.org/resources/6068/Student-Camtred-Learning-Toolkit/

TUNNING Academy ` http://tuningacademy.org/



**Ծրագրերի արդյունքներ՝**
CoRe stands for Competencess in Education and Recognition http://www.core-project.eu/

EGRACONS – European Grade Conversion System project, co-funded by the EU Lifelong Learning Programme http://egracons.eu/

EAR Manual – A European Area of Recognition project http://www.eurorecognition.eu/emanual/

EMQT project (Erasmus Mobility Quality Tools ), co-funded by the EU Lifelong Learning Programme http://www.che-consult.de/cms/?getObject=397&PK_Projekt=1022&strAction=show&getLang=de

# ՀԱՎԵԼՎԱԾ 4
# ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ



# ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

**Ստորև բերված օրինակները ցույց են տալիս ծրագրի ուղղվածությունը և/կամ դասընթացի առանձին միավորների նկարագրման եղանակներ: Դրանք լավագույն փորձի օրինակներ են և պարտադիր չէ դրանց հետևել: Օրինակները հիմնված են ԿՓԿՀ Ուղեցույցի առաջարկությունների և երաշխավորությունների վրա:**

Օրինակ I

**ՕՐԻՆԱԿ I – Համակարգչային ծրագրավորման առաջին շրջափուլի կրթական աստիճանի ծրագրի նկարագիր և Ծրագիր I դասընթացի միավորի ուսումնառության վերջնարդյունքներ**

**Կրթական աստիճանի ծրագրի ուղղվածությունը**

Համակարգչային ծրագրավորման բակալավրի ծրագիրը մշակված է պատրաստելու ուսանողներ, որոնք հիմնարար գիտելիքներ կունենան ճարտարագիտության տարբեր ոլորտներում և համակարգչային գիտություններում: Դասընթացների նպատակն է մասնակիցներին տրամադրել անհրաժեշտ հմտություններ համակարգչային համակարգերի և համացանցերի, ծրագրերի կիրառման, արդյունաբերական ավտոմատացման և կառավարման տեղեկատվական համակարգերի, համալիր մշակման և վերահսկման համակարգերի մշակման, ներդրման և պահպանման համար: Համակարգչային ճարտարագիտության աստիճանի շրջանավարտը հիմնականում ճարտարագետ է, ինչպես նաև ՏՏ ոլորտի մասնագետ:

**Ուսումնառության հիմնական վերջնարդյունքները**

Համակարգչային ծրագրավորման առաջին շրջափուլի կրթական աստիճանի ծրագրի շրջանավարտները կկարողանան մշակել, ներդնել ու պահպանել համակարգչային համակարգեր ու համացանցեր, ծրագրային, արդյունաբերական ավտոմատացման և կառավարման տեղեկատվական համակարգեր, համալիր մշակման և վերահսկման համակարգեր:

Օրինակ 1

**Շրջանավարտների մասնագիտական աշխատունակություն/ները**

Այս աստիճանի շրջանավարտները պահանջված են աշխատելու տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնարկներում, որոնք մասնագիտացած են համակարգչային տեխնիկայի և ծրագրային ապահովման արտադրության մեջ, և արդյունաբերական ավտոմատացման ոլորտներում, ինչպես նաև բոլոր կարգի ձեռնարկություններում, որոնք ներքին արտադրության և կառավարման գործընթացների համար կիրառում են տեղեկատվական համակարգեր և համակարգչային ցանցեր: Նրանք նույնպես կարող են աշխատել որպես անկախ փորձագետներ կամ պայմանագրային անկախ կապալառուներ՝ հիմնականում ծրագրերի թվային կառավարման համակարգերի մշակման համար: Ընդ որում՝ այս ծրագիրը ուսանողներին համակարգչային ճարտարագիտության և ավտոմատացման ոլորտում կտա ակադեմիական առաջընթացի հնարավորություն:

**Առանձին դասընթացի մոդուլ՝ Ֆիզիկա I**
**Ուսումնառության վերջնարդյունքներ**

Այն ուսանողը, որը հաջողությամբ կավարտի դասընթացը, կունենա ֆիզիկայի հիմնարար հասկացությունները թե՛ նյուտոնյան մեխանիկայում, թե՛ դասական էլեկտրամագնիսականության տեսության մեջ կիրառելու հմտություններ: Նա ունակ կլինի հիմնարար գիտելիքներ ցուցադրել պահպանման օրենքների և Մաքսվելի հավասարումների վերաբերյալ, որոնց կիրառումը նրան թույլ կտա լուծել մեխանիկական համակարգերում դինամիկայի և էլեկտրամագնիսականության վերաբերյալ խնդիրներ:

**Գնահատման մեթոդներ և չափանիշներ**
**Գնահատման մեթոդներ՝**

- վերջնական գրավոր քննություն,
- Վերջնական բանավոր քննություն:

Գրավոր քննությունը համարվում է վերջնական բանավոր քննությանը մասնակցելու թույլտվության նախաշեմ: Քննությունն անցնելու համար պահանջվում է հավաքել հնարավոր 30 միավորից 15-ը: Վերջնական գնահատականի մեջ բանավոր քննության կշիռը մոտավորապես 70% է, եթե հաղթահարված է գրավոր քննության շեմը:

**Գնահատման չափանիշներ**
Սովորողը կգնահատվի իր՝ դասընթացի հիմնական հասկացությունները ըմբռնելու և դրանք որոշակի դեպքերում կիրառելու իր ցուցաբերած ունակության հիման վրա: Գրավոր քննության ժամանակ (3 ժամ, 2 խնդիր) սովորողը պետք է ցուցաբերի ֆիզիկայի հիմնական հասկացությունները ներկայացնելու՝ մեկ խնդրին տրվող երեք հարցերից ճիշտ պատասխանը գտնելու իր ունակությունը: Բանավոր քննության ժամանակ (1/2ժ.) սովորողը պետք է ցույց տա դասընթացում քննարկված ֆիզիկայի ամենակարևոր օրենքները գործադրելու և քննադատական հիմնավորվածությամբ դրանք կիրառելու ունակությունը:



**ՕՐԻՆԱԿ II – Պատմության առաջին շրջափուլի կրթական առարկայի ծրագրի նկարագիր և ժամանակակից պատմության դասընթացի միավորի ուսումնառության վերջնարդյունքներ**

**Կրթական առարկայի ծրագրի նկարագրությունը**
Պատմության կրթական առարկայի ծրագրի նպատակն է ուսանողին պատրաստել պատմաքաղաքական ճանաչողության՝ շնորհիվ պատմագրական թեմաների և բանավեճերի վերաբերյալ հիմնարար գիտելիքների և աղբյուրների մշակման և մեկնաբանման մեթոդաբանության ձեռքբերման, ինչպես նաև պատմագրական երկխոսության համար պարզ ու ճշգրիտ լեզվի կիրառմանը: Ուսումնական գործառույթը ձեռք է բերվում դասախոսությունների, գործնական և լսարանային աշխատանքների արդյունքում: Նշված գործունեության հետ մեկտեղ ուսանողները կարող են մասնակցել գիտաժողովներին, սեմինարներին և համաժողովներին՝ ազգային և միջազգային մակարդակում ծավալվող գիտական քննարկումներին: Այս կրթական ծրագիրն ունի չորս ուղղվածություն՝ հնագույն պատմություն, միջնադարի պատմություն, ժամանակակից պատմություն և մեր օրերի պատմություն:

**Ուսումնառության հիմնական վերջնարդյունքները**
Պատմության առաջին շրջափուլի կրթական առարկայի ծրագրի շրջանավարտները ունակ կլինեն ցուցաբերելու քննադատական ըմբռնողականություն ներկայի հարաբերակցությունը անցյալին թեմայի շուրջ, պատմական ճանաչողության հիմնական ձևերի վերաբերյալ գիտելիքներ և դրանք կիրառելու ունակություն, կարևոր

Օրինակ 2

գիտական գրագիտությունը, գրագիտության ցանկն ու պատմագրական խնդիրներին վերաբերող ռեսուրսները կանխորոշելու ունակություն, ստացված հետազոտական արդյունքները տարբեր ուղիներով հաղորդելու ունակություն՝ համաձայն թիրախային լսարանի. այլ համապատասխան և համանման գիտությունների, ինչպես նաև պատմության հիմնական գործիքաշարի վերաբերյալ գիտելիքներ և դրանց կիրառելու ունակություն, մարդկային պատմության հիմնական գծերի կայուն գիտելիք. որևէ լայն պատմական ժամանակաշրջանի ավելի մասնագիտացված գիտելիք (հնագույն, միջնադարյան, ժամանակակից/մեր օրերի). խոսակցականից բացի առնվազն որևէ մեկ այլ ԵՄ լեզվով հաղորդակցվելու ունակություն, հաղորդակցվելու, պատմագրական տեքստերի և տվյալների ձեռք բերման և մշակման համար անհրաժեշտ հիմնական ՏՀՏ ունակություն:

**Շրջանավարտների մասնագիտական աշխատունակություն/ները**

Պատմության ոլորտում առաջին շրջափուլի կրթական աստիճանի որակավորման կրողները (Laurea) կարող են հանրային և մասնավոր կազմակերպություններում տարաբնույթ գործունեություն ծավալել՝ կապված պատմական հետազոտությունը համակարգելու, մշակութային ժառանգությունը պահպանելու և ցուցադրելու հետ՝ հատկապես ինչ վերաբերում է արխիվներին, գրադարաններին և նյութական մշակույթին, լրագրությամբ և աշխատել որպես լրագրող և այլ տարբեր հրատարակչություններում ծավալել գործունեություն որոնցում պատմական մշակույթն ու դրա մասնագիտացումն օգտակար են՝ ներառյալ հանրային կառավարման ու միջազգային մշակութային հարաբերությունները: Շրջանավարտները կարող են գրանցվել պատմության և գրագիտության ոլորտում ուսուցիչներ պատրաստող ծրագրերում, նրանք կարող են մասնակցել քաղծառայության ոլորտում հայտարարվող աշխատանքների մրցույթներին, որոնք կապված են դասավանդման, արխիվների կառավարման, գրադարանների և թանգարանների, խորհրդարանական փաստաթղթերի ու տեղեկատվական ծառայությունների և դիվանագիտական կարիերայի հետ:

**Առանձին դասընթացի միջոցով՝ ժամանակակից պատմության**

**Ուսումնառության վերջնարդյունքները**

Այս դասընթացը հաջողությամբ ավարտող ուսանողը կկարողանա խորը գիտելիքներ ցուցաբերել եվրոպական և համաշխարհային պատմության հիմնական գործընթացների և իրադարձությունների վերաբերյալ՝ աշխարհագրական հայտնագործություններից սկսած մինչև Նապոլեոնյան ժամանակաշրջանը:
Բացի այդ նա ունակ կլինի դրսևորել միջառարկայական և անդրազգային համատեքստում իմացաբանական կայացության վերաբերյալ ժամանակակից և հստակ գիտելիքներ, ինչպես նաև դրան հարող պատմագրական խնդիրների շուրջ, և ունակ կլինի կարդալ ու վերլուծել այդ ժամանակաշրջանի տեքստեր ու փաստաթղթեր:

**Գնահատման մեթոդներ և չափանիշներ**

**Գնահատման մեթոդներ՝**

- վերջնական բանավոր քննություն
- պարբերական գրավոր թեստեր:

Ուսանողները, որոնք կհաճախեն դասախոսություններին ու կմասնակցեն փաստաթղթերի քննարկումներին ու վերլուծություններին, կարող են հանձնել պարբերական գրավոր քննություններ, որոնք սովորաբար ձեռնարկվում են դասընթացի նյութի վերաբերյալ հարցերին գրավոր պատասխանների հակիրճ ձևով, որոնք կգնահատվեն և հաշվի կառնվեն վերջնական բանավոր քննության ժամանակ: Ովքեր հնարավորություն չեն ունեցել մասնակցել դասընթացին, կգնահատվեն վերջնական քննության հիման վրա:

**Գնահատման չափանիշներ՝**

Պարբերական գրավոր քննություններին տրամադրվող ժամանակը ու ձևը նրանց համար, որոնք հաճախել են դասընթացին, քննարկվում է ուսանողների հետ դասախոսությունների ընթացքում: Վերջնական բանավոր քննության նպատակն է հաստատել, որ ուսանողը ունակ է ցուցաբերել դասընթացի նյութի վերաբերյալ գիտելիք և քննադատորեն ներկայացնել ընտրված մենագրությունը/ները պատշաճ բառապաշարով:

**ՕՐԻՆԱԿ 10 – Մարքեթինգային վերլուծության– երկրորդ շրջափուլի կրթական աստիճանի ծրագրի (մագիստրոսական մակարդակ) ուսումնառության վերջնարդյունքների նկարագիր**

**Ուսումնառության վերջնարդյունք 1՝ մարքեթինգային վերլուծության կարողություն**

**ՈւՎ 1.1** Զարգացնել բարդ մարքեթինգային որոշումների մոդելներ՝ հիմնված հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման տեսությունների վրա

**ՈւՎ 1.2** Մարքեթինգային որոշումների ինտեգրումը իրական իրադրություններում

**ՈւՎ 1.3** Ինքնուրույն և քննադատորեն բիզնեսին հարող խնդիրներ վերլուծել՝ օգտագործելով տվյալներ և տեղեկատվություն

**ՈւՎ 1.4** Ստեղծագործական մոտեցում տվյալների մշակման մեթոդներին բիզնեսին առնչվող հարցերում

**ՈւՎ 1.5** Բիզնեսի հետ կապված խնդիրների լուծման համար շուկայական հետազոտությունների առաջատար մեթոդների ստեղծագործական օգտագործում

**Ուսումնառության վերջնարդյունք 2՝ գիտահետազոտական կարողություն**

**ՈւՎ 2.1** Ընտրել ու հավաքել բարդ մարքեթինգային խնդիրները մոդելավորելու համար տվյալների կառավարման ու վիճակագրական մեթոդներ

**ՈւՎ 2.2** Ձևակերպել բարդ մարքեթինգային խնդիրները՝ որպես հետազոտական հարցադրում

**ՈւՎ 2.3** Կիրառել բարդ մարքեթինգային խնդիրների շուրջ միջազգային, գրախոսվող ամսագրերում ներառված գրականության ուսումնասիրություն

**ՈւՎ 2.4** Համադրել սեփական հետազոտության արդյունքները մարքեթինգի վերաբերյալ գիտական գրականության հետ

**ՈւՎ 2.5** Ներառել բարդ տվյալների համակարգերին

**Ուսումնառության վերջնարդյունք 3՝ մտավոր կարողություն**

**ՈւՎ 3.1** Ծրագրավորման տարբեր լեզուներին և ծրագրային գործիքներին տիրապետել՝ որպես բարդ մարքեթինգային որոշումների մոդելների կառուցման միջոց

**ՈւՎ 3.2** Սեփական մեթոդաբանական կարողությունները ինտերակտիվ ձևով շարունակաբար ընդլայնել

**ՈւՎ 3.3** Բարդ մարքեթինգային խնդիրներին սեփական ճիշտ լուծումներ տալ

**Վ 3.4** Տարբեր շահառու կողմերի համեմատելի տեսակետները մեկ մարքեթինգային լուծման մեջ ինտեգրել

Օրինակ 3

**Ուսումնառության վերջնարդյունք 4: Համագործակցելու և հաղորդակցվելու կարողություն**

ՈւՎ 4.1 Սեփական մաթեմատիկական հետազոտության համապատասխան արդյունքները գիտականորեն ճշգրիտ կերպով զեկուցել

ՈւՎ 4.2 Փորձառության տարբեր մակարդակներով միջազգային և միջդիսցիպլինար թիմում իրական բիզնես ծրագիր գործարկել

ՈւՎ 4.3 Բարդ մաթեմատիկական խնդիրների և դրանց լուծումների շուրջ մասնագիտորեն շարադրված զեկույց պատրաստել

ՈւՎ 4.4 Բարդ մաթեմատիկական խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ բանավոր մասնագիտական զեկուցում ներկայացնել

ՈւՎ 4.5 Հաղորդել մաթեմատիկական լուծումներն արհեստավարժ մասնագետներին և ոչ մասնագետներին անգլերեն լեզվով

ՈւՎ 4.6 Իրական բիզնես ծրագրում կարևոր անձնական ներդրում ունենալ

**Ուսումնառության վերջնարդյունք 5՝ Ինքնուսուցման կարողություն**

ՈւՎ 5.1 Տվյալների հավաքագրման մեջ նոր զարգացումների հնարավորությունները տեսնելը

ՈւՎ 5.2 Որոշումների մոդելները սահմանափակումներին և բիզնես նպատակներին հարմարեցնելը

**ՕՐԻՆԱԿ IV – Բիզնեսի կառավարում–առաջին շրջանի կրթական աստիճանի ծրագրի նկարագիր**

**Ծրագրի անվանում՝**
Բիզնեսի կառավարում
**Ծրագրի մակարդակ՝**
Մասնագիտական բակալավրի կրթական աստիճան չորսամյա ծրագիր
**Շնորհվող որակավորում՝**
Ձեռնարկության և հիմնարկի մենեջեր

**Որակավորման մակարդակ**
Ծրագիրը հաջողությամբ ավարտելուն պես շրջանավարտը ստանում է մասնագիտական բակալավրի դիպլոմ և «Ձեռնարկության ու հիմնարկի մենեջերի» որակավորում, որը համապատասխանում է 5-րդ մասնագիտական մակարդակին և այն համապատասխանում է Լատվիայի որակավորումների շրջանակի (ԼՈՇ) 6-րդ մակարդակին և Եվրոպական որակավորումների շրջանակի 6-րդ մակարդակին։

**Ընդունելության հատուկ պահանջներ՝**
Դիմորդները, այսինքն՝ ուսանողական ծրագրում ընդգրկումը, կազմակերպված է համալսարանի ընդունման կանոնների համաձայն, որոնք հրապարակվում են սենատի կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա համար։

**Նախկին կրթության ճանաչման առկա հատուկ միջոցառումներ՝**
Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ճանաչման համար գոյություն ունի իրավական շրջանակ, որը կիրառվում է ցկյանս ուսումնառության խթանման և իրականացման համար։ 2012թ.-ի հունվարի 10-ին Նախարարների խորհուրդը թողարկեց «Նախկին կրթության կամ մասնագիտական փորձառության ուսումնառության վերջնարդյունքների ճանաչման ստացված ընթացակարգի կանոններ», թիվ 36։ Այս ընթացակարգային փաստաթղթերը զարգացվեցին համալսարանի կողմից և հաստատվեցին Սենատի կողմից։ Ցկյանս ուսումնառության գործունեություններ մշակվեցին՝ այն հեշտացնելու համար։ Ծրագրերը մշակվել են ուսումնառության վերջնարդյունքներով,

որոնք ապահովում են թափանցիկություն և համադրելիություն: ԿՓԿՀ-ն կիրառվում է ցկյանս ուսուցման համար: Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ճանաչման համար ընդհանուր միջոցառումները բացատրված են ոչ ֆորմալ կրթության կամ մասնագիտական փորձառության ուսումնառության վերջնարդյունքների ճանաչման ուղղված ընթացակարգի կանոններում, որոնք հաստատվել են Սենատի կողմից 2012 թվականին: Փաստաթուղթը բացատրում է գործընթացը, չափորոշիչները և ճանաչումը:

**Որակավորման պատասխանատու [illegible] պահանջներ՝**

Մասնագիտական բակալավրի կրթական աստիճան և որակավորում ստանալու համար՝ ուսանողը պետք է ավարտի ծրագրի հետևյալ պահանջները՝

- ձեռք բերել ընդհանուր և դասընթացին հատուկ ուսումնառության վերջնարդյունքներ.
- ձեռք բերել կամընտրական դասընթացի ուսումնառության վերջնարդյունքներ.
- անցնել պրակտիկա որևէ հիմնարկությունում
- պատրաստել ու պաշտպանել ավարտական աշխատանքը:

**Ծրագրի առանձնահատկություն՝**

Ծրագրի նպատակն է տրամադրել գիտելիք, հմտություններ և ունակություններ ձեռք բերելու հնարավորություն, այս ոլորտում իրազեկված մենեջերներ, որոնք սոցիալ-տնտեսական փոփոխվող պայմաններում ունակ են ազգային տնտեսության մեջ գործադրել իրենց գիտելիքը՝ կառավարելով գործընթացները և լուծելով խնդիրներ, ինչպես նաև որոշումներ կայացնել առնչվող ոլորտներում: Ընդունված որակավորումը հավաստում է, որ շրջանավարտները ձեռք են բերել ձեռնարկատիրական կառավարման հիմնական սկզբունքները սահմանելու և ձևակերպելու հմտություններ, աշխատանքը պլանավորելու և ղեկավարելու հմտություններ՝ համաձայն ձեռնարկության կողմից սահմանված նպատակների, ինչպես նաև աշխատել մարդկանց հետ ու պատրաստ լինել հարմարվել կառավարման ոլորտում ։ բազմազանորեն ընթացող միջավայրի տարբեր փոփոխություններին՝ համաձայն «ձեռնարկության ու հիմնարկի մենեջեր» մասնագիտության և մասնագիտական ստանդարտ թափ

5-րդ կարգի մասնագիտական որակավորման մակարդակի, որը համապատասխանում է Լատվիայի որակավորումների շրջանակի (ԼՈՇ) 6-րդ մակարդակին և եվրոպական որակավորումների շրջանակի 6-րդ մակարդակին: Ուսանողները սովորում են փոքրածավալ և արհեստավարժ ակադեմիական անձնակազմի ղեկավարման ներքո և ձեռք բերում 240 ԿՓԿՀ (160 լատվիական կրեդիտ): Ուսանողները սովորում են միջազգային ուսուցման միջավայրում: Ուսանողներն իրավասու են սովորելու «Էրազմուս+» ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում: Նրանք նույնպես իրավունք ունեն սովորելու գործընկեր համալսարանների միջազգային ակադեմիական անձնակազմի հետ: Պրակտիկա կազմակերպելն ու կառավարելը ծրագրի մասն է կազմում: Պրակտիկայի առաջադրանքները հստակ ձևակերպված են, ցուցումներն ու ուղենիշները հանրությանը հասանելի են առցանց:

**Ուսումնառության հիմնական վերջնարդյունքներ՝**

Ծրագրում սահմանված են ուսումնառության հետևյալ վերջնարդյունքները:

1. Տնտեսական զարգացման օրինաչափությունները, ազգային տնտեսության գործընթացներն ընկալելու ու դրանք բացատրելու ունակություն, մասնակցություն բովանդակային քննարկումներին ու, ըստ փոփոխվող հանգամանքների, որոշումներ կայացնելու ունակություն:
2. Ձեռներեցության կառավարման մեջ ձեռք բերված գիտելիքները, ըստ սահմանված օպերատիվ և ռազմավարական նպատակների կիրառելու ունակություն, իրականացման գործընթացին հետևելու, օպերատիվ և ռազմավարական գործունեության օպտիմալացման համար որոշումներ կայացնելու և ճշգրտումներ անելու ունակություն:
3. Մասնագիտական գործունեություն ծավալելու, տեղեկատվությունն ու խնդիրները ձևակերպելու և վերլուծելու, ինչպես նաև իրենց մասնագիտության մեջ գիտական մոտեցում օգտագործելով, լուծումներ գտնելու ունակություն:
4. Բարոյագիտորեն գործելու ունակություն և միջավայրի ու հասարակության վրա մասնագիտական ներգործման համար պատասխանատվության ըմբռնում:
5. Պատասխանատվություն ստանձնելու ունակություն, թիմում աշխատելու, պատվիրակելու և պարտականությունները համակարգելու ունակություն, պլանավորելու և իրենց աշխատանքն արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև կոնֆլիկտային իրավիճակները հարթելու ունակություն:

**Շրջանավարտների մասնագիտական ուղղվածությունները և ոլորտները՝**
Շրջանավարտներն աշխատում են հիմնարկներում կամ հաստատություններում թե՛ պետական, թե՛ մասնավոր, նրանք աշխատում են փոքր/միջին չափի հիմնարկներում որպես մենեջերներ/ կառավարման սեկտոր։

**Հետագա ուսման հնարավորությունը՝**
Մասնագիտական բակալավրի կրթական աստիճանի ծրագրի շրջանավարտները իրավասու են դիմել մագիստրոսի կրթական աստիճանի ծրագրերին՝ հետագա ուսուցման նպատակով:

**Առանձին դասընթացային միավոր՝ Համաշխարհային շուկաներում սպառողների վարքագիծ**

**Ուսումնառության վերջնարդյունքներ՝**

- ուսանողն ունակ է բացատրել ու կիրառել սպառողների վարքագծին վերաբերող հիմնական եզրույթները, սահմանումները և հասկացությունները.
- ուսանողը կարող է վերլուծել սպառողների վարքագծի միտումները և կիրառել դրանք սպառողների այս կամ այն շուկայում.
- ուսանողն ունակ է նկարագրել այն գործոնները, որոնք ազդում են որևէ ապրանքը գնելու՝ սպառողի կայացրած որոշման վրա.
- ուսանողն ունակ է գնահատել տարբեր գովազդային պաստառների և այլ գովազդային գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև դրանց ներգործությունը սպառողների վարքագծի վրա:



Գլուխ 5

**ՕՐԻՆԱԿ V – «Քիմիայում խորացված մագիստրատուրա» – Երկրորդ շրջափուլի կրթական աստիճանի ծրագրի նկարագիր և «Համալսարանային դասավանդություն» դասընթացային միավորի ուսումնառության վերջնարդյունքներ**

**Նկարագրություն**

Մագիստրոսի դասընթացը ուսանողներին պատրաստում է դառնալու արհեստավարժ մասնագետներ և զարգացնել նրանց միջազգային հմտությունները, որոնք պատրաստում են նրանց դոկտորանտուրա դիմելու համար և/կամ քիմիական հետազոտության և նյութերի կառուցվածքի բնութագրման մեջ մասնագիտական արդյունաբերական կարիերայի համար: Շարժունության սխեման երաշխավորում է, որ բարձր մասնագիտացումից և իրավիճակային տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունից զատ՝ ուսանողներին կառաջարկվի նաև եվրոպական տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցման հիմնական ուսումնական պլան:

Գնահատվող հմտություններ կամ ունակություններ՝

- Հիմնական հմտությունները հետևյալ ոլորտներում՝
- քիմիական վերլուծություն
- կառուցվածքային բնութագրում
- պատկերավորում և և մոլեկուլյար մոդելավորում
- արագ ռեակցիաների բնութագրում
- որակի վերահսկում
- նյութեր

Հարակից հմտություններ հետևյալ ոլորտներում՝

- հետազոտական ծրագրեր մեթոդաբանորեն իրականացնելու ունակություն
- գործընթացի կառավարման ոլորտում որոշումներ կայացնելու կարողություն
- լեզվական հմտություններ, գիտական ծրագիրն անգլերենով ներկայացնելու ունակություն՝ թե՛ բանավոր, թե՛ գրավոր
- իրականացնել միջազգային և բազմամշակութային համատեքստում ծրագրեր
- աշխարհագրական շարժունություն

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄՈԴՈՒԼԻ ՕՐԻՆԱԿ

**ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

| | |
|---|---|
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄ՝ | Զանգվածային սպեկտրոսկոպիա (Դասախոս՝ XY) |
| ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉ՝ | ASC- 01 - ՄԿ կիսամյակ I. |
| ԿՓՀ ԿՐԵԴԻՏՆԵՐ՝ | 5 կրեդիտ |
| ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ՝ | Բակալավրի աստիճան քիմիայում կամ դրան համարժեք աստիճան |

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐ**

Այս դասընթացն ընդգրկում է ժամանակակից զանգվածային սպեկտրոմետրիայի սկզբունքները՝ ներառյալ գործիքային դիզայնի, տեխնիկաների ներածության զարգացումները, և զանգվածային սպեկտրալ գործիքավորման հասկացությունները: Վերլուծական նմուշների ներմուծման համար հատուկի մեթոդները ներկայացված են և այդ մեթոդների առավելությունները ու թերությունները հաշվի են առնված: Զանգվածային վերլուծիչների տարբեր տեսակները, դրանց գործող սկզբունքները և ներկայացումները քննարկված են: Տվյալների վրա հիմնված վերլուծության համար կիրառվող ներկայիս ծրագրային գործիքները և դրանց տեխնիկաները նկարագրված են: Ներկայացված են քիմիայի տարբեր ոլորտներում զանգվածային սպեկտրոմետրիայի տեխնիկաների կիրառման օրինակները:

**ՆՊԱՏԱԿՆԵՐ**

Դասընթացի մոդուլի նպատակներն են՝

- հիմնվել ու ընդլայնել բակալավրի կրթական աստիճանի ծրագրի ընթացքում ներկայացված տեսական և գործնական հասկացությունները.
- զարգացնել ուսանողների կարողությունն ու վստահությունը զանգվածային սպեկտրոմետրիայում.
- ընդգծել գործիքավորման և տեխնիկաների առումով զանգվածային սպեկտրոմետրիայի ոլորտում ժամանակակից առաջընթացը.
- Որոշակի ծրագրերի համար ստեղծել համապատասխան գործիքակազմը:

**ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝**

Դասընթացի այս միավորին ավարտին ուսանողը պետք է կարողանա՝

- համակարգի ձևով ընտրել զանգվածային սպեկտրոմետրիկ նմուշներ ներմուծելու համար առկա մեթոդները,
- իոնացման համար սահմանել մեթոդներ և որոշել դրանց առավելությունները ու թերությունները,
- ընդհանրապես վերանայել զանգվածային վերլուծիչների առկա տիպերը,
- ընտրել ծրագրերի օպտիմալացումը զանգվածային սպեկտրալ տվյալների ստացման և վերլուծության համար,
- հատուկ կիրառությունների համար որոշել ամենահարմար գործիքավորումները և նկարագրել ստացված տվյալների չափն ու սահմանափակումները,
- մեկնաբանել զանգվածային սպեկտրալ տվյալներն ու եզրահանգումները ներկայացնել գրավոր ու բանավոր ձևով,
- ոչ մասնագետներին բացատրել, թե ինչպես կարող է զանգվածային սպեկտրոմետրիան տեղեկություն տրամադրել քիմիայի տարբեր բնագավառների և այլ հարակից դիսցիպլինների համար:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

դասախոսություններ և կոնֆերանսներ՝ 40 ժամ
ուսանողակենտրոն ուսուցում՝ 90 ժամ
ուսանողների ընդհանուր ջանքերը՝ 130 ժամ

**ԳՆԱՀԱՏՈՒՄ՝** ուսուցման ժամանակահատվածի ավարտին քննություն՝ գրավոր կամ բանավոր (կշիռը՝ 100%)

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Mass Spectrometry, Principles and Applications, E. de Hoffmann and V. Stroobant, Wiley, Chichester, 2001.

Erasmus+

ec.europa.eu/education/tools/ects_en.htm

Publications Office